

995

Lb. II  
999



1999.



173 Գրիգոր, 30,

Ա. Տ. Շ. Խ. Տ.

Վ

# ՔՐԴԵՐԸ

## ՏԱԿԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ազգագրական նիւթեք)

Համոր Ա.



Ա. - ՊԵՏԵՐԲՈՒՀՈՒ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

1905

Доз. Ценз. С. Петербургъ, 10 Января 1905 г.

4222-60

28. 2. 86

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ, 4.

Խորին լարգանոք կընւիրեմ

«Խոնխորի» և այլոց հեղինակ Մեծար-  
դոյ Կալոն

## ՅԱԿՈԲ ՂԱԶԱՐԵԱՆԻՆ

Ս. Շոտ

Նեղիամով գոմարայ շնորհ

պահման քառեր ըստ և օպակուու  
մասու լոր

ԺԿՄԾՊԾԱՐ ԲՈՅԹ

ԽՈՅ ՀԵ

Հ Հ Հ Հ Հ

# ՔՐԴԵՐԸ ՏԱԶԿԱՑ-ՀԱՅԱՍ- ՏԱՆՈՒՄ

(ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆԻԿԹԵՐ)

Հատոր Ա.

## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Տաճկական հայաստանի աշխարհագրական գիրքը և դպրաւոր հայրենակցութիւնը հայ և Քիւրդ (կորդ—kurd—kor-ord) տարրերի մէջ ստեղծել են յարաբերական ալնպիսի գծեր, որոնք ալդ երկու տարրերին շատ բանով դարձրել են համանման, միատիպ: Կենցաղավարական պայմանները, փոխադարձաբար, ալնպիսի աղ-

դեցութիւն են գործել յիշեալ ժողովուրդ-  
ների հոգուն ու մարմնին վրայ, որ այ-  
սօր Տաճկահայ աղբազրութեան մասին  
խօսելիս ես կրդժւարանամ նոյնիսկ հա-  
ւատալ, թէ այդ կարող է կատարեալ  
լինել առանց քրդական աղբազրութեան:

Հայ և Քիւրդ տարրերը գարերէ հետէ  
կապրին կողք կողքի՝ վարելով յաճախ  
միանման քաղաքական ու տնտեսական  
կեանք, իւրաքանչիւրի մայրէնի լեղւին  
հաւասար սովորելով ու գործածելով մի-  
մեանց բարբառը. իրաւաբանական սովո-  
րութիւններով նոյնպէս, համարեա, միա-  
տիպ: Նոյնիսկ ընտանեկան, խնամիական  
կապէր հաստատելով իրար մէջ. յիշատա-  
կութեան արժանի է և յաճախաղէպ՝  
նւիրական համարւող քիրվայութիւնը  
(կնքահայր, քաւոր), որ ենթականերին  
այնպէս կրծուեցնէ իրար: Հապա այն  
փոխաղարծ գիտակցութիւնը, թէ միւ-  
նոյն պապերէն սիրւած եղրայրներ են ի-  
րենք, ինչպէս նաև նոյն և նման սրբա-

զան աւանդութիւններով ու առասպելներով և հաւատալիքներով օժտւած ենթագրելով իրար: Ու այդ «միենոյն պապերի թոռներն ու ծոռները» քաղաքական ու անտեսական կեանքում, կարիքն ստիպած պահուն, ստէպ և վատահութեամբ միմեանց զրացիական օնադին դիմելով: Եւ այլն են:

Ահա թէ որպիսի հանգամանքներ համարձակութիւն տւին ինձ արտալայտելու վերոյգրեալ մտքերը:

Միւս կողմէն, ծնւած լինելով Տաճկական Հայաստանի քրդաշատ մի նահանդումը (Բալու-Տերսիմ) և 16 անմոռանալի՛, թանկագի՛ն տարիներ ապրա՞ն լինելով քրդերի մէջ—թէ՛ զիւղերում, թէ՛ Բալու քաղաքում, թէ ամարանոց-եալլաներում, թէ՛ սարերի վրայ, թէ՛ պատերազմական վայրերում . . . — անչնչելիօրէն մեխւած, դրօշմւած են լիշողութեանս մէջ իմ սիրելի հայրենակից քրդերի կեանքէն բաւական բաներ, որոնց զրի առնելս ու

առանձին գրքերով հրատարակելս ոչ մի-  
այն անօդուտ չեմ գտներ, այլ գեռ կը  
վստահանամ ասել, որ ներկայ և յետա-  
գայ աշխատութիւններս՝ իրենց վերին  
աստիճանի հաւատարմութեամբ ու ճրշ-  
դրաութեամբ ծառալելու են որպէս պատ-  
ւական ատաղծներ, քրդական կեանքը զի-  
տականօրէն ուսումնասիրողների համար:  
Ես կառաջնորդւեմ պրոֆէսօր Դրիգոր  
Խալաթեանցի կազմած «Հայ ազգագրու-  
թեան ծրագրով» որի մէջ թէե շատ հար-  
ցեր բոլորովին անպէտք են Քիւրդ ազ-  
գագրութեան համար, բայց յամենալն  
դէպս նա շատ կրդիւրացնէ բանասէրնեւ-  
րի գործը:

Ընթերցողներին զիւրութիւն տալու  
համար ես յարմար գտայ ամեն մի քըր-  
դերէն կամ տաճկերէն բառի մօտ, փա-  
կագծերի մէջ, դնել նոյն բառը Փրանսե-  
րէն երբեմն և ոռւսերէն տառերով ու  
հայերէն բացատրութիւնը. այլապէս պի-  
տի ստիպւէի դնել զըրի յետեր առանձին

բառարան, որ աւելի անյարմար կը լինէր: Ցաւ ի սիրտ պէտք է ասեմ, որ իննամեայ անմիջական բացակալութիւնս հալրենիքէս շատ առարկաների անուններ մռւացրել է ինձ և այդ պատճառով էլ ստիպւած եմ եղել քրդերէնի փոխարէն դնել տաճկերէն կամ ռուսերէն իհարկէ բացատրութեամբ:

Մի խօսքով ես աշխատել եմ, որ ներկայ ուսումնասիրութիւնս մատչելի լինի բոլոր ընթերցող հասարակութեան թէ լեզւի և թէ ոնի կողմէն:

Ափսոս որ հնարաւորութիւն չունեցալ պատկերապարդ հրատարակելու, որով ընթերցողը ի մօտոյ հնարաւորութիւն կ'ունենար ծանօթանալու այս կամ այն իրի ձեւին, կազմւածքին: Պիտի զանամ սակայն ամեն կերպ, որ յաջորդ հատորներում այդ պակասն էլ լրացւի: Ի վերջոյ աւելորդ չեմ համարիր յարել, որ ներկայ աշխատութիւնս, աննշան փոփոխութիւններով, այս տարի հրատարա-

կել է ռուսերէն լեզով «Խուսաց ԿԱՅ-  
ՍԵՐՈԿԱՆ Աշխարհագրական Ընկերու-  
թեան» կովկասեան Բաժանմունքը, ուր  
ներկայացրել է Պ. Համբարձում Առաքե-  
լեանը: Այդ գրքոյին, որ դրական փան-  
թումիմալի խաթեր համար կրկրէ «Կործ  
վե ուրեմն» վերնագիրը, ի մեծ զարմանս  
իմ, ստորագրել է Պ. Հ. Առաքելեանը...  
որպէս հեղինակ:

Պ. Առաքելեանը, 1902 թւի ամառ,  
Անապայում, ինձ լայտնեց, որ գնալու է  
Համբուրգում գումարուելիք Արևելագէտ-  
ների ժողովին և կրցանկայ ունենալ Քրր-  
դական ազգագրութիւնը ժողովում կար-  
դալու համար: Ես պատրաստականու-  
թիւն լայտնեցի՝ տալու մի համառօտ  
ուսումնասիրութիւն, ժողովում կարդա-  
լու և վերադարձնելու պայմանաւ: Պ. Ա-  
ռաքելեանը վեր առաւ այդ աշխատու-  
թիւնս և ասաց.— Արևելագէտների XII  
Միջազգային ժողովում կրկարդամ այդ  
որպէս Զեր աշխատութիւնը և այնու-

հետև էլ կըմիջնորդեմ ռուսաց. Կ. Աշխ.  
Ընկ. առաջ, որպէսզի նիւթականապէս  
հնարաւորութիւն տան Զեղ շարունա-  
կելու այդ աշխատութիւնը և կազմելու  
քրդական կատարեալ տղգագրութիւնը,  
ապա կըվերադարձնեմ Զեղ ձեր ձեռա-  
գիրը:

Այնուհետև անցան ամիսներ ու տարի-  
ներ և մենք մի քանի անգամներ հան-  
գիսկեցինք Պ. Առաքելեանին հետ «Մշակի»  
խմբագրատանը, Թիֆլիսում: Չնայած իմ  
մի քանի պահանջին՝ վերադարձնելու  
ինձ ձեռագիրս (որի սեագրութիւնը չու-  
նէի, որովհետև հապճեպով էի կազմել և  
ժամանակ չէի ունեցել արտադրելու) Պ.  
Առաքելեանը «այսօր·վաղը» ասելով կը  
ծգծեր: Այս տարի մի անգամ Էլ լայտ-  
նեց պարոնը, որ իմ աշխատութիւնս  
ներկայացրել է վերոյիշեալ Ընկ. Կովկ.  
բաժանմունքին հրատարակելու համար:  
Վերջերս կատանամ այդ գրքովկը և կը  
տեսնեմ, որ մեր կարճահասակ պարոնը

փառաւորապէս տիրացել է նրան և ստո-  
րագրել «Ա. Ա. Առաքելյան»...

Մի բան, որ մաղաչափ պատիւ բերել  
չէ կարող ինքն իրեն զրական գործչի  
տեղ դրած Պ. Առաքելեանին: Ես զիմեցի  
պարոնին առանձին նամակով և բացա-  
տրութիւն պահանջեցի նրա ալգափիսի վե-  
րաբերմունքի համար դէպի իմ սեպհա-  
կանութիւնը. պարոնը փոխանակ արդա-  
րութեամբ խոստովանելու իրա մեղքը՝  
տակաւին համարձակւել է, բոլորովին ան-  
տեղի և անիրաւացի, հայնովել մի յալտնի  
հասարակական գործիչ-փիլիսոփալի, որի  
առջև լեզու իսկ չէ կարող թրջել որևէ  
Առաքելեան: Մենք կըպահենք այդ 7  
երեսանոց նամակ-հայնոլաբանութիւնը,  
որ կըկրէ «28 սեպտ. 1904 թ. թւակա-  
նը և Հ. Առաքելեան» ստորագրութիւնը:

Մեղքի մէջ չիմնալու համար պէտք է  
յալտնեմ, որ Պ. Առաքելեանը «Կորդы въ  
поеин» զրքովկում ունի մի քանի տող  
ինքնուրովն զրւածք, ալսինքն ինծմէ տ-

ոածէն զուրս, որը սակալն երբէք իրաւունք չէր տար պարոնին հեղինակ կոչւելու։ Սակալն պարոնը այնքան էլ միամիտներէն կամ անհեռատեսներէն չէ. նա դիմել է մի քանի արդարացուցիչ(?) միջոցների։

Նախ՝ որովհետեւ Պ. Առաքելեանը, իրասածին նալելով, զիտէ Պարսկաստանը աշխարհագրականապէս, մասամբ և գուցէ ազգագրականապէս, հետեարար և պարսկասաննում գտնւող քրդերի մասին էլ թերեւո ունենալ մի փոքր ծանօթութիւններ, բառեր, բառեր և էլի բառեր... իրան հոչակել ուսումնասիրող քրդական կեանքի։ Պարոնն ասում է, որ ինձմէ այդ նիւթերն ստանալէ առաջ «նոյն թէֆէրատր (հիմա (Կորդы վե պերսի) կարդացի 1900 թւին Պարիզի կօնդրէսում, որ տպւած է... Նոյն թէֆէրատր տպւած է 1889 թւին «Ազգագրական հանդէսի մէջ...», մի բան որ սուտ է ոտով-դլիսով...»

Երկրորդ՝ պարոնը զետեղել է լիշեալ  
զրբոյկում հետևեալ առղերը.

„Затѣмъ, одинъ изъ моихъ знакомыхъ, посвятившій себя тоже специально изученію быта о жизни курдовъ въ Турецкой Армени, учитель Шводъ, доставилъ мнѣ въ прошломъ же году, послѣ конгресса Ориенталистовъ (գարձեալ սուս. վերև ես նկա-  
տեցի, որ իմ աշխատովթինս առաջ-  
պարոնը ուղղակի այդ կոնքրէսում կար-  
գալու նպատակալ) цѣнныій матеріаль, при сличеніи катораго съ собраннымъ мною матеріаломъ оказалось, что обычай, нравы, бытовыя черты какъ у турецкихъ, такъ и у персидскихъ курдовъ почти ничѣмъ не отличаются. Матеріалъ Швода далъ мнѣ возможность расширить программу моихъ изслѣдований и представить уже Кавказскому Отдѣлу Императорскаго Русскаго Географическаго Общества болѣе полный и подробный очеркъ курдовъ къ этнографическому отношенію.» Արքան շնորհակալ պիտի լի-

նէի, պարոն, եթէ նեղութիւն կրած չ'լի-  
նէիք ձեր հեղինակութեան մէջ (?) ալդ-  
քանն էլ լիշելու:

Երրորդ՝ բուն աղգաղրական մասում  
կրտեսնեմ, որ Պ. Առաքելեանը նոյնիսկ  
քրդերէն լեզւով զրածս դարձւածքները  
կը շահագործէ. մինչդեռ քրդական այն  
բարբառները, որ ես դործ եմ ածել ալդ  
աշխատութեան մէջ՝ սնժանօթ են պա-  
րոնին, եթէ նոյնիսկ ընդունենք, որ նա  
տեղեակ է պարսկաստանի քրդերի բար-  
բառին. «...я былъ знакомъ съ мѣстнымъ  
языкомъ и условіями» կասէ պարօնը պարս-  
կաստանի մտսին գրելիս \*): Իմ գործա-  
ծած դրմըլերէնը (demeli) և դրմաննե-  
րէնը (kermandji) բոլորովին տարբեր են  
քրդական այն բարբառներէն, որոնք գոր-  
ծածական են Պարսկաստանում, Ռուսաս-  
տանում և Վասպուրականում: Ալդ բանը  
կըխոստովանի և յայտնի քրդագէտ Պ.

\*.) Shu. „Курды въ персіи“ Երես 2.

Յակոր Պազարեանը։ Ասածներիս իրք  
սպացուց բերեմ „կурды въ персіи“ դրբէն  
իմ մի քանի խօսքերս։

ա. Венгъ даишъ=հրաւէր հարսանեաց։  
բ. Бениу, лія=բաւ է, տօ.  
գ. Թի, дости, կэйнэ этё броше мнѣ=

Ալ խնամիր, ծախիր ինձ աղջիկդ.

դ. Keinéé khale éme be rako ethia=  
Աներոշս աղջիկը! եկ ննջիր այստեղ.

Ե. Allah itchoun vannan, ki jené ema  
keüné bi=Յանուն Աստուծոյ կերպւեմ, որ  
իմ կինը կոյս էր.

գ. Keïne éteu halal nan vord ou\*)=  
աղջիկդ հալով հայ է կերել։ Բաւական  
են օրինակները։ Դրանք նախադասու-  
թիւններ են, որ Պ. Առաքելեանի պապն  
էլ լսած չէ թերեւու Բացի այդ՝ ես հա-  
ւատացած եմ, որ Պ. Առաքելեանը նոյն-  
իսկ զըրմաններէն քրդերէնը չ`դիտէ, ո-  
րովհետեւ այդ զքքուկում զքրմաննի խօս-  
քերն ալլասերւած են, ուղղագրութեան  
աններելի սխալներ արած..., մի բան, որ

կապացուցանէ պ. Առաքելեանի տգիտութիւնը զբրմաններէնում!

Առ այժմ ես կրթաւականանամ այս-  
քանով, վստահ որ սիրելի ընթերցողն ար-  
դէն կազմեց մի փոքր գաղափար պ. Ա-  
ռաքելեանի վերաբերմունքի մասին դէպի  
ուրիշի սեպհականութիւնը:

Մ. Տ. Շահում

1904 թ. Նոյեմբեր 13

Անափա

1194.



ՔՐԻԵՐԸ ՏԱԶԿԵՑ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Ա.

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՒ  
ՊԱՏՄԱԿԱՆ  
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Բնակութեան սահմանները և հայրենիքի դա-  
դափառը.

Տաճկա-Հայաստան ասելով ձենք կը-  
հասկանանք Վանի, Բաղէշի, Կարնոլ,  
Տիգրանակերտի, Խարբերդի և Սեբաստի-  
ալի նահանգները, ուր կրթնակին ըրդերը:  
Միջագետքում, Կիլիկիայում, Պարս-  
կաստանում և Կովկասում նոլնպէս կը-  
քնակին որոշ թւով քրդեր:

Չ'նայած որ մի քանի նորագոյն աշխարհացոյց տախտակներ փոքր Ասիայում ցոյց կուտան և՝ Քիւրդիստան (Kurdistan—Koordistan) անունով մի երկիր, բայց դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ Նոր-Հայաստանի մի հարազատ մասը. միայն անիժւած մետաղի և նոյնպէս անիժւած փոլիթիքայի շնորհիւ է տեղի ունեցել այդ բառախաղութիւնը... Այնպէս որ, խօսքս այսօրւայ մասին լինելով, «ստան» վերջաւորութեամբ բնորոշւող Քիւրդիստանը գոյութիւն չունի և չի էլ կարող ունենալ, որովհետեւ այսօր քրդեր ասելով մենք կրհասկանանք՝ բազմազան ցեղերի բաժանւած և բազմապիսի հանգամանքներով իրարմէ խորթացած (եթէ ընդունենք, որ նրանք բոլորը մի ժամանակ մի ամբողջութիւն, միաձոյլ մի ազգութիւն կրկաղմէին), օտարացած և ընդհանուր ոչ մի ուշագրաւ ներքին կապ չունեցող, ուրոյնուրոյն ցեղեր, և ոչ թէ մի անբաժան ազգ, որ այսպէս թէ այնպէս իրաւատէր

լինել կարողանաք այս կամ այն երկիրը  
իր հայրենիք անւանելու կամ դարձնելու:

Այդ կէտի մասին խօսելիս հետաքրր-  
քրական կրթինի, իհարկէ, քրդու իրա կար-  
ծիքը քրդական հայրենիքի մասին:

Ինչպէս պէտք էր սպասել՝ մեր հաս-  
կացած եղանակով հայրենիքի մասին  
քիւրդը ոչ մի հասկացողութիւն չունի:  
Սեպհական հայրենիքի գաղափարը ան-  
մատչելի է քրդերին:

Իրաւ է, որ քրդական բարբառներն ու-  
նին իսկապէս հայրենիք նշանակող օտա-  
րահնչիւն վաթան կամ վէլթան (veitanc—  
վեյտան) բառը. սակայն պէտք է ասել,  
որ քիւրդն այդ բառով կրհասկանայ ուղ-  
ղակի իրա ծննդավայրը: Այնպէս որ՝  
մինչդեռ Սլոի համար Շատախն է վա-  
թան, Սլոի վաթանը Շատախն է կամ  
Ուրֆան և կամ Կեղին:

Դուք խօսեցէք շատ թէ քիչ հասկա-  
ցող և մինչև անգամ 1—2 արարական  
տառերին ծանօթ քրդուն հետ և կրտես-

ներ, որ ֆրանկստան ասելով նա Գաղ-  
ղիա չի հասկանար, այլ մի երկիր, կամ  
դուցէ մի դաշտ, մի հովիտ, մի լեռնա-  
շղթալ...., ուր ֆրանկներ կը բնակին: Այդ-  
պէս և Արմնիստան կանւտնէ քիւրզը,  
օրինակ, Նոր-Նախիջևնը ոչ թէ նրա  
համար, որ այդ քաղաքը աշխարհա-  
պրական հայուստանումն է, այլ որովհետեւ  
այդ քաղաքում Արմնիներ, Ֆրլլահներ  
կը բնակին: Եթէ շատ թէ քիչ դարձա-  
ցած քիւրզն է այդ հասկացողութեան  
տէր, ինչ կը լինին միւսները:

Ուրիշ խօսքով կարելի է ասել, որ քը ը-  
դու հայեացքով հայրենիքը գոյութիւն  
ունի լոկ աղքագրականապէս, իսկ աշ-  
խարհագրականապէս—ոչ:

Թուրքերէն է փոխանցեալ սիլա-  
ւուա (sila-  
voo) բառը, որ քրդերը կը դորժածէն և  
որը նոյնպէս հայրենիք կը նշանակէ, քը ը-  
դական բարբառներու մայդ բառն էլ կը  
դորժածի իրը պանդխտութենէ վերա-

դառնալու վայր—ծննդավայր, ուր կը-  
մնան զարիպի բնտանիքն ու սիրելիները:

Քրդերի բերանում իսկապէս ծննդա-  
վայր-հայրենիք կրնշանակեն հետեւեալ  
բառերը՝ մեր լեռները, մեր բանակա-  
տեղը, մեր արօտամարգերը ևն, որոն-  
ցով կը լիշեցնեն ծեզ այն տեղերը, որոնք  
այսպէս թէ այնպէս կապւած են քրդա-  
կան կեանքէն որևէ պատմական անցքի  
կամ առանին անցուդարձի ծօտակալ և  
կամ հեռաւոր անցեալի հետ:

Դաւառացի տաճկահայերը քրդաբնակ  
վայրերը կրկոչեն քըրդանոց կամ քիւր-  
դանոց, ինչպէս և տաճկաբնակները՝  
թուրքանոց կամ տաճկընոց:

Այսօրւայ բազմաթիւ քրդական ցեղե-  
րէն Տերսիմցիք (Dersimtsik) մասամբ և  
վերջնիս սահմանակից խլուանցիք կարող  
են որոշ չափով պարձենալ իրենց փառա-  
ւոր հայրենիք-սարերով, որոնց ամուր  
կառչած են գարերէ հետէ և յաճախ ար-  
ժանաւոր կերպով հրապարակ են եկել

Օսմանցւի դէմ, սրի ծայրով պաշտպանելու իրենց հայրենեաց սրբազն աղառութիւնը ընդդէմ արտաքին ոտնձգութիւնների։ Սակայն այնուամենայնիւ բացառիկ այդ ցեղը էլի մեր բմբանած եղանակով հայրենասիրական որևէ զգացում չէ կրեր իւր ներսի դին։

Քրդերն առհասարակ չեն տածեր դէպի իրենց ծննդավայրը վառ սէր, և այդ ես մասամբ կը բացատրեմ նրանով, որ յաճախ աեղափոխութեան դատապարտւած են նրանք։

Այստեղ կարժէ առաջ բերել և՛ մի քանի քրդական առածներ, որոնք այսպէս թէ այնպէս կը շոշափեն քննելի հարցը։ Ահա.

1. Որտեղ երեկոյ—այնտեղ առաւօտութեանի մասին պարագաները կամ այն պարագաները, որոնք առաջանաւ են այն պարագաների մասին պարագաները։
2. Որտեղ փորդ կշտացաւ՝ այնտեղէն լաւ տեղ չունիս։
3. Այն առուն, ուրկէ երկար ժամանակ չուր կրվազէ՝ կը հոտի։

4. Այն գաշտը, ուր երկար կրբնաւ-կւիս՝ համն ու լիութիւնը կերթալ:
5. Մուկին վաթանը պատին ճեղքն է:
6. Խլուրդն օրական 100 վաթան կը մոխէ՝ մէկը միւսէն լաւ:
7. Պարկս կընետեմ, ուր ինկաւ՝ այն-տեղ է վաթանաւ Եւ այն են:

Անցեալ տարիներ մի յայտնի քիւրդ պէկզատէ (իշխանազն) Եղիպառսում ըս-կսեց հրատարակել մի յեղափոխական օր-դան «Քիւրդիստան» վերնագրով։ Այդ ողորմելի օրդանը, որ նոր-Քիւրդելի կամ Երիտասարդ Քիւրդիստանի (?) բերանն էր լինելու՝ դեռ մի առանձին նո-րութիւն չ'ներկայացրած՝ անհետայւ Եղիպառսի եթերէն, իրա հետ անհետաց-նելով և՛ նոր և՛ հին աղատ-քրդութեան դաղափարը։ Հայերիս մէջ գտնւեցին տա-կաւին նոյնպիսի ողորմելի տաք զլուխ պատանիներ, որոնք սկսեցին վառարա-նական բացականչութիւններով «մերձե-ցում» երազել յիշեալ... Քիւրդիստանին

հետ! Արդեօք համոզւեցան այժմ այդ  
պարոնները, որ քրդու հայրենիքը եղել  
է, և կըլինի կուլտուրական կեանքի  
երես շտեսած վայրերը... Թղթեղէն  
«Քիւրդիստանի» ստկաւակեացութիւնը  
մի հսկայ գրաւական է՝ քրդու մէջ հայ-  
րենասիրական զգացմունքների կատարեալ  
բացակայութեան:

Իննանական թւականներին՝ փառահեղ  
կոչնակի ձայնէն զարթնած ասճկահաչ  
ժողովուրդը սանձարձակ աղատութիւն  
էր աւել իրա հայրենասիրական ու ազա-  
տասիրական զգացմունքներին, այդ մի-  
ջոցներին քրդերը փառաւորապէս կըհեղ-  
նէին ու կըծաղրէին հայերին: Հետեւեալ  
պաղլաման (bagħlama—քրդական լօ-լօ—  
երդ) կարող է դաղափար տալ ընթերցո-  
ղին ասածներիս վերաբերմամբ.

Դրսմաննիք. «Այ, լօ-լօ-լօ-լօ, լօ-լօ-լօ.  
Խօտէ խօտէ, էմ նրդանըմ,  
Ախըլ ֆըլլան չի՞ պունէ.—

Կըշտ թօփի պուլրն նաւ քի-  
լիսան  
Տուփէ տըբըն այ խօտէ,  
խօտէ...  
Լօ-լօ, ֆախիրօ խրամալօ  
էրմէնիստան!

Զաղաներ. «Այ, լօ-լօ-լօ-լօ, լօ-լօ-լօ.  
Եկնան վաննու քի Սուլթան  
Խապուլ քէրտա մաղմանդան,  
Կաթ ու, լօլօ, հարէլ շէսթ  
խռալան,—  
«Պէկլիլիլ վէրդիմ Արմէնիան».  
Լօլօ, ֆախիրօ խրամալօ Ար-  
մրնիստան.

Գ. «Այ, լօ-լօ-լօ-լօ, լօ-լօ-լօ.  
Լօ-լօ ֆըլլահ, կուտարի պ'քը,  
Սուլթան զանը չի չէ տըբը,  
Սուպէ թէլէ խրաֆըլք քը-  
շանտ,—  
Տիսանշուխուլէ խօարքը Փէնտ.  
Լօ լօ, ֆախիրօ խրամալօ էր-  
մէնիստան.

- Զ. «Ալ, լօ-լօ-լօ-լօ, լօ-լօ-լօ.  
Փանճես սեռ ու ըննու խառ-  
խըռան  
թէփէր արտու փափազ եկ-  
նան (?)�.  
Եի-կիէյրա միեան կավուռան  
Ու խալէխօ եօվքէրը փէ ին-  
կիլզան.  
Լօլօ, ֆախիրօ խրամալօ Ար-  
մբնիստան!
- Գ. «Ալ, լօ լօ լօ լօ, լօ-լօ-լօ.  
Էմ իրօ հրգան սար ժէ տրըրմ,  
Հուն ժէ հէորն՝ կըլլի պըրըն,  
Մէրօֆ էվան քի՞չ-քի՞չ մէ-  
զէրըմ,—  
էզ ինկլի՞զ քի թէփմիշ տրքըն.  
Լօլօ, ֆախիրօ խրամալօ էր-  
մէնիստան!

Ահա և ազատ թարդմանութիւնը.—  
Կ'զարմանանը, Տէր Աստուած, Հայերի  
անխելքութեան վրայ, որ եկեղեցիներում  
հաւաքւած ազօթելիս կըհաւատան այն

առասպելին, որ իրը թէ Սուլթանը (Համիտ II) վեց մեծ պետութեանց ասած լինի, թէ իշխանութիւն տւի հային... Սակայն թող դիտենան հայերը, որ զրուանք խաղեր են (ֆանդ) Սուլթանի կողմէն և վերջնի մի հեռազիրը (ում?) կարող է ամեն ինչ չեղաշրջել... Դրանց (հայերի) սեազլուխը 15 տարի է, ահա, որ անհաւատների մէջ շրջագայելով՝ երկիր կ'երազէ, Անդլիոյ (?) աջակցութեամբ... Այսօր մենք ձեզ (հայերին) կըշորթենք, որպէսզի ձեր խելքի չափն իմանանք և ձեր բարեկամն ով է—ճանչնանք. ևն ևն...»։ Կասեն, իրը թէ այդ պազաման շարադրել է Բալուի տաճկաց միւֆտի Սայիտ Էֆէնդին —մի ականատոր հայեկեր։

Շարունակութեան մէջ քրդերը «Թուքի և մուրի փայ շինելով» հայերի հայրենասիրական զգացմունքը՝ մատնացոյց կըլինին իրենց վրայ, որ այդպիսի «արեի երես չ'տեսած խելառութեան» չըհե-

տամտելուն համար երջանիկ են և աղասի  
Սալիս էֆէնտին է, իրօք, զբա հեղինա-  
կը, թէ մի ուրիշը, թուրք թէ քիւրդ,  
խնդիրը դրանումը չէ, այլ նրանում, որ  
քրգերը իւրացըել էին, կը սիրեին ու  
կերգէին:

Գալով Պատմական-աշխարհագրական  
Քիւրդիստանին, որի մի մասը մեր մա-  
տենագիրներէն կոչւած է Կորդէք (gor-  
tek—Гортекъ), ըստ Kiepert-ի կիւնայ՝ հիւ-  
սիսէն կապուտան ու բղնունեաց ծովերի  
միջև, Արևելեան սահմանն էր այսօրւայ  
Պարսկաստանը, Արևմտեանը՝ Տիգրիս գե-  
տը կամ Պօթան սու:

## 2. ՔՐԴԵՐԻ ԹԻՒԲ.

Քրդական բաղմաղան ցեղերի ընդհա-  
նուր թիւն էլ մինչեւ այսօր առեղծւած է.  
եղած տեղեկութիւններն էլ խիստ հակա-  
սական ու վալրիվերով: Ալսպէս, օրինակ.

մինչդեռ Ելիզէ Ռէկլիւ<sup>\*)</sup> քրդերի ընդհանուր թիւր կրզնէ 1,818,000, անգին ըստ Կինէ՛ի և Ռուլինաօնի՛ պէտք է հաշւել շուրջ 3 միլիոն. իսկ արտասահմանեան մի քաղաքական օրգան բովանդակ քրդերի թիւր կրհամարէ 2, 250,000:

Այդպիսի հակասական երեսով թիւր չփղարժացնէ ընթերցողին, որովհետեւ քաղաքական ու կուլտուրական, համեմատաբար, աւելի բարձր աստիճանի վրայ կանգնած տաճկահայերը—ունենալովիրենց կրկին պատրիարքութիւնները, կաթուղիկոսութիւնը, առաջնորդարանները, մամուլը, դպրոցները ևն—մինչև այսօր չունին դեռ մի պաշտօնական, վստահելի վի-

<sup>\*)</sup> Միանդամ ընդ միշտ պիտի յայտնեմ այստեղ, որ ներկայ աշխատութիւնը կազմելիս սեղանիս վրայ ունիմ. ա. Ելիզէ Ռէկլիւի «Լազիստան, Հայաստան և Քիւրդիստան» գիրը, թարգմ. Միաբանի. բ. Պօղ. վ. Նաթանեանի «Արտօսր Հայաստանին» և Անդրանիկի «Տերպիմը»:

ճակագրութիւն հայ ազգաբնակութեան։  
Հասկա ի՞նչ սպասենք քրդերէն։ Ինչեւ։

Տաճկաց-Հայաստանում գտնւող բոլոր  
քրդերի թիւը կարելի է հաշւել, մօտա-  
ռորապէս, 800,000 հոգի։

### Յ. ՔՐԴԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ.

Դեռ Քրիստոսէն առաջ ձենք կը հան-  
դիպենք քրդերին՝ մեծ թէ փոքր չափով  
պատմական տեղերում, սակայն նրանց  
ժագումը թաղւած է խորին մթութեան  
մէջ։

Մի կողմ թողած բանասէրների են-  
թաղրութիւնները՝ նոյնիսկ քրդերն իրենք  
չեն կարող բաւարար լազուրդ տալ մեր  
հետաքրքրութեանը։

Այսպէս, օրինակ քրդերի մի մասը  
իրեն սերած կ'համարի Պարսիկներէն.  
երկրորդը՝ Օսմանցուներէն. երրորդը՝  
Արաբներէն. չորրորդը՝ Հազրէթի Իպ-  
րահիմի—Հայը Արքահամի—թոռներէն

(Երբայեցիներէն). Հինդերորդ և բաւական ուշազրտւ մտսր համոզւած է, որ «իրենց ու հայերի պապերը միևնուն մարդիկն են» (Bay évan ou bay éman hévra iéc é—Бавъ эванъ у бавъ эманъ гевра екъ э և կամ hare Armenian ou man ieuv merdoum biyou—Гаре Армніанъ у манъ ёвъ мердумъ бію). կան զեռ և այնպիսիներ, որոնք հայերի հետ խօսելիս կրգործածեն հետեւեալ գարծւածքը. «Հայերի և Քրդերի մէջ խորի մի մազ կայ. կտրւեց այդ մաղը—կրվերանալ երկու ժողովրդի մէջէն ամեն մի օտարութիւն». սկսոք է ասել, սակայն, որ լաճախ այդ Փրաղը կրգործածեն քրդերը որպէս հաճոյացուցիչ միջոց՝ խօսակից հայի աչքը մտնելու համար:

Կան, վերջապէս, քրդեր էլ, որոնք իրենց և եղիսների մէջ կընկատեն մի այդպիսի բարակ մազ:

Հայ բանասէրներէն մի քանիսը,—Գաբեդին սրբաղան Սրւանծառեանց, Պօղ. վրդ.

Նաթանեան, Զ. Պոլանեան և ալլք,—լոկ  
աղքասիրական զգացմունքներէ թելա-  
դրւած, քրդերին առհասարակ կամ մե-  
ծաւ մասամբ կրհայացնեն. իբր թէ կեան-  
քի և իրաւանց անապահովութիւնը մղած  
լինի նրանց նախ դէպի կրօնափոխու-  
թիւն — հայադրաւանութենէ մահմէդա-  
կանութիւն — և ապա հեռացրած աղ-  
քայնութենէն էլ:

Ինալ ալզպիսի աղքասիրական են-  
թազրութեան մէջ՝ ես չեմ կարող, որով-  
հետեւ կրմտածեմ, որ զուցէ քրդերը նոյն-  
քան հին ժողովուրդ են, որքան և մենք  
չայկեաններս, և բայի ալդ՝ բարեխիղն  
բանասէրէն կրպահանջւի քննելի առար-  
կան ներկայացնել ոչ այնպէս, ինչպէս  
հանելի է բանասէրին, ալլ ինչպէս որ  
կայ առարկան: Այդ նախազգուշացմամբ  
էլ ես պիտի առեմ հետեւալը. քրդերի  
ծագումը եղել է, և և կըմնայ անյայտ  
մարդկութեան, քանի դեռ դիտական լուրջ

ուսումնասիրութեան ևնթարկւած չէ այդ  
ժողովրդի կեանքը:

4. ՔՐԴԵՐԻ ԴՐԱՑԻՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՓՈ-  
ԽԱԴԱՐՁ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ.

Միակ ժողովուրդը, որին կարելի է  
հանդիպել բոլոր այն տեղերում, ուր քըր-  
դեր կըրնակին, գա Հայն է: Հայոցմէն  
յետոյ կուգան Օսմանցուները, Պարսիկ-  
ները, Արաբները, Յոյները, Ասորիք ևն:  
թէև ոռւսական Հայաստանումը՝ ըստ  
պաշտօնական վիճակագրութեան կըրնա-  
կին 140,000 քրդեր, բայց դրանք յարա-  
բերական որևէ գիծ ստեղծած չեն իրենց  
ու ոռւսների մէջ:

Դրանցմէ առաջնի—Հայ ժողովրդի հետ  
գարերէ հետէ կըպահպանեն քրդերը ա-  
մենասերտ փոխադարձ յարաբերութիւն-  
ներ, որոնց մասին մենք լիշտակեցինք  
և էլի առիթ կունենանք մանրամասնու-  
թեանց մէջ մտնելու:

Տաճիկների կամ Օսմանցուների հետ  
թէեւ քրդերն ունեցել են և ունին մօտիկ  
յարաբերութիւն, բայց վերջինս իր վրայ  
կըկըէ բացասական հետաքրքրիր դրօշմ:  
Պարզենք մի քանի կէտեր մի գաղափար  
տալու համար:

Չնայած տանիկների ու քրդերի մե-  
ծամասնութեան դաւանակցութեան՝ նրանց  
առանին կեանքը, նիստ ու կացը, աւան-  
դական սովորութիւնները բոլորովին տար-  
բեր են ու յանախ այդ իսկ զանազա-  
նութիւնները տեղի կուտան երկսի մէջ  
սուր, արիւնահեղ ընդհարումների:

Քրդուն անհասկանալի մի առեղծւած  
կայ, որ շարունակ կըմեծացնէ երկու տար-  
բերի միջի անշրպետը: Օսմանցւի կառա-  
վարութենէն ուղղակի և անուղղակի կեր-  
պով շորթւելը, կողոպտելը, նրա ձեռ-  
քին կոյր գործիք գառնալով՝ իրա քրիս-  
տոնեալ զրացիների աչքէն իյնալու ու-  
շագրաւ պարագան և նման քաղաքական  
հանգամանքներն են, որ օրբստօրէ կրիս-

տացնեն սառնութիւնը թուրքի և բրր-  
դերի մէջ:

Ոմանց կարծիքով՝ հայերին կողոպտելու  
և կոտորելու սուլթանական տմարդի հրա-  
հանողը քրդերի սիրտը շահած և նրանց կա-  
տարեալ բարեկամութիւնը վաստակած կը-  
լինի դէպի տաճիկը: Դա միանգամայն սխալ  
ենթազրութիւն է, որովհետեւ դարեր շա-  
րունակ քրդուն կերակրող հայը՝ աշխար-  
հասան դէպքերէն յետոյ, 90-ական գրողի  
փայ սև թւականներէն վերջը մանաւանդ,  
դադարեց այլևս՝ մէկ կողմէն իրա վաղե-  
մի ծրիակերներին կերակրելէ և միւս  
կողմէն թրքաց գանձարտնը լեցնելէ: Դա  
մի այնպիսի լուրջ հանգամանք է, որ,  
ընդհակառակը, փառաւորապէս բացեց  
քրդու աչքը և ալդպիսով զցեց կարմիր  
փաղիշահի և դրա հետ էլ տաճիկ սպզի  
վարկը քրդուն մօտ: Հրապարակում շատ  
փաստեր կան այդպէս ասող:

Նոյն իսկ հռչակաւոր «կողոպուաի» ժա-  
մանակ 1895—96 թ., շատ բան չի

շահեց խեղճ քիւրզը, որովհետև Տաճիկ  
կառավարութեան անկշառում պաշտօնեա-  
ները օրցորեկով, շնորհիւ վեհափառ սուլ-  
թանի, սկսեցին՝ կողոպտածներին վե-  
րադարձնելու (sic!) պատրւակով կողոպ-  
տել կողոպտողներին... Ալդայիսով, ահա,  
հարամ արին քրզու զլխին իրա խլածը-  
գեռ զիքթաթէօնի պատասխանատւուու-  
թենէն խուսափեց պատմական չարու-  
թեան հեղինակը՝ վերազրելով ամեն մի  
եղեռն «քրդերի անզսպելիութեանը»,  
թէե նա զրանով առիթ տւեց քրդերին  
սնուցանելու իրենց կրծքերին ներքե մի  
տեսակ էլ առելութիւն, որը—ով զիտէ—  
զուցէ մի օր խտանայ և ստանայ ծանր  
սպառնալիքի բնաւորութիւն...

Ալո, շատ չ'անցած, կողոպտողները էլի  
դարձան տանելի դրացիներ քրդու հա-  
մար, մինչդեռ ճիւաղ թելազրողը չարի-  
քի զիմակազուրկ մնաց հրապարակի վրայ՝  
ատւած ու զգելի...

Տաճիկի ու քրդու մէջ բարի յարաբե-

բութիւն չ'պահպանելու գլխաւոր պատճառներէն մէկն էլ այն է, իմ կարծիքով, որ այդ երկու տարրերն էլ որոշ չափով ուրիշի հաշւով ապրող, անիրաւաբար այլոց իրաւունքին աչք տնկող և հետեւաբար մի տեսակ էլ մրցակիցներ են, որ չեն կարող հաշտ նայել իրար:

Ես երբէք չեմ կարող մոռանալ այն սարսափելի պատերազմները, որոնք մեր երեխայութեան ժամանակ տեղի կունենացին և որոնք յաճախ կրվերջանալին երկուստեք մի քանիների արնաթաթախ գետին տապալւելով: Խօսքս կրվերաբերի մանկական պատերազմներին, որոնց մէջ չայ ու Քիւրդ երեխաները կրկազմէին առանձին՝ միացեալ բանակ ընդդէմ տաճիկների: Մեր մեծերը ոչ մի նկատողութիւն չէին աներ մեզ. դա, կարծես, ամենքին հասկանալի ու շատ էլ բնական մի երեոյթ կրհամարւէր: Այդպէս է և այժմ: Աւելի հետաքրքրականը ո՞րն է. չայ և Քիւրդ երեխաները իրար հետ կըռ-

ւելիս, միմեանց թակելիս՝ անմիջապէս  
համբուրւել են, մոռացել մի րոպէ առաջ-  
ւան թշնամութիւնը և միացած՝ յար-  
ձակւել տաճիկ երեխաներին վրայ, հէնց  
որ սրանք կրյայտնւէին կուի վայրը  
«խնդալու համար բարեկամ համշիրակ-  
ների ծեծկւուքին վրայ»։ Մանկական թէ  
խաղերի և թէ կրոիւների ժոմանակ չայ-  
ու Քիւրդ երեխաները կրնալին միմեանց  
որպէս բազեկամների, իսկ դէպի տանի-  
կը՝ որպէս անհաշտ թշնամիի, որի և ի-  
րանց մէջ երբեւէ չէ կարող բարի արե-  
ծագել։ Այնպիսի դէպը երում, երբ խաղի  
այս կամ այն պարագան կ'ստիպէ մի քա-  
նի չայ կամ Քիւրդ երեխաների ընկե-  
րակցելու աանիկներին, խաղն էլ իսկոյն  
կրկորցնէ իր հմալը և խաղացողները  
չեն կարող պահպանել սովորական աշխոյժ  
տրամադրութիւնը։ Եւ յանախ կրլսէիք  
գուք հետեւեալ խօսքերը։

— Ե՞հ, ալգապէս խաղը համ չունի, ա-  
խար ի՞նչողէս կարելի է յարձակւել Պէ-

քոյի կամ Արմենակի վրայ, չէ՞ որ զը-  
րանք մերոնցմէ են...

Թէ ինչու մահմէդական քրդու լամուք-  
ները կրծիանալին տնհաւատ հայերիս  
հետ և ոչ տաճկին — դա մի հանելուկ էր,  
որ շատ էլ չէինք աշխատեր լուծելու!  
Այսքանք գիտէինք մենք, որ մեր հայրերն  
էլ իրենց երեխայութեան ժամանակ այդ-  
պէս են վարւել, թէե մեծանալէ յետոյ  
գերերը կրցեղաշրջւին...

Տանկի գաւանակցութեան մասին խօ-  
սելիս քիւրդը կրգործածէ հետեւեալ ա-  
ռածը. «Ի՞նչ անեմ ամենապատական պա-  
նիրը, երբ դա շան հոտած տիկին մէջ է»:

Եթէ քաղաքական հողի վրայ բարեա-  
ցակամութեան նշաններ կրտեսնէք տան-  
կի և քրդու մէջ, դիտցէք, որ դա ար-  
դիւնք է ուղղակի քիւրդ ժողովրդի քա-  
ղաքական անհասկացողութեան: Քիւրդը  
մի կոյր գործիք է Սսմանցւի ձեռքին  
ընդգէմ քրիստոնեաների և ուրիշ — ոչինչ:  
Հայէն ոչ-պակաս կրհարստահարւին քըր-

դերը, մանաւանդ հողադործ մասը. այդ  
կէտը շատ գեղեցիկ, համոզիչ տօնով կը-  
բացաբարէր պ. Մինաս Զերազը՝ 1898 թ.,  
Մանչեսթրում, մի բազմամարդ միթին-  
կում, որտեղ ներկայ էր և տողերս զրոյր:  
Հայերը հարստահարւելիս, կողոպտւե-  
լիս՝ ունին իրենց պատրիարքը, Եւրոպա-  
կան Դեսպանները և Հիւպատոսները Կ.  
Պոլսում, «պաշտպան պետութիւններ»  
Եւրոպայում ու Ամերիկայում և վերջա-  
պէս ունին որոշ չափով էլ քաղաքակրթ-  
թութիւն, անուն, որոնց շնորհիւ նրանք  
(հայերը) կարող են, վաղ թէ ուշ, այս-  
պէս թէ այնպէս, լսեցնել իրենց հեկե-  
կանքը, տրտունչները, պահանջների դէմ  
բաւարարութիւն ստանալ կամ գէթ  
«խնզիր» շինել հրապարակի վրայ, մա-  
նաւանդ որ հայ մարդը որքան էլ զոհեր  
բերէ, զիտէ որ իրեն կ'սպասէ մի գերեր-  
ջանիկ արշալոյս...

Ի՞նչ անէ հասկա քիւրզը, ո՞ւժ տպա-  
ւինի, ո՞ւժ զիմէ, որի՞ն իր ցաւը — դա-

բաւոր ցաւը պատմէ և զեղ խնդրէ...

Քիւրդին կրմնայ՝ կամ իրա կրծքով  
պաշտպանութիւն գտնել և կամ, եթէ  
անհնար է այդ, համակերպիլ ճակատա-  
գրոի հետ, մինչև որ ժամանակը մի յե-  
ղաշրջում առաջ բերէ:

Թիւրք կառավարութենէն «օդառողնե-  
րը» եղել են և կրլինին միայն քիւրդ ցե-  
ղապեսները, որոնց հալատակները ստիպ-  
ւած են կերակրելու և թիւրք պաշտօ-  
նեաներին և ցեղապեաներին:

Օսմաննցուն դարերէ հետէ ձգտել է  
մահացնել քրդերի մէջ ցեղային նա-  
խանձախնղրութեան հոգին և նրանց  
դարձնել լոկ մահմէզական համայնք-  
ներ՝ համախոհ և միատիպ Մարզարէի  
Խալիֆի ցեղին հետ։ Որոշ չափով յա-  
ջողել է նրան այդ բանը. նա կրօնի նըշտ-  
նակութիւնը քանի անդամ աւելի բարձ-  
րացրել է ցեղականէն. այնպէս որ յա-  
նախ մահմէզական քիւրդը կ'անդիտանայ

իրացեղային պարտականութիւններ՝ յօգուտ մահմէդականութեան:

Մեր ասածներէն բացառութիւն կը կազմեն «Հասնանցի» կոչւող քրդերը, որոնցմէ կտղմակերպւած է «Համիսիլէ» հեծելագունդը և որոնք մի փոքր «կրիւղուեն» իրենց ցեղակիցների բերանը, թէե շատ թանկ—իրանց կեանքի գնովք:

Պ. Համբ. Առաքելեանը „Курды въ персії“ գրքուկում դրել է իմիջի ալլոց և հետևեալ ինքնուրոյն տողերը.—Вообще, курды не имъютъ идеи національности, національной солидарности и единства... Всѣ усилия турецкаго правительства основать общую курдскую лигу, объединить курдскія племена въ панкурдскій союзъ \*) Не превели ни къ чему до сихъ поръ, именно потому, что и т. д.»: Բայց ես չեմ կարող հասկանալ, թէ ինչ դահրումար դաշնակցութիւն է, որ տաճիկ կառավարու-

\*) Ենդծումներն իմա են:

թիւնը կարող էր ցանկալ ստեղծելու համայնքը երի մէջ, արդեօք հակա-օսմանեան դաշնակցութիւն, ապագայում օսմանցւի թողն ու տումանը երկի՞նք հանելու համար... Տէ՛ր Աստուած, քիչ կրմնալ, որ մի չալ դաշնակցութեան էլ հիմնավիր դարձնեն Սուլթան համիտին! Վ

Ես վերեռում շեշտեցի Օսմանցւի վերաբերմունքի մասին գէպի քրդերը. բայց մի անդամ ևս կրկնեմ, որ թիւը կառավարութեան համար երբէք ձեռնտուչէ իրա հպատակ որևէ ժողովրդի մէջ համագլային որևէ միութիւն առաջ բերելլ! Ընդհակառակը քրդերի ցեղալին ընդհարումները, որոնց մասին ևս զեռառիթ կ'ունենամ խօսելու, ուրոյն-ուրոյն բնաշնչող քրոնիքական վրէժինդրութիւնը ևն Սուլթանի սրտին այնքան մօտիկ պարագաներ են, որ ամեն կերպ կը պաշալերէ ծեռքի տակէ...

Բայց բաւական է այդ առթիւ:

Ճնաեսական լարաբերութիւնը նոյն-

պէս շւտ թոյլ է այդ երկու տարրերի  
մէջ: Այս ասպարիզումը գարծեալ հայն է  
ամենամեծ դեր խաղացողը: Տաճկա-հա-  
յաստանի քրդերն իրենց թէ՛ գործւած-  
քները, թէ՛ կաթնատնտեսութեան, թէ՛  
երկրագործութեան և թէ՛ անասնաբու-  
ծութեան արդիւնքները կրվաճառեն իրենց  
հայրենակից հայերին, որոնցմէ և կ'ստա-  
նան իրենց կենսական պիտոյքները:

Թէ ինչպիսի յարաբերութիւն ունին  
քրդերը գէսլի Պարսիկները — չ'զիտեմ,  
որովհեան. Պարսկաստանում եղած և ան-  
ծամբ ժանօթացած չէմ այդ երկրի քրր-  
դերի կեանքին. բայց, երեխ, այնտեղ ել  
քրդերն աւելի հայերի հետ կըլինին սերտ,  
քսն շիտների հետ:

Կարդացի «Մուրճ» ամսադրում (1904  
թ. №№, 5, 6 և 10) ոդ. Ե. Ֆրանդեանի  
յօդւածները «Պարսկաստանի Քիւրդերը»  
վերնագրով. ափսոս սակալն, որ քիւրդ  
ու պարսիկ ժողովրդի յարաբերութեանց

մասին այդ յօդւածներէն որոշ զաղափար  
կազմել կարելի չեղաւ:

Չնայած որ քրդերի մի մասը իրեն կը-  
համարի Արարներէն սերած, բայց քըր-  
դերն առհասարակ որեւէ սէր չեն տածեր  
դէպի այդ «տէվուէշները» (սեաբերան-  
սեերես). չկայ մի հանգամանք, որը դրա-  
ւական լինէր քիւրդ-արաբական բարի  
լարաբերութեան գոյութեան: Քիւրդը քեզ  
նախատելու կամ «ստատանալ!» տաելու  
տեղ արաբի ձադ կանւանէ: Ցեղալին տ-  
աելութիւնը, փոխադարձաբար, աչքի  
կիյնալ թէ՛ Արաբների և թէ Քրդերի  
մէջ:

Յոյնը, քրդու տաելով, ոչ էշիր է, ոչ  
էլ չալ. հոռոմի մէջ աշխրութեան նշան  
չ'կալ... չոռոմն ստեղծւած է միայն սա-  
տանալին առաջնորդելու դէպի չարագոր-  
ծութիւն, դէպի մեղքերի հովիտը... չո-  
ռոմները անիծւած էլ (աղդ) են թէ՛ Ալ-  
լահէն և թէ մարդիկներէն... «չոռմին

բարեն առնողի գործը 7 օր անխաչող  
կերթալ»։ Եւ այն են։

Ասորիները քրդերի համար, որպէս  
դրացի, բաւական նման են հայերին։ Թէև  
ասորիք կամ եազուպիները այնպէս «կե-  
րակրողներ» չեն, ինչպէս հայերը, մանա-  
ւանդ ազատ ճուլամերկցիք, որ զիտեն  
սրի ծայրով բանակցիլ դրացիների հետ։  
սէֆիլ ասորիները, խօսք չկայ որ, քրդու-  
համար նոյն «բրդուտ ոչխարն ու կաթ-  
նուտ կովն են» ինչ որ հայերը։

Ճակատագիրը քրդերի մի մասին էլ  
ծգել է Ռուսաց հողին վրայ։ Այս նոր  
դրացիները—ռուսները—որպէս սառի  
մոսկովի էլլ իսկզբանէ անտի չեն կա-  
րողացած ներշնչել քրդերի մէջ որևէ հա-  
մակրանք։ Եւ շատ հասկանալի է այդ,  
որովհետև Ռուսաստանը իրա զաքոննե-  
րով քրդուն չի տար կողոպաելու, սպա-  
նելու, գողանալու արտօնութիւն ու պատ-  
ուաստ է ամենախխատ պատիժներով դո-  
դացնելու քրդական սրբագրծւած սովո-

բութեանց հետեւողներին։ Պատմական իրողութիւն է, որ Թիւրքէն կամ Պարսկէն ռուսաց ձեռքն անցած երկրներէն քրդերը կրգաղթէին հարևան երկիրները։ Ուուսաստանի մթնոլորդը ճնշիչ կերևնայ քրդուն վերջինս աւելի նախամեծար կրհամարէ ապրել Տաճկաստանում կամ Պարսկաստանում թէկուզ մուրացկանութեամբ, քան Ուուսաստանում—ամենալաւ կեանքով։

Ուուս-Պարսկական պատերազմների ժամանակ քրդերը մեծամեծ ձառակութիւններ կրմատուցանէին պարսից խաներին ու սարդարներին ռուսաց դէմ։

Առանձին քրդական աշխրներ՝ իրենց սեպհական միջոցներով զինւած՝ դէպի երևան կրվագէին, ճակատելու կեաւուր Մոսքովին դէմ։ Քաղաքակրթութիւնը ռուսաց ձեռքով պիտի տարածւէր, մինչդեռ այդ բանը քրդու տաճարին կը դրապէէր...

Երբ կըխօսինք քրդերի զրացիների և  
փոխադարձ յարաբերութեանց մասին՝ ան-  
հրաժեշտ է երկու խօսքով կանգ առնել  
բուն քրդական ներքին յարաբերու-  
թեանց վրայ:

Ինչպէս յետոյ պիտի տեսնենք՝ քրդերը  
բաժանւած են 100-աւոր ցեղերի և իւ-  
րաքանչիւր քիւրդ ցեղ կ'ընակի որոշ սահ-  
մաններում և ինքնուրոյն, առանձնակա-  
տուկ կեանքով:

Ամենալն վստահութեամբ կարելի է  
ասել, որ չ'կան քրդական 2 ցեղեր, որոնք  
հաշտ ապրելիս լինեին, հաշտ բառի լայն  
իմաստով։ Բոլոր ցեղերը լարւած յարա-  
բերութեան մէջ են իրար հետ, միայն  
այդ լարումը ոմանց մօտ ստացած է  
լուրջ քրոնիքական կերպարանք և ոմանց  
մօտ՝ թող, անվտանգ։ Ամենափոքրիկ ա-  
նախորժութիւնը կամ թիւրիմացութիւ-  
նը բաւական է՝ 2 և աւելի ցեղերի, այս-  
պէս ասած, քաղաքական յարաբերութիւն-  
ները խղելու համար։ Մի քանի ոչխար,

մի բուռն հող, մի հրացան ևն, գողացւած այս կամ այն ցեղի մի անհատէն և աեղի տւած մի փոքր ընդհարման ապրանքի աիրոջ ու գողացողի մէջ,—կարող է բռնկցնել ցեղալին հրդէն, դուռ բանալ ցեղալին պատերազմների առաջ:

Քրդական կեանքի այդ ամենախախուռ կողմը, որ պատճառ է դառել քրդու գարաւոր քամրաղդ կացութեան և որը բոլորովին անհնար է դարձրել համաքրրդական որևէ ossimilation,—այդ կէտի մասին ամենահետաքրքրական պատմական փաստեր, իրողութիւններ, իրական դէպքեր, հարազատութեամբ նկարագրած՝ պիտի գտնել ընթերցողը իմ «Քիւլտ-Պէկ» վերնագրով աշխատութեանս մէջ, մահաւանդ է. լ. թ. և ժ. հատորներում: Դեռ մի փոքր էլի կրխօսենք մենք ներքեռում: Այստեղ պէտք է եղրակացնել միանդամ ընդմիշտ, որ քրգերի ներքին լարաքերութիւնները մազէ կախւած բաներ են ու միշտ թշնամական: Մշտական սպառա-

զինւած կացութիւնը հսկու գրաւականէ  
քիւրդ ցեղերի դէպի իրար ունեցած ա-  
րիւնածարաւ ատելութեան։ Երեակայե-  
ցիք նախարարների ցանցով ողողւած ա-  
պակենդրոն Հին Հայաստանը և գուք  
մի փոքր ծանօթացած կրլինիք ժամա-  
նակակից քիւրդ ցեղերի յարաբերու-  
թեանը, այն զանազանութեամբ որ Հայ  
նախարարների մէջ տղգալին կապը և աղ-  
դայնութեան դաղափարը խորունկէկ ար-  
մատներ զցած լինելով՝ թոլլ չէին տար  
նրանց շարունակ բգըտել իրար……

### 5. ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Թոլոր քրդերը կըբաժանւին երկու մա-  
սերի—նստակեացներ և կէս-լժափառա-  
շրջիկներ։ Միանդամայն սխալ է շատերի  
այն կարծիքը, թէ քրդերն հաստատ բը-  
նակութիւն չունին։ Ես կասեմ ընդհա-  
կառակը, որ քրդերը իսկական թափա-  
ռաշրջիկներ չունին, ինչպէս բոշաներն են,  
գնչուները։

Նստակեաց քրդերը կրպարապին դրլիսաւորապէս հողագործութեամբ, անսանաբուծութեամբ և կաթնատնտեսութեամբ:

Երկրորդ ճիւղին կրպատկանին խաշնարածները, որոնք իրենց զբաղմունքի պահանջների համածայն ստիպւած են տարւան եղանակներին հետ փոխել և իրենց բնակավայրերը, ու այդ իսկ պատճառով կոչեցի, նրանց կէս-թափառաշրջիկներ:

Ներքին բաժանումները նոյնպէս բարդ չեն, թէ՝ առաջին և թէ երկրորդ քաթեկորիալի քրդերը դլիսաւորապէս կրպաժանւին 2-ական մասերի:

Նստակեաց քրդերի բարձր դաստկարզը կրկոչւի Աղալար, միջին և ստորին դաստկարդերը՝ Մարաբալար (marabalar—Марабаларъ):

Աղալարը հողատէր դասն է, որ միաժամանակ էլ կըներկայանալ կատարեալ տէրը մարապալար (աշխատաւոր—երկ-

բագործ) դասին բոլոր էութեանը, մինչև  
անդամ կեանքին էլ: Մարասլա քիւրղը<sup>1</sup>  
գիշեր-ցորեկ, տմառ-ծմեռ, իր ընտանիքի  
բոլոր անդամներով կրտանջւի՝ լոկ աղա-  
լարին կշտացնելու համար. իսկ իւր դառ-  
նագին աշխատութեան փոխարէն նա կր-  
ստանայ աղալարէն հաղիւ իրեն ապրե-  
ցնելու չափ կենսական պաշար. շատ ան-  
դամ էլ չկարողանալով կերակրել իրա գեր-  
դաստանը՝ կստիպւի զիմել դողութեան  
և այլ չարագործութեանց:

Աղալարները կատարեալ ձրիտկերներ  
են, առանց մի ժամ աշխատելու՝ նոքա  
խղնի ամենայն հանդստութեամբ կրվա-  
լելեն հաղարաւոր մարասլաների ճակատի  
դառն քրտնքի արգասիքու

Աղալարի զբաղմունքն է՝ որսորդու-  
թիւն, աւազակութիւն և ցեղին կառա-  
վարելու հոգսրւ

Աղ ալարը որպէս զատաւոր՝ պիտի  
վճռէ իր ցեղի բոլոր դատերն ու վէճերը

և նրա վճիռն անլեզաշրջելի է. կ'արձակէ  
նա և՛ մահւան վճիռներ:

Որպէս իշխան՝ աղալարը պիտի պահ-  
պանէ իր ցեղը արտաքին թշնամիների  
դէմ:

Որպէս իրաւատէր՝ պիտի վճարէ իր  
ցեղի բոլոր պետական հարկերը (կած այդ  
պէտք է բաժանէ իրա և թիւրք պաշտօ-  
նեաների միջև):

Որպէս լիազօր—սպարապետ՝ պիտի  
խնամք առանէ իրա մարդիկների կատա-  
րեալ զինավարժութեանը և ի պահանջել  
հարկին պիտի զինէ անզէներին:

Աղալարը իրենով կըներկայացնէ ամ-  
բողջ ցեղը՝ կրելով վերջնի բոլոր առանձ-  
նայատկութիւնները և, հաւատարիմ թար-  
դման հանգիսանալով նրա բոլոր պահան-  
չներին ու կարիքներին: Աղալարի հա-  
յեցողութեամբ կ'արտայալտեի ամբողջ  
ցեղի կամքը, որի շնորհիւ էլ աղալարը  
կընանգիսանայ որպէս ամենազլիսաւոր  
դերակատարը քրդական կեանքում: Ա-

զալարէն զատ մնացեալ բոլոր քրդերի  
մէջ կրտիրէ «կրաւորական համաձայնու-  
թիւն և սպասողականութեան դրու-  
թիւն»:

Խաշնարած ցեղերի բարձր դասակար-  
գը կրկոչւի Սուրու ճիլար (souroudjilar—  
Ծորդջիլար), մնացեալք դրանց ճորտերն  
են, հովիւները և կոյր կամակատարները:  
Այս ցեղերէն են աւելի աւազակաբա-  
րոյ քրդերը:

Հովեսորականութիւնը, կարելի է ասել,  
առանձին զատ չի կազմեր. ինչպէս հայերը,  
նոյնպէս և քրդերը կղերական դասա-  
կարգ չունին. քրդերը բաւական անտար-  
բեր են դէպի դաւանանքները և այդ  
պատճառով էլ մեծ նշանակութիւն չեւ  
տար իրենց մոլաներին, շէյխերին, սէիյտ-  
ներին և տէրվիշներին: Սակայն ազնըւա-  
կան շէյխերը և ժառանգական սէիյտ-  
ները կրվալելեն քրդերի մէջ մեծ յար-  
դանք, չէ՞ որ դրանք «բարձր» գերդաւ-  
տանի դաւակ են:

Երբեմն շէլիսերը կրխաղան համայնքի  
լիազօր պետի դեր, որով միաժամանակ  
թէ՛ մարմնաւոր և թէ հոգեոր իշխա-  
նութիւններն իրենց հօտի միացրած կը-  
լինին իրենց ձեռքում:

XIX դարի պատմութիւնը արծանա-  
գրել է իր էջերում մի քանի շէլիսերի  
սխրագործութիւնները, որոնք, որպէս  
խտացած մի սե զիծ՝ կանցնին քամբաղդ  
փոքր Ասիալի նորագոյն պատմութեան  
մէջէն: Բաւական է յիշել Շէլիս Սապա-  
տուլլան, նրա որդին Շէլիս Զալալէդդին,  
Շէլիս Իպատուլլահ, Շէլիս Հասան... ա-  
նունները բաւական են՝ ցոյց տալու այն  
դժոխալին դերը, որ խաղացել են դրանք  
փոքր Ասիալում:

Հարցրէք Կարմիր Հայաստանի ժեռ  
քարերին և նոքա պիտի պատմեն ձեզ  
այնպիսի անցքեր, որոնք ձեր մազերը պիզ-  
պիզ պիտի կանգնեցնեն!...

Շէլիտներէն նրանք, որոնք որդոց որ-  
դի հոգւելու իրաւունքն են ստացած

դարերէ հետէ, նոյն հեղինակութիւնը  
կլվայելէն, ինչ որ ազնւական շէլիսերը:

Քրդերի բոլոր ցեղերը, նայած իրենց  
գործածած բարբառներին, կըբաժանւին  
երկուսի: Թէև, կարելի է առել, որքան  
ցեղեր, այնքան և քրդական բարբառներ  
կան, բայց դրանք ամէնք ծիւղերն են  
այն երկու մայր-բարբառների, որոնք  
կըկոչւին Գուրմանճերէն կամ Կըմանճե-  
րէն և Զազայերէն կամ Տըմըլերէն:

Ներկայ աշխատութեան Բ. հատորում  
երկարօրէն պիտի խօսեմ այդ բարբառ-  
ների ծագման և կազմութեան մասին.  
այնպէս որ չարժէ այստեղ դրանով զը-  
բաղւել:

Նկատենք միայն, որ ամենուրեք աչքի  
կիյնայ Տըմըլիների ու Գուրմանճների  
մէջ թշնամութիւն:

---

Ցեղային բաժանումների մասին կար-  
ժէ առել երկու խօսք, որովհետեւ մեզա-

նում «ցեղ» բառը խիստ առածգական նշանակութիւն է ստացել:

Քրդական հարիւրաւոր ցեղերը, որոնք այսօր կը կրեն առանձին անուններ, իրենց գոյութիւնը՝ որպէս ինքնուրոյն համախմբումն՝ կը պարտին իրենց բնակավայրերի աշխարհագրական դիրքին, որը կը ներշնչնէ իրա բնակիչների մէջ սանձարձակութիւն, կենդրոնախոյս հոգի կամ, ինչպէս իրանք քրդերը կասեն՝ «Պէկէմ պէյկիյէ» կամ «Պէյուլար հըյվէնա»:

Տարա՛յու չ'կայ, որ այսօրւայ բազմաթիւ աւտնդակից ցեղեր մի ժամանակ կը կաղմէին մի մեծ ու փառաւոր ընտանիք և միայն ներքին կազմակերպութեան ապակենդրոնացման սիստէմի շնորհիւ տիրացան այսօրւայ տնաքանդ վիճակին: Անհերքելի նշմարտութիւն է այն, որ անքաղաքակիրթ, չ'լուսաւորւած ժողովուրդներ իրենց հաւաքականութիւնն ու նշանակութիւնը կը պահպանեն միմիայն կենդրոնացումով: Ապակենդրոն կազմա-

կերպութիւնը կրգարձնէ այլպիսիներին  
մի-մի չարագործ, ենիչերի, պաշտօպուք  
և վերջապէս ենթակալ հանապաղօրեալ  
քայլքայման...

Սլդպէս պատահեց մեր հայրենակից  
քրդերի հետ, ապակենդրոնացումը քան-  
դեց քրդերի տունը. ապակենդրոնացումը  
կըքանդէ գեռ շատերի՝ էլ տունը: Խճ՝ զն  
քրդեր... նրանք կազմալուծւեցան հետրդ-  
հետէ, զոյութիւն աւին ազդակործան  
պառակտման, ատելութեան և յիմար  
ոխի հոգին դարձրեց երեկւան եզրալրնե-  
րին մէկ-մէկ անհաշտ թշնամիներ: Զ'կար  
նրանց մէջ մի զօրեղ կենդրոնացում, որ  
համախմբեր բոլոր եղբայրների ոլժերը և  
այլպիսով շէն ու պայծառ պահէր օճա-  
ղը քրդութեան Սլաօրւալ հուժկու պե-  
տութիւնները գեռ անկարող են ապա-  
կենդրոն զրութեամբ երկիր կառավարել,  
ուր մնաց Հայը կամ Քիւրզը, որ այդ  
սիստէմով միայն անբարույսկանանալ ու  
կապը կարած հորթուկի նման իրա դար-

տակ զլիսի փչած կողմը թեքւել կարող է...

Ալդակիսով, տհա, բրդերը առանձինառանձին խմբակներ կազմելով՝ ձևացուցին զատ-զատ «ցեղեր»։ Եւ ի՞նչ, յանախ «ցեղ» ասելով կրթնորոշեն ժարդիկ այս կամ այն գիւղի (մի՛ գիւղի) բնակիչներին, որոնք չ'կամենալով և ապա չ'կարենալով եօլա գնալ իրենց գրկից-ցեղակիցների հետ՝ թխեցին «նոր-ցեղ», տալով նրան և նոր—իրանց գիւղի—անունը Ալդակւա, և կազմւել՝ Օշինցիք, Ալխատեանք, Քըրմըցիք, Օխչիանցիք, Պաղլի-Աղատցիք, Հաւկըցիք և այլ և այլ ցեղեր։  
Բանն այնտեղ հասաւ, որ ցեղ բառը կորցրեց իրա իսկական նշանակութիւնը։

«Մի ԺԱՄԻԱՆ ՄԷՋ ՄԷՐՁԻԿ ՑԵՂ  
ԶՆՁԻԵՑԱԼԻ»...

Ալդակւա կ'երգեին մի ժամանակ երեխաներն ու պառաւները... թէև սուտ է,

«Մէրզիկ ցեղը ջնջւած» է, Մէրզիկ ցեղի հորժուկներն էլ այսօր կրվազվուտեն անպարտ նահատակների անլիշատակ շիրիմներին վրայ, իսկ Մէրզիկցոց, իրք թէ սպանւած, ցեղապետ Շարաֆ աղան այսօր էլ տակաւին անլազօրէն կրծծէ անպարտ Վասպուրականցի Հայի արիւնը,— բայց խնդիրը նրանումն է, որ «մի ժամում մի ցեղ ջնջելու» թէկուզ խօսքն էլ գուրս կ'ուգայ կոյր աշուղի բերանէն: Ահա թէ, սիրելի ընթերցող, որտեղ հասաւ «ցեղի» նշանակութիւնը:

Ուղիղն ասելով՝ քրդական քիչ համախմբումներ կան, որոնց կարելի է իսկական ցեղեր կոչել, մնացեալները, ինչպէս Բալուցիք կ'ասեն, «ընկուզի գողեր» են: Տաճկա-Հայաստանում տարեկան քանի՞ ցեղ կը ջնջւի իրար ծեռքով և քանիսն էլ սունկի նման կրբուսնին այս կամ այն պատի տակին!

6. ՔՐԴԵՐԻ ԱԶԳԱՆՈՒԽՆՆՐԸ ԵՒ ՆԲ-  
ՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ազգանւան օրինաւոր գործածութիւնը  
մտած չէ քրդերի մէջ։ Առ հասարակ տր-  
ղամարդ և կին՝ քրդերը՝ կրկոչւին իրենց  
հօր կամ տան նահապետի անունով,  
որը ճեռնելով՝ այդ շնորհիք կրփոխանցէ  
իւր որդուն կամ տան մի այլ ազգեցիկ  
աղամարդուն։

Եղել են պարագաներ, երբ մէկ կամ  
մի քանի արիւնակից ընտանիքներ կրել  
են այս կամ այն կնոջ անունը որպէս  
մականուն, շնորհիւ նրա ազգեցութեանը։

Յաճախ պատերազմների մէջ ընկնող  
հերոսը կըրանալ նոր ազգանւան դուռ  
իրա մերժաւորների համար։

Քիչ չեն և այնպիսի գէպքեր, երբ մի  
գիւղի ժողովուրդ իրա գիւղապետի ա-  
նունը գործածէ որպէս ընդհանուր, հա-  
ւաքական (collectif) մականուն։

Շատ անզամ էլ քրդերը կիւ (guil)

մասնիկը կցելով այս կամ այն գերգաստանի նահապետի անուան՝ կը ծեսցնեն նրա տօհմանունը: Եթէ, օրինակ, Խլօ է նահապետի անունը (այդպէս և տաճ մի այլ աղջեցիկ անդամի), քիւրզը «Խլօ-Կիլ» տօելով կը հասկանալ՝ ինչպէս հայերէն՝ Խլոյեան կամ Խլոյեանց կամ Խլոյենց-տաճ՚երէն՝ Խլօ-օղլի, Խլօ-զատէ, ռուսերէն՝ Խլօ-օԵՎՅ ևն ևն:

Եղել են գէպքեր, երբ քիւրզն ամուսնանալով՝ իրմէն բարձր հասարակական դիրքի տէր որեւէ «մեծաւորի» աղջկան հետ՝ այնուհետև կրել է իրա աներոջ տօհմանունը. յաճախ զաթ ֆիլանու (zat filanou—այսինչի փեսան) կամ զիա Փէշմէքէն (zia fechmequèn—նոյնը) ասելով կրբնորոշեն այդ կարգի ազգանուններ:

Ծննդավայրի անունով կոչող շատ գերգաստանների կարելի է հանդիպել՝ նոր գաղթավայրում կամ պանդխտավայրում: Փը Վանէ (je Vane—Վանեցի, Վանէն) կամ

Վանրա (Vanra—նոյնը) կրկոչւին Վանեցի գաղթական ընտանիքները:

Այս կամ այն ուշադրաւ դէպքը, արկածը, հետաքրքիր եղելութիւնը կամ անցքը սահակ առիժ կուտայ հեղինակի գերդաստանը և նոյն իսկ յաջորդ սերունդը նրա կոչելու ալդ անցքի և ալնի անունով: Օրինակ. ենթադրենք մի ըոսէ որ մեր խմբով կ'երթանք ասպատակելու. ով մեզանէ վախկոտաբար խոյս կուտայ հերոսական ասպարէզէն՝ նրա ազգանունը կը մնայ՝ «փախչողենք», «երկչոտենք», դաւաճանենք» ևայնու

— Քրդերն իրենց ցեղերը կրկոչեն էլ, իսկ ցեղապետներին՝ էլ աղասի, պէկ, պէկլարպէկ, աղա, միր, միրիմիրան, մէզըն աղա, սուրուճի, աղէ, պաշխուլի, հարէյ.

Բ.

ՄՈՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ

1. Մարմնի կազմւածքը.

Մենք վերեռում տեսանք, որ քրդերը  
փռւած են մի ահազին տարածութեան  
վրայ և որ, ըստ քրդաց բանաւոր ա-  
ւանդութեան, նրանք սերած են զանա-  
զան աղգութիւններէ։ Այդ հանգամանքն  
ինքն ըստ ինքեան կ'ապացուցանէ որ ընդ-  
հանուր մարմնակազմութիւն չէ կարելի  
ճատնանիշ լինել բոլոր քրդերի վրայ։ Այս՝  
դուք քրդերի մօտ կըհանդիպիք և՝ պար-

սկական, և՝ յունական, և՝ տաճկական ու  
այլ տիպերի:

Չորրորդ հայքում, եթէ քրդական տա-  
րագը չըլինի, նրանց բոլորին հայ պիտի  
կարծէք:

Բայց և այնպէս, կարելի է Տաճկա-  
հայտատանի քրդերի ստւար մեծամաս-  
նութեան մարմնակաղմութեան մասին  
ասել հետեւեալը:

Հասակը բարձր և առողջակաղմ. լայն  
և գուրս ինկած կուրծք, ծածկւած քա-  
քուլներով—խիտ ու երկար մազերով.  
Հաստատակաղմ ու մսուտ թեներ և սրունք-  
քներ. լայնագիր ու երկար՝ բայց տա-  
փակ ոտներ. կոլորակ գանգով մեծ զլուխ.  
զլխի թուխ մազերի և աշքի զոյնի հաղ-  
ւագիւտ նմանութիւն. լայն՝ մեծ՝ բայց  
և յանախ տափակ ճակատ. խիտ ու եր-  
կար յօնքեր և արտևանունքներ, որոնք  
կըհսկեն արնակալած ահարկու աշքերին  
վրայ՝ յախնի իրենց խոշորութեամբ և  
սրատեսութեամբ. քրդու դէմքին վրայ

վեհութեամբ բազմած է հայկական կամ  
արծւի քիթը՝ քրդու լիաթոք շնչառու-  
թենէն շարունակ սուրող լայն պնչածա-  
կերով. հարուստ պելսերով բեռնաւոր-  
ւած վերին հաստ շրթունքը շատերի մօտ  
վեր է սովորած ու հաղիւ կրկազի ներ-  
քինին, որոնց արանքէն կարելի է տեսնել  
երկշար սպիտակ ատամները. լայնանիստ՝  
գէպի ծոծրակը թերած ականջները, ո-  
րոնք յաճախ զարդարւած են մետաղեաչ  
օղերով. մեզ համար անախորժ և մինչեւ  
իսկ անտանելի յախուռն ձայներին մեծ  
ախորժակով կ'ունկնդրեն քրդու ականջ-  
ները. սակալն նոյն ալիք ականջները, զար-  
մանալի հակասութեամբ, բոլորովին անծ-  
նատուր կըլինին զաւալի մելամաղձուտ  
եղանակներին, երբ քիւրդն ալիդ՝ թէւ  
պարզ բայց իսկապէս հրաշալի գործիով  
կըզգլացնէ՛ հերոսի կրծքէն բղխող վեր-  
շին հեկեկանքները կամ ուռիներով շըր-  
ջապատւած առւտկի եղրին, լուսնկաչ գի-  
շերը, աշուղ (սիրահար) զուղի մաքրանը-

ւէր ու հոգէշունչ մըմունջները. քրդու  
ազքերը խիստ կրսիրեն խայտաճամուկ  
փայլուն գոյներ, որոնք կրդերեն քրդու  
սիրտն ու հոգին միամիտ երեխի նման.  
քրդու բերանը լայն է, մեծ և բնդունակ  
տեղաւորելու իրա մէջ քրդական թա-  
թում պատրաստւած ահագին պատառք:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Սովորականէն կարճահասակ կամ թզուկ  
մարդկանց դուք չէք հանդիպիր քրդերի  
մէջ. մարապալար դասի մէջ միայն կան  
միջահասակներ:

Երկու սեռերի մարմնակազմութեան  
մէջ կարելի է նկատել այն զանազանու-  
թիւնը միայն, որ քրդուհու դիմագծերը  
համեմատաբար ազատ են այն անհոռնիու-  
թիւններէն, որ կըներկալացնէ քիւրդ  
տղամարդու դէմքը:

Բարակ և երկար պարանոցի կըհան-  
դիպիք դուք ազնւական դասերի մէջ:

Մարմնի (իրանի) հաստութեան կողմէն վայելչակազմ են: Քրդու քայլւածքը հաստատ է, անլողդողդ և խոշոր (ատլմով): Քայլելիս քրդու իրանը ուղղածիդ է կամ մի փոքր դէպ առաջ թեքւած: ուների հետ անսպակման կըշարժին նրա թերթ:

Քրդու ձայնը կըհնչէ խիստ և առողջադին:

Խօսակցութեամբ քիւրդն ընդմիշտ ցասկոտ, բարկացած մարդու տպաւորութիւն կըթողնէ իւր ոչքիւրդ խօսակցին վրայ. նա կըխօսի մէկին շեշտերով, առանց որևէ սղումի և որոշ չափով էլ երգելով: Ախորժալուր է մանաւանդ քըրդու պատմւածքի ձևը. քիւրդը կըդիւթէ ունինդրին իրա՝ խօսակցութեան արւեստականութենէ աղատ և բնականէն զեղեցիկ դարձւածքներով, համեմւած առասպելախառն, հրաշաղարդ և անհեթեթ կտորներով, որոնցով նա իր հերոսներին կըբարձրացնէ մինչև եօթներորդ երկինք

և, եթէ հակակրելի՝ բացասական տիպէ  
պատմւածքի հերոսը,—մինչև «դժոխքի  
անտակ անդունզը»։ Ծերունի կամ պա-  
ռաւ քիւրզը ոչ կըսիրէ և ոչ էլ կըպատ-  
մէ այնպիսի հեքիաթներ, որոնց հերոս-  
ները սովորական մարդիկ են։

Հետաքրքիր է, որ քիւրդ տղամարդ-  
կանց խօսակցութեան ձևն աւելի գրա-  
ւիչ է, քան կանանցը. այդ բանը կարելի  
է նկատել նոյն իսկ երեխայական հասակ-  
ներէն։

Չ'նայած իրենց վայելած հռչակին՝ քըր-  
դերն այնքան էլ ֆիզիքական ոյժ չու-  
նին։ Ճարպիկութեան կամ արագաշար-  
ժութեան մէջ էլ մեծ շնորհք ցոյց չեն  
տար։ Սակայն լաւ վարպետ են ձի նրա-  
տելում և զէնք գործածելում։

---

9.

ՔՐԴՈՒ ԲՆԱԿԱՌԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՐԱ-  
ԳԱՆԵՐԸ.

1. Մարապալարի բնակարանը.

Անհրաժեշտ է նկատել այստեղ ամենէն  
առաջ, որ նստակեաց քրդերի գիւղերը  
զասաւորւած են երկու կերպ—կամ բո-  
լոր տները իրար կից՝ խռնւած և կամ  
չոկ-չոկ, իրարմէ բաւական տարածու-  
թեամբ հեռու։ Թէ՛ առաջին և թէ վեր-  
ջին դէպքում քրդու տունը կամ կիսով  
չափ ստորերկրեալ է և հազիւ գետնի ձա-  
կերևոլթէն կէս մարդահասակ բարձրու-  
թեամբ, կամ թէ չէ էլի ցածլիկ (հազիւ

3—5 արշին բարձր) ու ողորմելի տներ  
են այս կամ այն ժայռի տակին կուչ ե-  
կած: Երկյարկանի աների չէք հանդիպիր  
մարապալարի մօտ:

Մարապալարի տունը (mal—маль կամ  
khana—хана) մեծու մասամբ ունի հե-  
տեւել կազմութիւնը:

Ամբողջ տունը բաղկացած է մի մեծ  
քառակուրի օթեանէ (покой), որի մի  
կողմը անջատւած է ճաղերով կամ միջ-  
նորմով (baghdadi—багдади) և այդ կր-  
տրուածքը կրծառայէ ախոռի տեղ. մի  
երկրորդ մասումը զետեղւած են քրդու-  
պաշարեղէնները և աման-չամանները. եր-  
րորդ մասը կրծառայէ ննջարանի տեղ,  
ուր միաժամանակ կրմխայ քրդու նւի-  
րական օճաղը: Տան Ⅱ և Ⅲ մասերն յա-  
նախ զատւած կրլինին ամպարներով ո-  
րոնք կրշինւին հողէ, փայտէ, մաշառէ  
ու ցեխով պատած. այդ ամպարներում  
կրլեցնէ քիւրդը իւր ունեցած-չունեցած  
գարին, կորեկը, կրլկրլը:

Տան պատերը բարձրացած են քարով  
կամ հողաշեն աղիւսներով, որ քրդերն  
իրենք կրպատրաստեն (հասարակ հողէ,  
ջրէ և յարդէ կրպատրաստէ ցեխը, որին  
կրլեցնէ փալտեալ կազապարների մէջ և  
կրշինէ քառակուսի ու խորանարդ քեար-  
պիճը (kiarpidj-քարպաճ-աղիւս) <sup>1/4</sup> ար-  
շինի չափ թանձը ու կրչորացնէ արեի  
առջեւ):

Տներն իրենց լոյսը կ'ստանան հողա-  
ծածկ ու տափարակ առաստաղէն (կր-  
տուր) բացւած՝ մի փոքրիկ քառակուսի  
լուսամուտէ, որն ամառ-ձմեռ զուրկ է  
որևէ շրջանակէ ու ապակիէ:

Օդը ներս կըթափանցէ միայն ցածլիկ  
զոներէն իր հետ ներս բերելով և՛ դրսի  
փոշին ու աղտեղութիւնները և թէ, ծր-  
մեռ ժամանակ, ծիւնն ու բուքը: Նատ  
աներ զուրկ են նոյնիսկ վերովիշեալ փոք-  
րիկ լուսամուտէն. ալզպիսի զուտ ըլլը-  
դական տները իրենց լոյսը կ'ստանան  
ծխնելովի միջոցաւ, որը միշտ լիքն է

ծխով ու հաղիւ երբեմն կը կարողանայ  
ազօտ լոյսի մի շերտ ներս զցել իր բար-  
ձունքներէն։ Կան և այնպիսի տներ, ո-  
րոնք ունին միքանի բաժանմունքներ, ա-  
ռանձին-առանձին շինած և յատկացրած  
բնակարանի, մառանի, աճպարի, ախո-  
ռի են։

Բոլոր տեսակի տների յատակը լոկ հո-  
ղէ է, որի վրայ շատ քիչ անդամներ բըր-  
գուհին մի բուռը չուր սրսկելու շնորհ  
կանէ։

Պատերը քրդուհին երբեմն սուվա  
(souva—շաղախ) կանէ՝ կրծեփէ աղբա-  
խառն ցեխով։

Թավանը (tavan - տավանъ=առաստաղ)՝  
իւր բոլոր ծանրութեամբ կրհանդչի մի  
շարք գերանների վրայ, որոնց վրայէն էլ  
մարդակներն են (mértec) շարւած, ապա-  
մացառ, ցեխ և ի վերջոյ ծեփը, որ արե-  
ւէն չընաթռուելու համար քիւրդը տա-  
րէնք մի քանի անդամ կը լողէ (լող քա-  
րով) անձրեւալին եղանակներին, կամ եթէ

լողքար չունի մեծ տափիշով (թակ) «կը-  
ձեծէ» ձեղքւածքները։ Կտուրների վրայ  
տափարակ է։

Մի թաղի կամ յաճախ ամբողջ գիւղի  
տների կտուրները միւնոյն բարձրու-  
թեամբ, իրար անմիջապէս կից, կըներ-  
կալացնեն մի հոկալական հրապարակ,  
ուր տեղի կունենան համայնական ազօթք-  
ները, պայլամների (տօն) հասարակա-  
կան (ընդհանուր) ճաշկերոյթները, հար-  
սանեկան և այլ տօնալին զւարճութիւն-  
ներն ու պարերը։

Միւնոյն հրապարակ-կտուրի վրայ  
ըրդուհիները կրփուեն, չորացնելու համար,  
նոր խաշած ձաւարը, լւացւած աղոնը,  
կանաչ ծխախոտը և կեաւուրներէն դո-  
ղացւած տաւարի մորթերը։

Ապրիլ ամսի կէսերէն սկսած մինչեւ  
աշուն—մինչեւ սեպտեմբերի վերջերը, նոյն  
այդ կտուրները կրփոխւին ընդհանուր  
կամ համայնական-ննջարանի։ Բոլոր  
գիւղը կըգիշերէ այդ ննջարանում։ Զեղ

նման պատւական հիւրն էլ բաղդ կ'ունենայ հանգչելու միւնոյն ննջարանում, պայծառ երկնքի տակ, հազարաւոր զոյդերի միջև, որոնք մի-մի ծակոտած փալասի հովանաւորութեան ներքև անուշանուշ կրխումփացնեն՝ առանց ուշը դարձնելու զանազան աւելորդ ձեւականութիւնների:

Հետաքրքիր է, մանաւանդ, առաւօտեան դէմ, երբ քիւրդ մոլլան—ոչ այնքան շերմեռանդութենէն թելազրւած, որքան մի աւանդական սովորութիւն յարգած լինելու համար —ժողովրդէն վաղվեր կացած՝ քերւելով, ճռմռւելով, յօրանջելով, աչքն ու բերանը բաց ու խուփ անելով և սիրուն մետաղալին ծայնը զրդգրացնելով—կրկարդայ սապահին (sabah—վաղորդեան ազօթք):

Մոլի ձայնէն կրզարթնին բոլոր... ննջեցեալները և ամեն կողմ կրտիրէ զրւարթ կենդանութիւն: Կեանքը եռ կ'ուզայ և ծեղ էլ—որ մոլի զեղդեղումներէն

միբասլացած էիք դէպի մի ուրիշ աշ-  
խարհ—այս, ձեզ էլ կըներշնչէ շարժւելու  
դորձելու աւիւն: Այս, հետաքրքի՞ր է  
այդ տեսարանը, որմէն ձեր ուշադրու-  
թիւնը կըդրաւէ բազմանդամ նախիրի  
հրաժեշտ՝ միացած հայաստանի մթնո-  
լորդը լցնող երգիշների դավավիկին:

Քրդու տան ներսը զուրկ է առանձին  
զարդարանքէ. պատերը չեն կրեր որևէ  
որմնակար, որով այնքան հարուստ է  
տաճկահայ զիւղացու բնակարանը: Քրդ-  
դու տան զարդերը կըկազմեն զորդերը,  
կապերաները և զէնքերը, որոնց մասին  
մանրամասնօրէն պիտի խօսիմ իր տեղում:  
Միայն պղնձեղէններն են, որ իրենց վրա-  
լի խորհրդաւոր տառերով ու նախշնե-  
րով կը գրաւեն ձեր ուշադրութիւնը:

Մարապալարի տան առջեն է ընդար-  
ձակ փարախը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ  
անձաշակ կերպով մացառներով ցանկա-  
պատած մի տարածութիւն, ուր կըդիշե-  
րեն կենդանիք ամառւան եղանակին:

## 2. ԱՂԱԼԱՐԻ ԱՊԱՐԱՆՔԻ.

Բոլորովին ուրիշ տեսք ունի և ուրիշ  
էլ կազմութիւն աղալարի ապարանքը,  
որ քըրդերը կրկոչեն խոնախ (Khonakh)  
կամ սարայ (saraï):

Խոնախում դուք կրհանդիպիք կանո-  
նաւոր լուսամուտների, վանդակապատ  
գսաթիկոնների, սրահների, շքեղադիր ու ա-  
ռատահոս աղբիւրների, պարսպապատ  
հէվլիւների (hévlü—դաւիթ). շէնքերը կր-  
լինին երկյարկանի և նոյնիսկ երեքյար-  
կանի. խոնախները շրջապատւած կրլինին  
դեղեցիկ պարտէզներով ու ալգիներով:

Ցեղապետների տները՝ ներսէն ու դըր-  
սէն բաւական նման են քաղաքակիրթ  
երկրների բնակարաններին, այն գանազա-  
նութեամբ, որ խոնախների կտուրները  
տափարակ են:

3. ԽԱՇՆԱՐԱԾՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ.

Այս քրգերի բնակարանները շատը լինելու (տարք—վրան) են՝ մազէ, թաղիքէ, քաթանէ կամ պրեղէնթուկէ (կոշտ փառուսինէ): Վրանները կրգործին հայերը և լաղիստանի յոյները: Մազեղէն վրաններ կրպատրաստեն և՛ իրենք քըրդերը:

Եթէ չ'հաշւենք ցեղապետների օթեկաշատ վրանները, մնացեալ բոլորն ունին հետեւեալ ձեն ու դասաւորութիւնը:—

Վրաններն իրենց ձեռվ բաւականին նման են կիսաբաց հովանոցի (ՅՈՒՏԻԿԵ), որի ամբողջ ծանրութիւնը կրհանդի մի սիւնի վրայ՝ ցցւած նրա կենդրոնումը: Վրանի փեշերն ամրացրած են գետնի վրայ փայտէ կամ երկաթէ ցցերով: Մի անկիւնում քառակուսի կամ եռանկիւնի բացւածքը կրծառայէ դռան տեղ, ուրկէ կերեի վրանի ներսը: Ահա այդ վրանի

ներքեն է քիւրդ ընտանիքի տնալին բոլոր ծանրոցքը:

4. ԽԱՇՆԱՐԱԾՆԵՐԻ ՑԵՂԱՊԵՑՆԵՐԻ  
ԿԱՄ ՍՈՒՐՈՒՃԻՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐԸ.

ՑԵղապետների վրանները կրգանազանւին միւսներէն թէ՛ մեծութեամբ, թէ՛ կազմութեամբ և թէ պաստառի (կտոր) ազնւութեամբ:

Վրանը լարւելիք տեղին վրայ նախապէս կամրացնեն մի քանի զլանաձև նեցուկ-փայտեր, մօտ 1—2 մէթր հեռու իրարմէն և շուրջ 5—6 մէթր բարձրութեամբ։ Այդ ցցերի վրայ էլ փռւած է վրանը, որի քղանցքները վերոգրեալ ձեւով ամրացրած են դետնին։ Վրանի բուն կենդրոնումը կրբարձրանայ՝ օժանդակ ցցերէն բարձր մի սրածալը և բուն կատարին դրոշակ ամրացնելու յարմար ձօղը, որի և միւսների միջև, ծալը բերի մօտ, պաստառը կրստանայ դրւագածեւ ծալ-

ըեր: Իսկ ներսը, իւրաքանչիւր 2 ցցերի  
արանքում, կախւած է միջնորմ-վարա-  
գոյր, պատրաստւած միևնոյն կամ աւելի  
աղնիւ կտորէ, գոյացնելով երկու կողմե-  
րում առանձին-առանձին բաժանմունք-  
ներ: Ահա այդ բաժանմունքներն են, ո-  
րոնցմէ մին կրծառայէ որպէս միսափիլ-  
լիք (հիւրասենեակ), երկրորդը, հարէմլիք  
(կանանց), երրորդը՝ ննջարան, չորրոր-  
դը՝ իպատէթլիք (աղօթատեղի) մի ու-  
րիշը՝ քիլէր (մառան):

Խոհանոցը (մութֆախ – աշդանէ) ա-  
ռանձին շինուած է հողէ: Վրանների շուր-  
ջը, առհասարակ, անծրեային շրերը ներս  
խուժելն արգելելու համար, կրփորեն  
խրամատներ (ակօսներ):

### 5. ԽԱՇՆԱՐԱԾՆԵՐԻ ՀԻՒՂԵՐ.

Վրանների փոխարէն մենք կրհանդի-  
պինք երբեմն պարզ հիւղերի (землянка)  
և այդ զլիսաւորապէս այն վայրերում,  
ուր ձմերելու է խաշնարած քիւրդը:

Գետինը 1—2 մէթրաչափ փորելէ  
յետոյ ցանկացած տարածութեամբ՝ նրա  
երեք կողմէն կրբարձրացնեն պատերը՝  
հիւսելով մացառէ և ներսէն ու դրսէն  
կոշտ ցեխով ծեփելով։ Երկու երկար պա-  
տերը որքան բարձրանան՝ այնքան կր-  
թեքւին դէպի ներս և վերջապէս երկսի  
գագաթը միանալով՝ կրնանգին հաստ  
գերանին վրայ, որ լենած է մի քանի  
սիւների։ Երրորդ եռանկիւնածև պատը  
բարձրանալով կրծածկէ շէնքի լայնու-  
թեան մի ծալըր, որի դէմ կամ բոլորո-  
վին բաց է՝ մուտքի համար և կամ դու-  
ռըն անցկացած։ Առաստաղի գերանէն  
կախւած է երկար հաստ շղթան, որմէն  
կրկախեն ունկնաւոր խաղկինը՝ կերակուր  
եփելու, կաթը տաքացնելու և ազնի հա-  
մար, որովհետեւ այգափիսի հիւղերում կր-  
րակը կրվառւի մէջտեղումը և ծուխը դուրս  
կ'ուգալ գուան բացւածքէն։ կան հիւղեր  
էլ, որոնց մէջ, յատուկ ծխնելոյզի համար,

առաստաղէն կըթողնեն մի փոքր բաց-  
ւածք որ կըկոչւի փխերիկ:

### 6. ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ.

Անհրաժեշտ կըհամարեմ նկատել այս-  
տեղ, որ վերջին տարիներս, կարծես, մի  
տեսակ փոփոխութիւն կընշարւի նստա-  
կեաց քրդերի բնակարանների ձեխն մէջ:  
Այնպէս կ'երեի, որ քրդերը կըձգտին ի-  
րենց բնակարանները ձեռվ ու կազմու-  
թեամբ նմանեցնել հայ գիւղացու բնա-  
կարանին:

Չ'մոռանամ շեշտել և այն պարագան,  
որ քրդերն եւրոպականացած՝ կամ ըստ  
իրենց ասենք՝ «քաղաքացիացած» կըհա-  
մարեն այն ցեղակցին, որը այս թէ այն  
կերպ կընմանի հայերին: Քըդու համար  
զարգացման, յառաջադիմութեան նըպա-  
տակակէտը հայկական կեանքն է, ինչ-  
պէս մեղ համար—երոպականք:

Հայի օճառը քրդերի ամենաբարձր  
համալսարանն է:

— «Ախրլ էղը ախրլը ֆըլլան է»  
(հայի խելք ունիս) — կրնշանակէ՝ փիլիսո-  
փայ ես:

---

Դ.

ՔՐԴՈՒ ՀԱՅԸ, ՕՃԱՂԻ ՇՈՒՐԶԸ ԼՈՒ-  
ՍՍԻՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ Ա-  
ՄԱՆՆԵՐ

1. ՔՐԴՈՒ հացը.

I. Թոնիրը (թանտուր, թոնտիր) քըր-  
դերի մէջ գործածական չէ: Հազարէն մէկ՝  
թոնիրի չէք հանդիպիր, եղածներն էլ հայ  
գիւղերումը հաստատւած քրդերի մօտ  
պէտք է փնտռել: Սակայն չըաղացնե-  
րումը կըտեսնենք մենք ուղղակի հայկա-  
կան թոնիրի ծագը—փոքր տեսակը, ո-  
րոնց մէջ կ'եփէ քիւրդ չըաղացպանը պատ-  
ւական բաղարջ (չթթւած խմորէ) պա-  
տահական անցորդների կամ հէնց իրա  
համար:

II. Թոնքի ծառակութիւնը կրմատուցանէ քրդուհուն օճաղի կողը: Օճաղը շինած է կարմիր կաւէ և ունի  $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$  մէթրաչափ բարձրութիւն, իսկ ծեռվ նրան է կիսալուսնի: Օճաղի կողը թեժացած կրակէն «բարկ» դառնալով—շիկանալով՝ կընդունէ հացի թանձրկէկ խմորը և ընդամենը 3—5 րոպէէն կ'եփէ կրպառաստէ նանէ օճաղը (օճաղի հաց):

III. Քրդուհին հաց կ'եփէ և այն սալաքարին վրայ, որ ձգւած է օճաղի ներքեւ և որի վրայէն անպակաս է նւիրական օճաղի կրակը: Երբ բարկ կրակէն ներքեփ սալաքարը տաքացած է կրակ կարած, քրդուհին սալաքարի վրայէն կրհեռացնէ կրակն ու մոխիրը, կրմաքրէ՝ լատուկ այդ նպատակին ծառայող մի լաթով և այնուհետեւ թանձր խմորը կրփուէ սալին վրայ: 5—10 րոպէէն կամ առ առաւելն  $\frac{1}{4}$  ժամէն պատրաստ է «սալի հացը»: Ի գէպ. սալաքարը պատրաստւած է անպայման կամ շերտաքարէ

կամ մոխրագոյն կարծր աւաղաքարէ  
(կորս):

IV. Քրդու ամենաշատ գործաժած հացըն է սաճի (adj—саджъ) վրայ եփածը, որ կրլինի երկու աեսակ—լաւաշ և թանձը:—Լաւաշը օխլաւուով (փայտեալ դլան) բարակացրած խմորն է, որ ամենակարծ միջոցում կ'եփի՝ թէժ կրակի վլրայ կատաղած սաճի երեսին: Թանձը՝ չրալի, ճածունի նման խմորն է, որ օրդդուհին դտալով կրլեցնէ թեփ ցանած սաճին վրայ և 10 րոպէէն կրպատրաստւի փափուկ, բղբուշ սաճի հացը:

Կան տեղեր, ուր հացը կ'եփեն ամեն օր, բայց կան և այնպիսիք, որ մի քանի օրւանը միանգամէն կ'եփեն: Իսկ հացի նիւթերն են՝ գարի, կորեկ, կրլկրլ և շատ քիչերի մօտ՝ ցորեն:

## 2. ՕՃԱՂԻ ՇՈՒՐՋԲ.

Քրդերի համար վերոյիշեալ հացերէն

ամենանւիրականը օճաղի հացն է, որի  
անունով կ'երդւի քիւրզը և նրա ալդ եր-  
դումը աննահանչելի է։ Այդ նշանակու-  
թիւնը, իհարկ է, պէտք է վերագրել օ-  
ճաղին, որովհետեւ քրդու համար օճաղը  
նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ մի  
լուրջ գաղափարականի համար՝ իր իտէ-  
ալը։

Քրդերն ունին մի զարհուրելի անէծք,  
որին կ'ենթարկւին միայն ամենամեծ յան-  
ցաւորները, ալդ անէծքը հետեւեալն է.  
— Օճաղ է՛զը քօռ պի (odjagh éte cor bi)  
— օճաղդ շքանայ, օճաղիդ կրակը մարի,  
օճաղիդ ծուխը չ'բարձրանայ են։

Նոյնպէս ուշագրաւ և ամենափառա-  
ւոր օրհնէնք կրհամարւի հետեւեալը.

«Օճաղ է՛զը շէն պի» — օճաղդ շէն մնայ։

Բալուի մօտ, գէպի արևմուտք, Արա-  
ծանի գետի աջ ափին վրայ, մի գիւղ կայ  
Սէյտիլար (söydilar) անունով։ Սէյտիլարն  
իր անունն ստացած կ'երևի մօտաւորա-  
պէս քուրմ նշանակող սէյիտ բառէն։ Այդ

զիւղում կան մի շարք հին, բազմագա-  
րեան, աւերակ շէնքեր, որոնց մէջ օճաղի  
նման վիմափոր և կերտւած փոսիկներ  
կան. ահա այդ փոսիկները մինչև այ-  
սօր էլ ամենամեծ չերմեռանդութեամբ  
կրպաշտւին թէ՝ Քիւրդ և թէ Հայ ժո-  
ղովրդի կողմէն:

Սէյտիլարի օճաղնե՞րը—ինչ սրբա-  
զան, ինչ դիւթիչ ու պատկառելի բառեր  
են զբանք Բալուցոց համար և որպիսի  
հրաշքներ ժողովուրդը կրվերագրէ այդ  
օճաղներին (ատրուշան?), կարծեմ ոչ մի  
հիւանդութիւն չէ կարող լարատեել, եթէ  
գոնէ Յ անդամ այցելես այդ սրբազան  
օճաղներին, խունկ ու մոմ վառես և մա-  
քուր հաւատքով ալօթես!

Նոյն իսկ Բալու քաղաքում (ս. Լու-  
սաւորչի թաղում, «Քուրաչեան» փողոցի  
վրայ, Արամեանների տանը դէմ) «Ար-  
քիեան» անունով մի օճաղ մինչև 1896  
թւականը չերմեռանդութեամբ կրպաշտ-  
ւէր ինչպէս հալոցմէն ալդպէս և քրդերէն:

\* \* \*

Քրդական առասպելներէն մէկը կրպատմէ հետեւեալը, որ անհետաքրքիր չի լինիր առաջ բերելը.—

«Աստուծոյ ան ու գժոխքի երկիւղը սրաէն հանած մի հարամզատա էշիր քիւրդ՝ սատանային անսալով՝ լկեց իրա հարազատ կոյս քրոջը պատիւը և մեղքէն յետոյ միայն զգալով իրա յանցանքի ծանրութիւնը՝ ծունկ չոքեց գէպի հարաւ ու երկար աղօթեց... աղօթեց ու լացաւ, լացաւ ու աղօթեց, մինչե որ Աստուած ուղարկեց նրա մօտ ձէպրայէլ մէլայէքին (Djèbraël mèlaéqu—Գարրիկ հրեշտակապետ) և Հազրէթի իլիմ թէմու'ամ Սուլէյմանին (Hazréthi ilim thémou' am Souléiman—իմաստութեան Հայք Սողոմոն). Աստուած ասաց նրանց.—Կ'երթաք այդ հարամզատա էշիրին և կ'ասէք, որ մի խլուրդ գալու է ամեն օր, անյալտ ժամերի, միզելու հարամզատա էշիրի նր-

ւիրական օճաղին մէջ. այդ պիտի տևէ  
40 օր, 40 ժամ և 40 ակնթարթ. Եթէ  
հարամզատա Էշիրը կարողացաւ ալդ 40  
օրը, 40 ժամը և 40 ակնթարթը ան-  
թարթ աչքերով անցկացնել՝ ժունկ  
լով օճաղին առջեւ և շարունակ աղօթե-  
լով, այդ գէպըում Սլլահը պիտի ներէ  
հարամզատա Էշիրի—այլ պարագաներում  
աններելի—յանցանքը. իսկ եթէ չ'կարո-  
ղանայ հարամզատա Էշիրը կատարել ալդ  
պայմանը և թէկուզ մի ըոպէ բուն մտնի,  
կամ ժունկը քակէ, կամ աղօթքն ընդ-  
հատէ, այն ատեն մէկ կողմէն խլուրովը  
պիտի միզէ նւիրական օճաղին մէջ և  
միւս կողմէն էլ Սլլահը պիտի անիծէ  
հարամզատա Էշիրին պապենտկան օ-  
ճաղը...»:

Լսելով այդ խիստ պայմանը, որ բառ  
առ բառ արտասանեց Հաղրէթի իլիմ  
թէմու'ամ Սուլէմանը՝ վկայ և պատու-  
հասող ներկայացնելով ձէպրոյէլ մէլայէ-  
քին,—հարամզատա Էշիրը պատասխանեց.

— Ես մեղաւորների մեղաւորս Ալլահի...  
ի մի հիւլէն եմ ու ձեր ոտքին մոխիրը,  
բայց չէ կարելի արդեօք աղաչել Ալլա-  
հին, որ օճաղս անիծելու փոխարէն  
խլէ ինձմէն 7 որդիքս, տունս ու տեղս,  
հետն էլ հոգիս ու ճէհէննէմի փայ ա-  
նէր ինձ...

— Բայց ինչու չընդունեցիր մեր պայ-  
մանը, հարցուց չազրէթի իլիմ թէմու-  
ամ Սուլէյմանը:

— Ծանր է և անհնար, պատասխանեց  
հարամզատա Էշիրը:

— Պայմանէն աւելի ծանր է քո յան-  
ցանքը, նկատեց ձէպրայէլ մէլայէքը: Հա-  
րամզատա Էշիրը ճարահատեալ ընդունեց  
խիստ պայմանը և անմիջապէս սկսեց ա-  
ղօթել անթարթ աչքերով, դէպի օճաղը  
ծունկ չոքած... 40 օր, 40 ժամ և 39  
ակնթարթ այդ դիրքով նա կաղօթէր...  
Ծնկները քար դարձան և ծուլւեցան օ-  
ճաղի առջևի նւիրական քառակուսի քա-  
րին հետ... նրա աչքերը բիւրեղացան,

ծեռքերը դէպի վեր «քութլում» եղան և հարամզատա էշիրի շունչը կտրւեց... Մի ակնթարթով դաւանանել էր հարամզատա էշիրը իր ուխտին և նրա օճաղը թրչւեց խլուրդի մէզով ու Ալլահի անէծքը իշաւ ալդ օճաղի մոխրին մէջ...

— Ալլահը 7 բուռ արիւնս խմող տիւշմանին չ'ենթարկէ թող ալղափիսի անէծքի, կրվերչացնէ ծերուկ քիւրզը խոր «ախ» քաշելով և կ'ստիպէ ձեզ էլ, որ «ամի՞ն» ասէք, որովհետեւ «օճաղի անիծւելը» կատակ չէ...

Հարամզատա էշիրը մինչև ալսօր էլ իրա բիւրեղացած աչքերովը կընալի՝ անիծւած օճաղին վրայ և 7 գոյն արցունքները անընդհատաբար կըզլորւի՞ն քարացած կոպերէն ցած... Ռոյ'է մաշէրին (վերջին դատաստանին) հարամզատա էշիրը նորէն պիտի դատուի, սակայն նրա նւիրական օճաղը, կ'ասեն, ազատւելու չէ Ալլահի անէծքէն...

Ալդ առասպելի մի քանի վարիանդները

կան քրդերի մէջ, որոնցմէ ամենահետաքրքիրը վերև նշանակածս է ու այլնս աւելորդ կրօնակեմ իյնալ մանրամասնութեանց մէջ, այդքանը բաւական համարելով՝ մի հարեանցի գաղափար տալու համար սիրելի ընթերցողներիս քրդու հայեացքների մասին դէպի օճաղը:

\* \* \*

Սլժմ կ'ուզամ նկարագրելու այն առարկաները, որոնք կրգանւին օճաղի շուրջը: Օճաղի մօտ դուք կը հանդիպիք երկաթէ ունելիին (մաշա), շամփուրին (տեստոն-déston), փայտէ թակը (էղրն քուլա — ésen coula), շիշը (կրակախառնի — կէլպէրի — guérbéti), ճաղլին (djaghlin — որ խաչերկաթին կէսն է խսկապէս և կրհանգչի օճաղի երկու հանդիպակաց պրոկունքների վրայ), սաճը, սաճի քերիշը, կասկարան և եռոտանին: Օճաղի ծրխնելոյզին մէջ, 1—2 մէթրաչափ բարձր, զարկած են մի քանի փայտէ կամ երկաթէ

ցցեր, որոնց վրայ կը կախէ քիւրդը իւր  
թրջած գուլպան, շապիկը, տրեխը՝ չո-  
րացնելու համար, ծխի մէջ, օճաղի շեր-  
մութեամբ:

### 3. ՀՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Օճաղէն քիչ վերև, պատին վրայ, ամ-  
բացրած է ճրագդիրը (ճայէ չրախ—djaïè  
tchrakh—ճրագակալ): Յիշենք ալստեղ  
քրդերի մէջ գործածական լուսաւորու-  
թեան առարկաները: Ահա դրանք.

I. Փոքրագիր կաւեղէն ճրագը, որ բո-  
լորովին նման է պատմական ամենահին  
ճրագներին (դրանց իսկ լար և նման նը-  
կարով ժամանակակից գիտնականները  
կ'որակեն կուլտուրական «լոլսը»): Այդ  
ճրագի մէջ կը լեցնեն կտաւահատի և կամ  
էնէկէշէքի իւղ—ձէթ (պէզը), որ կը-  
ծըծւի բամբկէ կամ մանածէ պատրոյգէն  
(միտիլ) ու ճրագի թեքուն անկիւնէն կ'ար-  
ձակէ իր շառագոյն լոլսը: Նոյն ճրագը և  
նրա մի քանի տեսակները գործածական

են նոյնպէս Տաճկա-Հայաստանի շատ հայ  
գիւղերում և նոյն իսկ մի քանի քաղաք-  
ներում (Բաղէշ, Խարբերդ, Բալու, Իեղի,  
Փէրի ևն):

II. Սպիտակ թիթեղէ շատրւան ճրա-  
գը, որի մէջ նաւթը կրվառի և կ'արձակէ  
հեղձուցիչ ծուխ:

III. Մուշամպայ ֆէնէրի, բազմատե-  
սակ լապտերների (ֆոնար) մէջ ամենա-  
շատ տարածւածն է աս, որ կըշինւի՝ շա-  
պիկը թափանցիկ մորթէ, մումակալը—  
ներքեսի թապախը—և կափարիչը—վրա-  
լի խաբախը՝—պղնձէ կամ արոյրէ և կամ  
երկթէ. այդ հետաքրքիր լապտերները,  
որ ֆէնէրմիի (լապտերակալ) ձեռքին մի  
մեթրաչափ կրկախւին և թափանցիկ մոր-  
թէն (գոյնզգոյն ներկած ու մեղրամոմով  
պատաժ) դուրս կըցոլացնեն մռայլ լոյսը՝  
մէջը վառող մումին, և մռմը մարելէն  
յետոյ շապիկը կրծալլւի ու կըննշւի մո-  
մակալի ու կափարիչի արանքումը, որով  
և գրպանում տեղաւորելու յարմար դիրք

կ'ստանայի: Այդ լապտերներն անխտիր կը-  
դորձածւին թէ չայերի և թէ Քրդերի  
մէջ:

IV. Ջամտանը (մոմակալ) նոյնալէս ան-  
ձանօթ չէ քրդուն: Արոյրէ բազմատեսակ  
և զանազան մեծութեան մոմակալները,  
մանաւանդ ցեղապետների խոնախներում,  
գիշերները կրլուսաւորեն քրդու հիւրա-  
սէր սեղանը: Շամտանների մէջ կ'սպառեն  
տաճկա-հայերի ծեռքով պատրաստող ա-  
մենահասարակ ճրագլի մոմը հաստ-հաստ  
պատրոյգներով:

V. Ցեղապետներէն ոմանք իրենց ապա-  
րանքները կրլուսաւորեն՝ սեղանի, պատի  
և կախովի լուսամփոփաւոր լամպերով:

VI. Կ'արժէ յիշել ալստեղ, որ քրդու-  
րնակարանում շատ քիչ անդամներ կրվա-  
ռեն դրանցմէ որեւէ մէկը, որովհետեւ ձմեռ  
ժամանակ օճաղում շարունակ պլազմող  
փայուն կրակը կրլուսաւորէ հաճոյապէս.  
իսկ ամառները՝ չայտաստանի կապուտակ  
երկնակամարի անթիւ լուսաւորները կը-

պէծպծան քրդերի զլսին վերև, համայ-  
նական ննջարանում:

4. ԱՄԱՆՆԵՐ.

Քրդերի մէջ գործածական ամանեղէն-  
ները պէտք է բաժանել 4 տեսակի, ա.  
կաւեղէն, բ. պղնձեղէն, դ. փայտեղէն  
և դ. քարեղէն։ Ես կընկարագրեմ իւ-  
րաքանչիւր տեսակն առանձին և որքան  
կարելի է մանրամասն կերպով։

I. Կաւեղէնները.—Պէտք է նկատել էն  
առաջ, որ բըուտի կամ կաւագործի ար-  
հեստը քրդերի մենավաճառն է, համա-  
րեա, ամբողջ Տաճկաց-Հայաստանում (թէն  
կան ուրիշ ազգերէն էլ աւելի զարգացած  
բըուտներ)։ Բալուի մօտ, Աղլակ կամ Էք-  
ըէկ քրդաբնակ զիւղի բոլոր բնակիչները  
կ'զբաղին բացառապէս բրառութեամբ և բա-  
ռական էլ նուրբ ամանեղէններ կրպատ-  
րաստեն։ Քրդերի մօտ գործածական կա-  
ւեղէն ամանները հետեւելներն են.

ա. Կարաս (քիւփ—Կյը-Կյօն), որ կր-  
լինի զանազան մեծութեան ու ծեխ. սո-  
վորաբար կարասների բերանն ու «օռքը»  
(տակը) միևնույն լայնութեան կրլինին.  
իսկ ծեռվ շատ նման են կախ-խնոցիի:  
Այդ կարգի կարասներէն խոշորները (20  
—60 դոյլաչափ) կրգործածեն ամպարի  
տեղ: Կարասների փորերը (զրսի երեսնե-  
րը) յաճախ զարդարւած են շատ տեսակ  
նախիշներով ու դժագրութիւններով:

Այդպիսի կարասներէն մէկին մէջ մտաւ  
առասպելական ամենակարող շատուկ պա-  
ռաւը («Քիւփիէ պինան») և բարձրացաւ  
մինչև եօթներորդ երկինք՝ իր հետ ման  
ածելով բազմաթիւ մարդկանց: «Եղան  
թերահաւատ մարդիկ, կ'ասեն քրդերը,  
որոնք այդ հրաշքը վերադրեցին «քիւփիէ  
պինան կէօկէ շըխան» պառաւի շնորհ-  
քին, բայց իսկապէս հրաշագործը կարա-  
սըն է... Զեք տեսներ՝ ինչպէս կրպատաս-  
խանէ կարասը քո ամենափոքը ձայնին  
անդամ (կ'ալձագանքէ). կրպատամեն, թէ

կարասների նախահայրը մարդ է եղել  
և անիծւելով է հող գարձել, ապա խո-  
րամանկ բրուտները՝ կաղապարելով եր-  
բեմնի մարդ-կարասին՝ նրա օրինակները  
շատացրել են (Առասպել):

բ. Զէօչելը (tcheutch—չյչի—«բղող»),  
որոնք նման են կարասի կէսին և կրգոր-  
ծածւին զանազան հեղուկ պաշարների  
համար (ռուփ—պէքմէզ, ծէթ, մեղր են):

գ. Կիւլէճներ (güvedj-ցուեճյ-պտուկ,  
պուտուկ) զանազան ձեւերով. մի մասը,  
որ շինւած է աւելի ազնիւ ու բարակ  
կաւէ, կրծառայէ որպէս խաղկին՝ կերա-  
կուր եփելու համար: Խիստ յարգի է  
պտուկի մէջ եփած խաշը, սինկիրը, տէօ-  
չէօրպան են: Աւելի կոշտ տեսակների  
մէջ կրպահեն իւղ, պանիր, չորթան են:

դ. Քառզան (կրհնչւի իրը քիէրդիէն—  
quièrghién-քերգին) որ կրծառայէ կոնքի  
տեղ և երբեմն էլ որպէս սկաւառակ:

ե. Լուլիկ կամ լիւլիկ (luillic-լոլնիկ),

կրծառալէ ջրածիկի (իւպրէխ) տեղ, մանաւանդ ապտէսթ-ի ժամանակ:

զ. Սիւզկէչ (süzguëtch—քամոց, քամիչ):  
է. Չանախ. մօտ 10 տեսակ ափսէներ կան կաւէ շինած. Խոկ չանախ-չէօմլէք ասելով՝ պէտք է հասկանալ աման-չաման:

ը. Քիւրդ ցեղապետները կաւէ խողովակներով (փոռղանկ) աղբիւրի ջուրը կրտանին ապարանք: Փոռղանկը աղուգայի գեր կրխաղալ:

թ. Հասդիր (hastir—տաշտ):

ժ. Սումախի, ջրի ամենամեծ կուժն է:  
Ժա. Սումախիի փոքրերին կրկոչեն հապանա (habana):

Ժբ. Քառակները նոյնպէս ջուր լեցնելու փոքրիկ ամաններ են, ծեռվ նման ջրածիկներին:

Ժդ. Գըլգըլիկներ, քառակներէն էլ մանըր ամաններ ջրի համար, որոնց Բալուցիք «բաղիկ» էլ կ'անւանեն:

ԶԵՒ այդ ամանները գործածական են  
հալելի մէջ էլ:

---

II. Պղնձեղէնները. — Քրդերն իրենց  
պղնձեղէն ամանները ձեռք կրերեն Տաճ-  
կա-Հայաստանում Հայ պղնձագործնե-  
րէն, որոնք բաւական զարգացած են այդ  
արհեստում ու կրպատրաստեն շատ տե-  
սակ իրեր։ Անւանի են եւդոկիոյ (Թո-  
քաթ) պղնձեղէնները և են հետեւալը.

ա. «Խավուռմայի» համար առանձին  
լայն ու ցածլիկ կաթսան կրկոչւի Նըռխա  
(Nerkha-Խրքա) և է կոնտաձե։

բ. Պուլզուր խաշելու համար իւրա-  
քանչիւր գիւղ կամ համալնը ունի իրա  
1—2 հսկայական՝ խորունկ, չորս ունկնա-  
նի, հաստատաշէն կաթսան. Եթէ գիւղը  
չունի՝ գիւղապետը կ'ունենալ։ Երբեմն էլ  
մերձակայ 2—3 գիւղեր կրգործածեն մի

հատ, վճարելով որոշ վարձ նրա տիրոջը <sup>\*)</sup>:

գ. Թէնմէրէն, գազանլրիսը, խուշխանան և աշխանան խաղկինի զանազան տեսակներն են:

դ. Սիդիլ (sitil) նոյն ծառայութիւնը կը մատուցանէ ինչ որ դոյլը:

ե. Թափա (thava) պոչաւոր և ունկնաւոր տապակներ:

զ. Պօշխապի (bochkhabi - бошхаби) և թէփսի (thépsi-тепси) ափսէների շատ տեսակներն են գրանք, որոնց հետ պէտք է լիշել և լէնկէոը (լանկառ=լայն-կեռ) և թապախը (պնակ):

է. Սէնի կամ Սինի (simi-сими-խան). Փոլատ (մատուցարան):

ը. Թաս, պոչով թաս, սրճաման (ճէ-զիէ), կովկիթ կամ կթոց, կումկում կամ

\*) Հայերի մօտ նըռիս ան և ձաւարիկա թագան եկեղեցիների սեփհականութիւնների:

կիւկիւմ (giigüm-гюгюмъ-սափոր), մէօշէօֆէ (кружка), բողկի քերիչ (կըլինի և թիթեղէ), շերեփ, ձագառ, քամոց, քաւկիր, զառֆ (zarf - зарфъ - բաժակակալ) ևն ևն:

Ժ. Կոնք (Էլ լէկէնի-էլ lèguèni-эл легени) և ջրածիկ (իւպրէխ):

Ժ. Կոնք (լէկէն՝ կերակրի և խմորի), տաշտ (թէշ, թէշթ, թաշթ):

Ժա. Էվ-համամի (év-hamami-эвъ гамам-իլքարան). յեղապետների մօտ միայն կրհանդիպենք այդ ամանին, որ մօտ 1—1<sup>1</sup>/<sub>2</sub> մէթը խորութեամբ և դրա կէսին չափ էլ լայնութեամբ՝ կրզործածւի միայն բաղանիքում, մէջը չուր լեցնելու համար:

Քրդերի մէշ շրջող ոչ մի արհեստաւոր ալնալիսի լարգանք ու հիւրասիրութիւն չիգաներ քրդու կողմէն, որքան հայ պղնձագործ-անագագործները (խալայնի, փախըռնի, խազաննի, կլէկնի), որոնք տարին 2—3 անգամ իրենց փուքսովն ու

գործիքներովը և մի բանի աշկերտներով  
կ'ենեն զիւղերը ու արօտատեղերը՝ քըր-  
դերի պղնձեղէնները կարկատելու և կլէ-  
կելու համար:

---

### III. Փայտեղէնները.—

... Խնոցի, որի 2 տեսակին կըհանդի-  
պենք քրդու մօտ, այն է՝ մեղանում  
յալտնի կախ-խնոցին, բարակ-երկար ծե-  
ւով, որ առաստաղէն կամ ժառի ճիւղէն  
կախած չւաններին վրայ անցկացրած՝  
քրդուհին կրծօնէ նրան օդին մէջ և ձայ-  
նէն կ'իմանայ կարադի պատրաստ լինելը  
կամ չ'լինելը: Երկրորդ տեսակը՝ լայնկէկ  
ու կարճ՝ մի բարձի վրայ պառկեցրած,  
դետնի վրայ, կըշարժեն յետ ու առաջ  
մինչեւ կարադի պատրաստւելը: Ի դեպ-  
քրդերը, ինչպէս և տաճկահայերը, կարա-  
գը կըհանեն մածունէն և ոչ սերուկէն:

— Սպասի՛ր դու, կ'սպառնայ քիւրդը,  
քեզ ցոյց կուտամ՝ մածունը եղէն կ'ելնէ,

թէ՞ եղը մածնէն», ալսինքն՝ տեսնենք  
ուժ ասածը կըլինի:

բ. Խմօրի տաշտ՝ նեղ ու երկար, սրա  
փռքը կըկոչեն թեքնէ:

գ. Քիւլէկը կամ Քուլակը վայտեայ  
դոյլնէ, որի բարակ շրջանակները (խաս-  
նախ) հայ խղարճիները (տախտակ քա-  
շողները) կըքաշեն կաղամախէ կամ խոչ  
կաղնիէ և կըվաճառեն քիւլէքնի (դոլա-  
րար) ազգակիցներին:

Բալւայ Պաղին և Սըին դիւղերի հայ-  
երը կըպարապին ստւար մեծամասնու-  
թեամբ քիւլէկի շրջանակներ պատրաստե-  
լով: Յաճախ «Պաղընցի» կամ «Սընցի»  
ասելով Բալուցին կըհասկանայ խղարճի-  
ներին:

դ. Տոլչա (doltcha-долча), քուլակի նիւ-  
թէն, աւելի փոքր է և կըժառալէ թա-  
սի տեղ:

ե. Խորունկ չանախներ, որոնք ափսէի  
տեղ կըգործածւին:

զ. Շերեփներ (չէմչէ) և դդաղներ (դօշ.)

վերջինների շատ տեսակները կլինին—կլորու խորը, հաւկթածե., երկդիմի (երկու ձայրին էլ գդալ շինած միակտուր փայտէ), տափակի կրշինեն տոսախէ, ծիրանէ, կաղամախէ և այլ փայտերէ։ Ստէպ գրդալների կոթերը զարդարուն են նախշերով։

Է. Թոլիկ (tolig-толигъ), որ նման է փռքը արկղիկի, տուանց կափարչի, և կրծառայէ գդալնոցի տեղ։ Դոլիկի կողքէն կախւած է կաշիէ մախաթամանը։

Ը. Թաթիկ կամ տաշտի քերիչ։

Ձ. Չորթան հարելու թաղարը կրշինւէ թէ՛ փայտէ և թէ կաւէ ու թալուցիներէն կրկոչւի չորթընար (չորթանա-հար) կամ հասդիր։

Ժ. Փայտէ կրշինւի և սխտործեծը իր կոթով միասին։

Ճա. Ցիշենք նաև խոնչա՛ն (խոնча), որ ցածլիկ և զանազան ձեի ու մեծութեան սեղանն է քրդու։

Ժբ. Արանց հետ դնենք և ջրդղումի

ամանները, որոնք կըդորժածւին փառչի  
և թասի տեղ:

IV. Քարեղինները.—

ա. Սանտը իրա տեսթիով (désti-կոթ),  
որ կըդորժածւի կորկոտ, ձաւար, կըտա-  
ւահատ, շուշմայ ևն մտնրացնելու՝ ծե-  
ծելու համար: Սուրբն էլ կըծեծեն սան-  
տի մէջ, բայց հարուստներն ու ցեղապետ-  
ները ձեռք կըբերեն յատուկ սուրճ աղա-  
լու արոյրէ աղօրիք:

բ. Երկանաքար (էլ տէկիրմէնի), որով  
կ'աղան զանազան հացահատիկներ: Նոյն  
բանով կ'աղան քրդերը և չորացրած թու-  
թը, որ լաւ չորացնելէ յետով կըմանրացը-  
նեն ինչպէս ալիւր և կնուճների մէջ կը-  
պահեն, 1—2 ամիս վերջը աղացւած թու-  
թը «կըծլի» ու կըդառնայ մի փառաւոր  
ուտելիք: Ի դէպ. թութի աղալը մի ա-  
ռանձին հանդիսաւոր երևոյթ է քրդու-  
տանը, ուր կըհաւաքւեն մի քանի բարե-

կամներ և ուհիներ ու հաղար ու մի կատակներով, կերուխումով, ուրախութիւններով կ'աղան չախիրէ (պաշար) թութք Ս.խորժելի է, մանաւանդ, այն մոմենտը, երբ աղացւելիք թթերէն մի քանիսը մի փոքր թաց լինելուն պատճառաւ երկու աղօրիքների արանքումը կրծնշւեն ու կրգուացնեն մի աեսակ պաստեխ, որը և կրգժարացնէ աղալու գործը, մինչեւ որ վերցնեն վրայի երկանը և պաստեխը պոկեն քարերի կրծքէն։ Այդ պաստեխի վրայ ի՞նչ կատակներ, ի՞նչ կռիւներ կանեն՝ միմեանց ծեռքէն խլելու համար։ Շատ անդամ քրգու խորամանկ լամուքը՝ իւր հօրը կամ մօրը օգնելու պատրւակով կրնստի աղալու և մատը ծածուկ թրբշելով՝ մի կերպ կրթացացնէ երկանաբարի պոկունքը։

Մակրիկ, կրկանչէ մի ըոպէ յետոյ, երևի թաց թութ է ինկել որ ծանրացաւ քարը։ Կրվերցնեն վրայինը և պատրաստ է արհեստական պաստեխը։

Տարակոյս չ'կալ, որ ալդքան չեն մի-  
այն բրդերի մօտ գործածական ամաննե-  
րը—շատերը վրիպած են յիշողութենէս.  
բայց յոյս ունիմ, որ հետզհետէ պիտի  
յիշեմ և յետագալ հատորներէն մէկին  
մէջ պիտի տեղաւորեմ յաւելւածի տեղ:

---

b.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ.

---

Երկրագործութիւնը քրգու մօտ մնացած է ամենախոր նահապետական ծեխ մէջ: Անատոլիական թիւրքիան առհասարակ զարգացած երկրագործութիւն չունի, բայց կան շատ տարրեր, որոնք այսպէս թէ այնպէս մի քանի քայլ լառաջադիմած են. հայերը, լոյները և մասամբ տաճիկները արգէն ըմբռնել են երկրագործութեան հին սիստէմի անպէտքութիւնը և օրբատօրէ կ'իւրացնեն նորագոյն սիստէմը: Այդպէս չեն քրգերը: Միակ բարեփոխու-

թիւնը, որ նկատելի է քրդու մօտ, դա  
զտիչ մեքենան է, որի մասին ես պիտի  
խօսեմ ներքեռում։ Նստակեաց կամ հողա-  
դործ քիւրդը առհասարակ կրխուսափէ  
բարդ աշխատանքէ և նա երկիրը կրծշակէ,  
թէև չարաչար աշխատելով, սակայն բա-  
ւական թոլլ, անխնամ կերպով՝ առանց  
ուշք դարձնելու իր պապենական զբաղ-  
մունքի հէմտատը լինելուն։

Չնայած սակայն այդ ամենին, քրդերը  
կրցանեն՝ գարի, կորեկ, կըլկըլ, ցորեն,  
եղիպտացորեն (լազութ-ուայ-մասը), ոսպ,  
սիսեռ, լորիա, շուշմաչ կամ կնճութ, կտա-  
ւահատ, էնէկէչէք, առւոյտ, սեխ, ձմերուկ,  
վարունդ, պատինջան, գդում, պղպեղ,  
սոխ (որի համար հոգի կուտաչ քիւրդը),  
սխտոր, բողկ, տակ, ճուլպանտ, քուշնալ,  
պօչ-պօչ, կանեփ և բամբակ։

Քրդերի ալգիներում և պարտէղներում  
գուշ կրհանգիպիք հետեւեալ ժառերին։—  
տանձենի, խնձորենի, սալորենի, բալի,  
կեռասենի, ծիրանի, թզենի, նշենի, սեր-

կելի, դեղօի, թթենի, ալունչի, վռնչենի,  
բեեկնի, փշատի, ուռի, բարդի, աքա-  
սիա, կաղնի, այդպէս և խաղողի որթին:

Այդիները կենդանիներէն ու ճամբորդ-  
ներէ պահպանելու համար նրանց շուրջը  
կրպատեն փշէ ցանկով (չափար):

Ծառերի պատւաստումը յայտնի է քրր-  
գերին 2 տեսակ. ա. Պատւաստելիք ծա-  
ռի բարակ և նազուկ մի ճիւղէն կը հա-  
նէ կլոր շապիկ-կեղեւը, առանց ճղելու և  
այդ շապիկը կ'անցնէ միւս ծառի նոյն  
հաստութեան մի ճիւղի վրայ՝ նախ այդ  
ճիւղը շապկահան անելով:

բ. Ճեղքելով մի առողջ ճիւղի շապիկը՝  
այդ ճեղքին մէջ կ'անցկացնէ պատւաստ-  
ւելիքի շապիկը և վրայէն ամուրկէկ թե-  
լեր փաթաթելով՝ կրկապէ:

Քրդերն հողը կրպարարտացնեն 2—3  
տարին մի անգամ կենդանեաց ազրունը  
շրում լուծելով և այդ ազբակին շրով  
արտը ոռոգելով:

Այդ ընդհանուր տեղեկութիւնը հա-

մառօտակի լիշելէ յետոյ անցնենք Երկ-  
րազործական գործիքներին, որ հետեւել-  
ներն են.—

I. Արօր, 2 տեսակ—Երկթէ խոփով և  
սրածայր փայտով:

II. Ուռերով հիւսած տափակ ցաքան:

III. Մանղաղ: Գերանղիի գործածու-  
թիւնը մտած չէ:

IV. Երկանիւ սայլ, որին կը լծեն դո-  
մէշներ կամ եղներ: Սալլերի անիւները  
ունին ամբողջ մակերեսովթ՝ ծեփած կըպ-  
րով և ծւի կեղեռով: Սալլի սուր ճռողջը  
լսելի է մի քանի վերստ հեռւէն:

V. Երկփեղանի փայտեալ կամի, որի  
ներքև հազցրած են գալլախաղի սրածայր  
կտորւանք:

VI. Երկժանի (վիլա) և եօթժանի հո-  
սկիիներ:

VII. Բահ, փետատ, քուլպա (բրիչ),  
թի (փայտէ և երկաթեալ), մասսա կամ  
զուկութա (բարակ-երկար ծօղ՝ ծալրին  
սուր երկաթ-մեխ-անցկացրած, կենղանի-

ներին քշելու համար), հոտոց (կոր դա-  
նակ՝ ալգեգործութեան մէջ կրգործածւի),  
սակը ևն ևն:

VIII. Ցորենն ու միւս հացահատիկները  
յարդէն կրզատեն՝ թեղը հոսելիով քա-  
մուն տալով. կան, սակայն, տեղեր, ուր  
արդէն մտած են զտիչ մերինաները (Են-  
յակա):

IX. Բամբակի մէշէն սերմը զատելու  
համար դործածւող դործիքը կըկոչեն  
ճըռճըռ. երեխ ալդ անունն ստացել է  
դործելիս արծակած ճռճոռոցի պատճառով:  
Կան քրդեր, որոնք դիտեն և ծխա-  
խոտի մշակութիւնը:

Զ.

## ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ.

Բոլոր քրդերի մէջ ընդունւած և հաճոյական զբաղմունք է որսորդութիւնը,  
որ Յ ճիւղերի կըբաժանւի.

Ա. Թռչնորսութիւն.

Բ. Վայրենի կենդանեաց.

Գ. Զկնորսութիւն.

Խօսենք իւրաքանչիւր ճիւղի համար  
առանձին:

I. Թռչնորսութիւն.

Թռչուններէն կ'որսան՝ կաքաւ, աղամի,  
վայրի բաղ և սագ, թթակեր

(թութ խուշի), ճնճղուկ, լորամարդի և ։  
Թռչուններ որսալու համար կրգործա-  
ծեն կամ հրացան՝ ուղղակի գնդակահա-  
րելով և կամ ցանցերի մէջ նրանց ոտ-  
քերը խճճելով։ Հետաքրքիր է մանաւանդ  
կաքաւի որսը, որ մանրամասնօրէն կր-  
նկարագրեմ։

Իմանալով մի կերպ, թէ ո՞րտեղ է հաւ-  
կիթ ածել մարի կաքաւը և ծաղ է հա-  
նելու՝ քրդերը կրհետեւն նրանց, մինչեւ  
որ ծագերը գոյանան ու մի քիչ էլ մե-  
ծանան. դեռ ևս թռչելու անընդունակ  
վիճակում քիւրդը անզէն դարան կրմտնի,  
երբ առաւտեան լուսաբացին, մարին  
շրջապատւած իր նազելի ծագուկներով  
կ'երթալ ջուր խմելու, ծագերին խմցնելու  
և տոտիկները մաքրելու, — յանկարծ դա-  
րանամուտը կրյարձակւի և կրտիրանայ  
ծագերին։

Ահա այդ ծագերէն մի-մի զոյդ (արու  
և էդ) մեծ խնամքով կրպահէ քիւրդը մաս-  
նաւոր վանդակներում։ Ամենակարճ ժա-

մանակէն կընտելանան կաքաւները և այ-  
նուշետե կըհաշւին քիւրդ ընտանիքի  
անդամներ. նրանք աղատ համարձակ կը-  
շրջին տան մէջ և ոչ ոք չի համարձակիր  
թէկուզ մազաչափ վշտացնել նրանց. ալդ-  
պիսի յանդուզին կ'սպասէ խիստ պատիժ  
տան նահապետի կողմէն: Միաժամանակ  
քիւրդը իւր գրդռող, տռ.փոտ սուլոցով  
ուղած պահուն կարքնձելու կընտելացնէ  
կաքաւներին: Երբ արդէն բաւական կը-  
մեծանան կամ ուրիշ խօսքով արբունքի  
կըհասնին՝ տէրը նրանց կըտեղաւորէ ա-  
ռանձին-առանձին վանդակներում: Միա-  
սին ծնած, միասին սնած արուն ու էզը  
իրենց նոր աքսորավայրերում—թէև ի-  
րարմէ հազիւ մի քանի մէթը հեռուն,—կը-  
կարօտին միմեանց ու իրենց սրտամաշ կա-  
րօտը փարատելու համար կ'սկսին փոխ  
առ փոխ երգել. ամենամաքուր, խսկական  
սիրոյ մրմունչներն են ալդ երգերը! Օրա-  
կան մի քանի անդամ տէրը նրանց կ'ար-  
ժանացնէ իրար տեսութեան: Այժմ նրանք

սիրահարւած մի զոյգ կրկազմեն. դրանում տարակոյս չ'կայ. հետեւարար ժամանակն է, որ տէրը շահագործէ նրանց ալդ սիրահարութիւնը: Կաքաւներն ալդ միջոցներումն է, որ ծառայելու են իրենց տիրոջ նպատակին:

Կամենալով գնալ կաքաւ որսալու՝ քիւրդը 3—4 օր սիրահարներին չի միացներ և ալդպէս կ'առնէ իւր հետ նրանց ու կրբարձրանալ սարերը կամ ուր որ կաքաւ կայ: Երկու վանդակները իրարմէ մի քանի տասնեակ սաժէն հեռաւորութեան վրայ կրկախէ ծառերէն կամ կրդընէ ժայռերի խոռոչներում. իսկ ինըը կրհսկէ մէշտեղումը:

3—4 օր շարունակ միմեանց կարօտով տոչորւող սիրահարները կ'սկսին սրբտակոտոր գալլալիկով գեղգեղել իրենց դառնագոյն վիշտը: Հրաշալի՝ բայց և յուղի՝ մեղեղի, որ կրգրաւէ լերան ազատ կաքաւներին ողբացողների շուրջը: Երբեմն հարիւրաւոր կաքաւներ կրհաւաքւին սի-

քոյ մեղեղին ունկնդրելու. սակայն, ի մեծ  
գժրադառնութիւն նոցա, որսորդի լարած  
ցանցը կամ հրացանի գնդակիկները կը-  
խլեն նրանց աղատութիւնը:

Որսը վերջանալէն յետոյ՝ տէրը իւր  
«երկու աչքի լուսերին» կըհասցնէ իրենց  
մուրազին—կը ներփակէ նրանց մի վան-  
դակում և էրվերապառնայ տուն:

Միւս թռչուններին մեծաւ մասամբ  
կըգնդակահարեն:

II. Վայրենի կենդանեաց.

Որսի կենդանիներ կըհամարւին՝ աղ-  
լէսը, նապաստակը, այծեամը, եղնիկը,  
ճագարը, սկիւռը, կինճը, շնագայլը,  
գայլը, արջը, ողնին ևն ևն, որոնց որ-  
սալու համար քրդերը կըգործածեն զա-  
նազան թակարթներ, որսորդական շներ  
և զէնքեր: Որսի մորթիներէն բաւական  
արդիւնք կ'ստանան քրդերը:

III. Զենորսութիւն.

Ամենահետաքրքիր որսորդութիւնը  
քրդերի մօտ իսկապէս ծկնորսութիւնն է:  
Քրդերը բնակւելով զրառատ չայաստա-  
նումը, բնականաբար, պէտք է հետամուտ  
լինէին և ծկնորսութեան, քանի որ դա ա-  
մենագեղեցիկ գւարճութիւններէ մին  
է: Ըստ որում քրդերը ծկնորսութեան վր-  
բայ կրնային լոկ որպէս գւարճութեան  
միջոցի:

Մեծ քանակութեամբ ձուկ որսալ և  
նիւթապէս շահւել՝ ալդ քրդու մտքէն ել  
չ'անցնիր, սպառող չ'լինելու պատճառաւ:  
Քիւրդը կ'որսայ այնքան, որքան կըսա-  
ւականանայ իրա ընտանիքին մի կամ մի  
քանի օրւան: Բայց մենք նայենք որսա-  
լու կերպերին: Ահա.

ա. Գետը կտրել, այգպէս կըկոչւի ծրկ-  
նորսութեան այն ճիւղը, որ գետի լայ-  
նութեան կէսը կամ մի մասը ծանծա-  
ղուտ տեղերում, քարերով կըպատեն մի

քիչ էլ հոսանքին դէմ գնալով։ Ապա բաւական վերերէն գետի կամ գետակի ջուրը կրգարծնեն դէպի այն կողմը, ուր պատքաշած չէ, որով պատած կողմը ջուր չի վազեր և մէջի եղածն էլ պատի փոքր ծակոտիներէն կը քամւի ու ձկները կրթողնէ արհեստական ցամաքում։

բ. Մաշալլայով որս. դու մի ասեր, որ գիշեր ժամանակ լոյսը կրգրաւէ պաշարիւն ձկներին էլ, այդ պատճառով ահա քրդերը մի՛ ահազին խուրծ զիւրավառ փայտ (մարխ, որթլող, կւենիի ճիւղեն), վրան անպէտք լաթ փաթաթելով ու ծիթոտելով կրշինեն մեծ մաշալլան (չա՞) և կրտանեն նրան գետափի։ Քրդերէն մի քանիսը ծեռքերին ունին՝ նիզակի նման՝ եղէզի ծալրին անցկացրած երկժանի երկալթ խշտիկ, իսկ մի ուրիշը կրվառէ ծեռքի մաշալլան ու գետեղրէն կը քալէ հոսանքն ի վեր։ Զ' պէտք է մոռանալ, որ մութ գիշեր է՛ Զկները տեսնելով մաշալլալի շացուցիչ լոյսը՝ կրծօտե-

նան ափին, ուր խշտիկաւորները արթ-  
նութեամբ կրհոկեն ու մէն մի մօտեցող  
խռշոր ձկան կողէն ծակելով կրնետեն  
ցամաք:

գ. Թունաւորումն. ծէնդեղ (պալուղ օ-  
թի) կուսող սիսեռի մեծութեան գեղա-  
հատերէն մի քանի հատ մոխրի նման  
մանրելով՝ կրշաղեն ալիւրի հետ, խմոր  
կրշինեն: Այդ բաղադրութենէն կաղնի մե-  
ծութեամբ զնդիկներ շինելով՝ մէկիկ-մէ-  
կիկ կրնետեն գետին մէջ. մինչ այդ՝ մի  
քանի ըրդեր զետի ընթացքի հետ կրվա-  
զեն և դիւրութեամբ, խշտիկով կամ ուղ-  
ղակի ծեռքով, կ'որսան՝ քիչ վերև թափ-  
ւած գեղահատերէն ուտելով զինովցած  
կամ թունաւորւած ծէներին, որոնց է  
ոմանք ոչ միայն ափերին կրմօտենան կի-  
ուամեռ վիճակում, այլև շատերը ինքզինք-  
նին ուղղակի ցամաք կրնետեն: Այս կերպ  
որսացւած ձկներին էլ կուտեն անխտիք:  
դ. Լասթերով. լասթը կամ քէլէկը  
պատրաստ է. նրա վրայ կրնստեն մի քա-

նի քրդեր, որոնցմէ երկուսը բռնած են  
լայնաղիր ուռկանի երկու ժայրերը, ու  
կրգնայ լասթը զետի հոսանքին հետ: Ուր  
որ վարպետ ձկնորսը կրկարծէ թէ ձկներ  
կան, այդտեղ լասթը երկուսի կրբաժան-  
ւի և երկսի մէջ կրգոյանայ բաւոկան  
լայնկէկ մի աարածութիւն, ուր կ'իշե-  
ցնեն ուռկանը: Մի քանի րոպէէն լասթա-  
մասերն հետզհետէ կրմօտենան, որի ըն-  
թացքում ուռկանակալներն (սաթմանի)  
էլ կրհաւաքեն ուռկանը և ի վերջոյ կ'առնեն  
միացած լասթին վրայ, լիբը ձկներով:

Ե. Թանտուրլամա (thandourlama). ձր-  
մեռն է, զետի երեսը սառած և մակերե-  
ւոյթը ծածկած է սառուցի հաստ շեր-  
տով: Ուր որ կրկարծւի թէ ձուկ կայ՝  
վարպետը կրհրամայէ ընկերներին ծակել  
սառուցը թոնիրի ձևով: Այդ գործողու-  
թեան միջոցին մի քանի ուրիշ քրդեր՝  
փայտերով ու կացիններով կրթիսկթըի-  
կացնեն ծակւած տեղի շրջակալքը՝ ձրկնե-  
րին մէջտեղումը կենդրոնացնելու նրաւ-

տակով։ Վարպետը զգուշութեամբ կ'իշեցնէ սամթմա՞ն (ուռկանը) ծակէն ներս և մի քանի բոպէ ուռկանի ցանցերը ցընցոտելէ յետոյ՝ կըքաշէ դուրս ձկներով բեռնաւորւած ուռկանը։

Երբեմն սառուցի այն շերտը, որի վրայ կանգնած են մի քանի տասնեակ մարդիկ, պոկւելով համատարած մայր-սառուցէն՝ իր հետ տարել ու խեղդել է մարդկանց բազմութիւնը։

զ. Մեծ կլթոցը կամ սեփէթը քիւրդը կրգնէ դետի հոսանքին դէմ ու կըքարէ շուրջը որ ջուրը չիտանի։ Մի կամ երկու օր յետոյ կուգայ քիւրդը և զգուշութեամբ ու մէկէնիմէկ կըվերցնէ կլթոցը ձկներով մէկտեղ։

է. Երբեմն էլ ծերունի քիւրդը, ձանձրութը փարատելու համար, կ'առնէ կարթը՝ երկար չւանի ծայրն անցկացրած և կ'երթայ մերձակալ դետը ձուկ որսալու։

Ե.

## ԶԳԵՍՏ ԵՒ ԶՈՐԴ.

1. Քիւրդ տղամարդու հագուստը.

Քրդական բազմազան ցեղերը ունեն  
զգեստների էլ բազմազան տեսակներ, այն-  
պէս որ՝ բոլոր քրդերին յատուկ մի տա-  
րադ հազիւ թէ կարելի լինի ցոյց տալ:  
Բայց կարելի է ձեծամասնութեան մօտ  
հանդիպել հետեւեալ հագուստներին:

I. Լայն, երկար ու տձեւ մի շապիկ,  
որի քանցքները կրհասնին մինչեւ քրդու-  
սրունքները. իսկ թևերը՝ որքան կ'իջնեն  
դէպի ծեռքը, ալնքան կրլայնանան, ալդ-  
պիսով քրդու շապիկ թևերը կրգուացնեն

մի մեծ եռանկիւնի ու դեռ մի մէջրաշափ և աւելի կրկախւին ծեռքերէն ցած. բիւրդը իրար կցելով (հանգուցելով) շապկի թերի ծալրերը՝ զոյացած օղակը կ'անցունէ ճիտը: Շապիկը կրպատրաստեն ճերմակ կտաւէ, որ կրգործեն տաճկահայերը և որին քրդերը կրկոչեն «ճավ» (djav) կամ «ճէօ» (djeu):

II. Նոյն կտորէն, կամ բրդէ և կամ վերջապէս մազեղէն կտորէ, կրպատրաստւի քրդու լայն շալվարը, որ կրփոխարինէ վարտիքին ու անդրավարտիքին:

III. Սախ (sakh-սռնապան), որ կրգործեն բրդէ:

IV. Գուռլպը (courec) մեր գուլպան է:

V. Գուռլպի վրայ էլ, կօշիկի տեղ, կրհագնին տրեխ (չարօխ):

VI. Շապկի և շալվարի վերին մասին վրայ կրփաթաթէ քիւրդը զանազան նիւթերէ պատրաստւած գօտի՞ն, որ կրբոլորէ քրդու մէջըլը մի քանի անգամ, ու-

նենալով 5—10 մէթքաչափ երկարութիւն:

VIII. Որպէս բաճկոն կամ որպէս վերարկու ըրդերը կրհագնին՝ ամառը միլթան (miltan) կամ սալթա (salta) և կամ չէքպան (tegéquban), իսկ ձմեռը՝ շարը (chapec) կամ ապա (ава-аба):—

ա. Սալթան կամ միլթանը (մինթան?) իր ծեռվ շատ նման է մեր բաճկոնակին (жилетка), սակայն կ'ունենան թեեր և առջեւի փեշերը զուրկ են որևէ օղակ-կոճակէ: Սալթայի կտորն է պարզ կտաւ կամ չուխայ: Նոյն ծեռն ունի՝

բ. Չէքպանը, բայց թեերին ներքեր ճեղքւած է և բամու առջեւ կրտասանի օդին մէջ: Չէքպանի կտորն է՝ թանկագին առւի, ցփսի, ֆասոն ևն: Հարուստ ըրդերն իրենց չէքպանի կուրծքը, օծիքը և թեքերի ու փեշերի եղրերը ոսկեթել կ'ասեղնագործեն, զանազան ծաղիկներ, եղրագարդեր:

գ. Շաբրզը իւր ձեռվ լար և նման է

մեր պիճակներին (նույնական), սակայն թե-  
ւերը կրլինին կարե, մինչև արմունկը: Նա-  
բրդի նիւթը ճաղեղէն է կամ բրդեղէն,  
որպիսի նիւթէ կըպատրաստէ նաև  
դ. Ապան, որ իւր ձեռով նման է կող-  
կասում գործածական եափնջիներին:

VIII. Սպիտակ թաղեքէ զլխարկը  
(քէչէ քիւլլահ) սովորաբար կրլինի սրա-  
ծալը և քչերը միայն՝ կլոր-թասակաձեւ:  
Քիւլլահը քրոլու զլխին կիսով չափ ծա-  
ծկւած է մի քանի տասնեակ եազմանե-  
րով, շալերով, թաշկինակներով, թիւ-  
լերով: Քիւրդ տղամարդը մեծ հաճուքով  
կըզոհէ օրական 1—2 ժամ, զարդարելու  
համար իւր քիւլլահը: Թէև մեղ նման  
մահկանացուների համար անտանելի է  
քիւլլահի երբեմն մինչև 10—15 ֆունտ  
ծանրութիւնը, բայց քիւրդը սովոր է զը-  
րան. առանց քիւլլահի նա «կրկարծէ  
թէ զլուխը վրան չէ»:

Կամ հարուստ քրդեր, ցեղապետներ,

աղեկզատէներ, որոնք կըհագնւին իրենց  
դրացի տաճկաց, պարսից և հայոց նման:

2. Քրդուհու հագուստը.

I. Իր շապկին համար քրդուհին կը-  
դորձածէ՝ կամ սպիտակ կտաւ (ճավէ  
ուրբի-djavè sepi), կամ կարմիր կտաւ (պիթ-  
լիդ-bitlis) և կամ տալածոյ կերպաս (չիթ,  
պասմա): Շապիկը կ'իջնի մինչև քրդուհու  
սրունքները կուրծքը բաց է, երկու կող-  
քերէն էլ ունի դրօշակներ, իսկ թեերը՝  
տղամարդոցին նման:

II. Նոյն կտորներէն կըպատրաստւի և  
շապկընկերը, որ ունի լայն ձեւ ու խոն-  
ճէղարձ (ուշգուրլուխ):

III. Դրանց վրայէն կըհագնին երկար  
պարեզօտ (էնթէրի, զրպուն), որ կ'իջ-  
նի մինչև ոտքերի երեսը: Պարեզօտն էլ  
ունի եռատուտն դրօշակներ:

IV. Պարեզօտի վրայէն կապած է տէ-  
կիմի (բոլորշի) դօտին, որի մի ծայրը

քրդուհու ետևէն կը կախւի եռանկիւնածեւ:

V. Քրդուհին գլխին կը ծածկէ կամ լաշակ և կամ թաճ: Վերջինս քոլողի նմանէ մի փոքր, որ կրգործեն իրենք բամբկիթելէ: Թաճի վրայ կ'անցունեն գոյնզգոյն փնչիկ (փիւսկիւլ):

3. Զարդեր և գեղեցկացուցիչ միջոցներ.

I. Ամենէն առաջ աչքի կիյնայ քիւրդ տղամարդու քիւլահը, որի վրայ կրփաթաթէ նա, ինչպէս վերև նկատեցի, բաղմաթիւ, մինչև անգամ 100-ի չափ գոյնըզգոյն փաթեթներ, որոնց մէջ կը հանդիպինք նոյն իսկ երեսսրբիչների: Փաթեթներին մէջ դուք կը հանդիպիք հետեւեալ գոյներին.—բաց կարմիր (ալ), բաց կանաչ (կեօք րէնկ), բաց կապոյտ (մաւի), շագանակագոյն (խանւէ րէնկ), ծիրանեզգոյն (սառի), սև (աէշ), սպիտակ (սըրի), բաց գեղին (հաք րէնկ), մոխրագ-

գոյն (ալպազ կամ սլող) ևն ևն: Աւելացրէք զրանց վրայ և՛ բազմատեօակ հուլունքները, նոյնպէս գոյնզգոյն, որ քըրդունին կրկարէ իւր տղամարդու քիւլլահի փաթեթների շուրջը. այդ հուլունքները քրդու զլխի չորս կողմէն սլսլալով ու փալլիելելով կրկախւեն նրա ճակատին ու ծոծրակին վրայ: Որքան շատ լինեն քիւլլահի փաթեթները և որքան շատ խայտանամուկ դոյներովի, այնքան պատռով կրհամարւի զլխարկը:

II. Քիւրդ տղամարդիկներէն ոմանք իրենց ձախ ականջին վրայ կըկրեն ոսկէ, արծթէ, պղնձէ և կամ զանազան քարերէ զինզեր (օղեր): Քրդունին մեծ ջերմեռանդութեամբ «կը օղաւորէ» իւր անդրանիկ որդուն, երբ երկար տարիներ անզաւակ մնալէ յետոյ վերջապէս բաղդ կ'ունենայ ծնելու մանչ զաւակ: Գինդերը կըպահպանեն երեխաներին շար նազարէ:

III. Քրդու կուրծքը զարկարւած է դա-

նազան կոճակներով ու դայթաններով  
(ժապաւէն), որոնք կրգրաւեն նրա շապկի  
ու սալթայի առջևի եղբերը: Սալթայի 2  
կրծքերէն բացած ճէպերում (գրպան)  
զետեղւած են այն մի քանի քէսէները  
(քսակ), որոնց մէջ կրգնէ քիւրզը հրա-  
հան-կալքար-արէթ, դրամ, զմելին ևն  
ևն: Ինչպէս քէսէները, ալդպէս և նրանց  
կապերը զարդարւած են զանազան հու-  
լունքներով: Իսկ քրդու աչ կամ ձախ  
կողքէն կախւած թիւթիւն քէսէսին (ծր-  
խախոտի քսակը) իր վրայ կըկրէ քըրդու-  
հու ձեռքի բոլոր հիւնարը: Ալդպիսի քը-  
սակների վրայ զանազան թելերով (յաճախ  
մետաքսէ), խալտանամուկ գոյներով, քըր-  
դուհին ասեղնագործած կրլինի զանազան  
ծաղիկների նկարներ, թռչուններ, ձի  
և ձիաւոր, ոճրագործն իր դերում, որ-  
սորդական կեանքէն, բնութեան տեսա-  
րաններ ևն ևն:

IV. Զէնքակալը (սիլահլուղ) նոյնպէս  
յաճախ զարդարւած կրլինի ոսկեղէն,

արծթեղէն, պղնձեղէն ու երկաթեղէն  
զարդերով, որպէս և փոքրիկ խըխունջ-  
ների պատեանով (պոլոնիկ—bolodjig):  
Այլեալ պատահարներէ պահպանող ե-  
ռանկիւնի «Ժղժիկները», «Ժալիսման-  
ները», «կապոյտ քարէ կոճակները» ևն  
նոյնպէս կրծքէն կախւած և միացած են  
դէնքակալի մասնիկներին:

V. Ջալվարի ստորին եղբերն ու կող-  
քերը ստէպ ասեղնագործած են ոսկիթել  
կամ արծաթաթել (սրմէ, սիմ) բանւածք:

VI. Սախի վրայ էլ պակաս նախշեր  
չկան:

VII. Գուլպայի վիզը և կապը յանախ  
հիւսած կրլինի գոյնդգոյն արքէշումէ, իսկ  
կապերի ծալրերը՝ փնջիկներով:

VIII. Նոյն իսկ տրեխների ծովերը  
քիւրդը մի առանձին վարսպետութեամբ  
կրկապէ՝ ոտքի երեսին, որպէս զարդ, ա-  
ղիւսակներ գոյացնելով:— Զէնքերի զար-  
դերի մասին միւս գլխում:

IX. Քրդուհին էլ ունի իրա սիւսն ու

սալգանաթը (süs-saltanat-զարդ ու զարդարանք), որոնցմէ պէտք է յիշեմ առաջ նրա զլիսի թասակը կամ ֆէսը (coff-քօֆ), որ հարուստներինը ժածկւած է ոսկեղին ու արծթեղին դրամներով, երրեմն էլ աղամանդներով, իսկ աղքատներինը՝ հասարակ մետաղէ դրամներով։ Դրանցմէ չոկ կան և առանձին արծաթեայ զըլ-խազարդեր, որոնք հմուտ հայ ոսկերիչների ծեռքի գործերն են։

X. Պղնձէ կամ արծթէ վարսակալների (սաչ պաղի) հարիւր տեսակը կայ, որոնք քրդուհու կունակի շքեղ զարդը կըկազմեն և այնպէս վայելուչ կերպով սազ կուգան նրա առատ, սե-սաթի գոյնով, մետաքսանման, երկար վարսերին ու կ'իջնին մինչեւ կրունկները։

XI. Հապա բաղմատեսակ մանեակները (կերտանլրիս), որքան շքեղ են ու իսկապէս զեղեցիկ. ի՞նչ ասես հայ ոսկերիչներին, որ իրենց շինած ըռընտիկ կըրծկալներով, հրաշագեղ մանեակներով, եռան-

կիւնի «թղթիկներով», սիրով «խոցւած սրտիկներով», մարդու և կենդանեաց «գլխիկներով», Ամուսի շնորհիւ իրար հասած «ձեռնիկներով» (pardon), արտասւաթոր «աշքունկներով», աստեղակիր կիսալուսնով, վարդագորով «պիւլալիւներով» և... եօ ի՞նչ գիտեմ էլ, հազար տեսակ այլ զարդերով հնարաւորութիւն կուտան քրդուհուն զարդարելու իրա՝ այնքան արադ ուռչող, զարդացող, չուխտակ նոներ պարունակող, տրոփուն կրծքերը, որով նազելի քրդուհին քու սիրաը կրդերէ, հոգիդ կրքազէ...

XII. Քրդուհու թևերն զուրկ չեն զարդարանքէ. արծաթեղին ապարանջանները, հուլունքների շարքերը, սատափէ (սէտէֆ), բուստէ (մէռնան) և բիւրեղէ (սկիլոր) բազմապիսի բաղկալարները՝ կը շիկշիկան քրդուհու թեփին վրայ և հարիւր տեսակ վորքը ու խոշոր մատանիների հետ կըլրացնեն ձեռքի զարդը:

XIII. Օղեր, բանի՝ տեսակ կամենաբ—

ուսկիէ, արծթէ, պղնձէ, ականակուռ,  
հասարակ քարէ և մինչեւ անգամ սև  
երկթէ շինւած։ Դրանք ականջների հա-  
մար։ Ամենանշանաւոր գեղեցկուհիները  
օղերով կըզարդարեն և՝ իրենց քիթը, որը  
կըլինի առհասարակ փոքր բայց թան-  
կագին և կըկոչի խըզմէ։

XIV. Մոռացայ իրա տեղին լիշելու  
պարզ կըծկալները, որոնք կըպատճառա-  
ւին կամ տպածոյ կերպասէ և կամ մա-  
նուսալէ, կան և մեաաքսէ, որպէս և կա-  
պոյտ ներկած կտաւէ (վերջնի վրայ մեղ-  
րամոմով զանազան զարդեր ու նախշեր  
կան բանւած)։ Սրանք բոլորը երկու տե-  
սակ են. մին կըծածկէ քրդուհու միայն  
կուրծքը մինչեւ գօտկատեղ, միւսը երկար  
«զոգնոցն» է, որ քրդուհու առջեւ մինչեւ  
ոտքերի երեսը կըհասնի:

XV. Պարեզօտների քղանցքները,  
ստորին ծայրերը, թևքերի բերանը, օ-  
ձիքը, երլիմն և ուսերին վրայ քըրդու-

հին կընախշէ գոյնզգոյն թելերով ու հ-  
ըիզներով:

XVI. Դեղին կամ կարմիր խոնջերով  
ճիզմէները իրենց փնջիկներով քրդուհու-  
հագուստի և զարդերի լրացուցիչ մասերը  
կ'կազմեն:

XVII. Քրդուհին որպէս զեղեցկացու-  
ցիշ միջոց կըգործածէ՝ սնգոյր—երեսը  
ներկելու համար, զարիր (ծարիր, սիւր-  
մէ)՝ յօնքն ու արտեանունքները դեղեց-  
կացնելու և հինա—ձեռքի մատերն ու  
դիմադիմը և երբեմն էլ մազերը կարմր-  
բացնելու համար:

---

Է.

ԶԵՆՔԵՐ. ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԶԵՆՔԵՐ ԵՒ  
ՆՐԱՆՑ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ.

1. Ընդհանուր տեսութիւն.

Քիւրղը Փռքը. Ասխալի ամենաարիւն-  
ուշտ ժողովուրդն է և շարունակ զործ  
ունի արիւնի հետ։ Ամենափոքրիկ անբա-  
ւականութիւնն հերիք է առիթ տալու  
քրդուն, ոչ զէնքի օդնութեան դիմէ։ Մար-  
դուն իր կեանքէն զրկելն այնքան սովո-  
րական, անմեղ ու աննշան բան է քրդուն  
համար, որ նա ճարդ սպանելիս շատ ան-  
գամ ցուց չի տար վրդովմունքի առանձին  
նշաններ իսկ։ Զալրացած ըուպէներին, քրդ-

դու մէջ կարելի է բոլորովին մեռած համարել և՝ խիղճ, և՝ մարդասիրական զգացմուսքներ։ Քիչ չէ պատահել, որ 2 հարազատ եղբայր-քրդեր մի անարժէք բանի համար յօշոտել են միմեանց։ Եսկ օտարազգիների կեանքը, ո, քրդու աչքում մի ասեղ էլ չ'արժէ։ Մարդասպանութիւնն ու արիւնահեղութիւնը քրդու ամենաբարձր առաքինութիւններն են։

Վլէժխնդրութեան կողմանէ էլ քըրդերը ամենաթունդ ժողովուրդն են Փոքր-Սսիրայում։ Հւմ յայտնի չեն քրդական կեանքն առնւած հազար ու մի պատմւածքները, որոնց մէջ արևի նման կ'արտացոլեն քրդու վրէժխնդիր հողին և ապետական առանձնայատկութիւնները։ Արիւնին արիւնով պատասխանելու սկրդունքը խոր արմատներ է գցած քրդերի մէջ և դարերէ հետէ սրբագործւած սովորութիւնների ու կանոնների կարգն անցած։ Յանախ տնաքանդ վրէժխնդրութիւնը կ'ստանայ քրոնիկական գոյն և

տեղի կուտայ ժառանգականութեան, տե-  
ւելով որդոց որդի, սերնդէ սերունդ:

Սլդպիսի նկարազրի տէր մի ժողո-  
վուրդ, հասկանալի է, որ կունենայ և  
ռազմական ճաշակ և ընդունակութիւն  
զէնքի դործածութեան մէջ:

Զէնքի նշանակութեան մասին բազմա-  
թիւ տւանդութիւններ կան քրդերի մէջ,  
որոնց մէջին կ'ասէ. «Հասոն սարսափելի  
կացութեան մէջ էր. զէնք չունէր. ի՞նչ  
անէ խեղճը... նա իրա հարազատ շորդի-  
քը սիրայօժար տւեց Աղիզին և տուաւ  
նրա երկիփող ատրճանակը»:

Զէնքը քրդու ամենամտերիմ, անզու-  
գական և անրաժան ընկերն է: Առանց  
զէնքի քիւրդը օր չունի և այդ պատճա-  
ռով էլ դուք միշտ կրտեսնէք նրան ոտքէ  
զլուխ սպառազինւած: Նոյն իսկ զիշերը,  
քնանալիս, քրդու վրայէն զէնքն անպա-  
կաս է: Ամենաաղքատ, մուքացկան, պար-  
աբի տակ ճնշւած քիւրդն անզամ ունի  
իրա անհրաժեշտ զէնքերը, որոնց իր աչ-

Քի լոյսէն էլ լաւ կրխնամէ ու կրսիրէ,  
զաւակներէն էլ:

Յաճախ զէնքն է, որ կըկերակը ամ-  
բողջ ցեղեր:

Քրդական բանաւոր եղերերգութիւննե-  
րէն մի քանիսին մէջ զէնքը կոչւած է  
«ազատող, կենսատու, լոյս, բաղդի գուռ,  
հոգու պաշտպան, կերակրող, պատուհա-  
սող, արդար դատաւոր, արդար բաժա-  
նարար, խիզախ ընկեր, երկու աշխարհի  
սահմանադլուխ ևն ևն»:

Քրդերը մինչեւ անցեալ դարի վերջերը  
անծանօթ էին կատարելագործւած զէն-  
քերին ու նրանց զործածութեանը, բայց  
շնորհիւ Օսմանեան պետութեան, վերջին  
2—3 տասնամեակներում, թափած ծի-  
զերին՝ զինել քրդական ամենահաւասա-  
րիմ ցեղերէն ոմանց ընդդէմ քրիստոնեայ  
հպատակների, — շնորհիւ դրան մի քանի  
քիւրդ ցեղեր իրենց սիրած զէնքերի շար-  
քերում ընդունեցին և՛ մի քանի կատարելա-  
գործւած զէնքեր: Նոյն զէնքերին դի-

մելու ստիպեցին քրդերին և՝ յաճախակի  
հայդուկային ասպատակութիւններն ու  
արշաւանքները թիւրքիալում, որոնց ժա-  
մանակ իրա պապենական զէնքերով ան-  
զօր կ'զգար իրեն քիւրդը ֆէտալիների  
զնդակին առաջ:

Չ'նալած ալդ ամենին՝ կատարելազործ-  
ւած զէնքերի թիւր քրդերի մօտ սահմա-  
նափակ է: Ես ստորև մանրամասնօրէն  
պիտի լիշեմ քրդերի մէջ գործածական  
բոլոր զէնքերը իրենց նկարագրութիւն-  
ներով. այստեղ կը մնայ ասել երկու խօսք  
առասպելական զէնքերի մասին:

Գուցէ բովանդակ Տաճկաստանում և  
ոչ մի ժողովուրդ այնքան նախապաշար-  
ւած չէ և այնքան մեծ հաւատք չի ըն-  
ծալեր առասպելներին, որքան քրդերը  
Պատմեցէք քրդու մօտ ինչպիսի մըտացա-  
ծին առասպել և կամենաք՝ քիւրդը բո-  
լորը կընդունէ հալած իւղի տեղ:

«Անկարելի բան չ'կայ աշխարհում»,  
ալդ առածը այնպիսի խոր արմատներ է

զցել քիւրդ ցեղերի (բոլորի) մէջ, որ իսկապէս անկարելին կարելի կրգառնայքը ուղարկում երբ դուք վկայէք, որ «հնումը եղել է այդ»:

Առասպելական բազմաթիւ զէնքերի մասին հազար ու մի աւանդութիւններ կան քրդերի մէջ՝ ափսոս որ մէկ կողմէն կրվախնամ ստւարացնել դործու և շատերն էլ վրիպած լինելով լիշողութենէս, այդ կրկին պատճառներով անկարող պիտի լինիմ բերել շատ օրինակներ. սակայն կրդնեմ մէկ-երկու նմուշներ, որոնք հարեւանցի զաղափար կարող են տալ ընթերցողին քրդերի հաւատալիքների մասին զէպի քննելի առարկան: Նկատել պէտք է, որ սէլիդները երբ կրմտնեն ժողովրդին մէջ սազ ածելու և «աղօթքներ» կարդալու, երգած բանահիւսութիւններէն շատերը կրպատւեն հրաշալի, առասպելական, անհեթեթ զէնքերի շուրջը և ժողովուրդը բերանաբաց կրլսէ նրանց. կրլրսէ ու կրհաւատայ, կրհաւատայ ու որ-

դոց որդի կրպատմէ իր լսածը հեքեաթի  
և այլ ձևերով:

Զմեռնալին երկար գիշերները լաճախ  
կրլուսանան՝ զեռ չի վերջացած «ալեոր  
սիէսրբիի» պատմած հրաշալի առասպել-  
ները, որոնք կրկանւեն բաղմաթիւ հե-  
տաքրքիր ունկնդիրներէն:

Մեր ժողովրդին ծանօթ առասպելա-  
խառն «Վարք Սրբոցները», «Երկնքի ճամ-  
բաները» ևն զրքերը բոլորովին տարբեր  
բնաւորութիւն կրկրեն և զրանք չեն ներ-  
շընչեր ժողովրդի մէջ այն ցանկալի ինք-  
նապաշտպանութեան և ասպետականու-  
թեան հոգին, ինչ որ քրդական հրաշալի  
առասպելները, որոնք միշտ կրպտուեն  
մեր աշխարհի, զէնքերի, թշնամիների,  
արենակցականութեան ևայնի շուրջը:  
Արժէ լուրջ ուշադրութիւն դարձնել այդ  
կէտի վրայ և հաւատարմութեամբ զրի  
առնել այդ կարգի բոլոր ժողովրդական  
առասպելները, որոնք երբեմն շատ թա-  
քուն իրողութիւններ կրպարզեն՝ այդ ժո-

դովրդի անցեալի, պատմութեան, ծագման  
և այլնի վերաբերութեամբ:

2. Սովորական դէնքեր.

I. Շէշխան թֆընկ (chéchhan tfenc).  
շէշխան կրնշանակէ վեցանկիւնանի կամ  
վեցտնանի և այդպէս կոչւելու պատճառ  
այն է, որ այդ հրացանների խողովակի  
բերանը վեցանկիւնանի է (շէշ=վեց,  
խան=տուն):

Շէշխան հրացանի առաւելութիւնը  
կրկալանալ նրանում, որ նրա խողովակի  
մէջ խաղսղումները միւս հրացաններէն  
աւելի շրջաններ կրգործեն: Շէշխանը ըլլ-  
դերի ամենասիրելի հրացաններէ մին է:  
Քիւրդ ցեղերէն ոմանք նրա անունը կը-  
հնչեն շէյիշխանա:

Շէշխանների լոկ խողովակի միշին եր-  
կարութիւնն է  $1\frac{1}{2}$ —2 արշին: Շէշխանը  
կ'արձակւի՝ բնի վրայ ամրացած գալլա-  
խաղի ու կալծահանի միմեանց ընդհար-

ւելէն։ Շէշխանի խողովակին վրայ, ար-  
ծաթաջուր կամ ոսկեջուր, զարդարւած  
կըլինի՝ զանազան նախշերով ու զծերով։  
Շէշխան հրացանի վրայ շատ գովասանա-  
կան լօլօներ կան, որոնց մէջ շէշխանը  
կոչւած է։ «ցեղի պահապան, կեանքի  
փոխանորդ (անձնափոխանորդ), խենթե-  
րին խելքի բերող, մարդկանց ուսուցիչ,  
թռչունն երկնքէն վար բերող, ապրուստի  
դուռ ևն ևն։

Միանգամ ընդմիշտ պէտք է յալտնեմ  
այստեղ, որ քրդական բոլոր հրացաններն  
ու ատրճանակները գնդակն ու վառօդը  
առանձին-առանձին կընդունեն իրենց խո-  
ղովակի բերնէն։

II. Չաքմաքլի (tchacmacli) կամ չախ-  
սալի. շէշխանէն աւելի կարև և խողո-  
վակի բերանը կլոր, հասարակ հրացան։  
Չաքմաքլին ամենաշատ տարածւած հրա-  
ցանն է, այնպէս որ յաճախ իմանալու  
համար, թէ այս կամ այն ցեղի մէջ քա-

նի՞ պատերազմիկներ կան, կրհարցնեն՝  
«այդ ցեղը քանի՞ չաքմաքլի ունի»:

Չաքմաքլի կրնշանակէ հրահանառը  
(չաքմաք=հրահան, լի=ունեցող, աւոր  
ման.), որովհետև, ինչպէս վերև էլ նրկա-  
տեցի, հրահանն է վառօղը բռնկցնող  
գործին:

III. Էղէլի (eseli), նոյն հրացանն է,  
ինչ որ չաքմաքլին, այն զանազանութեամբ,  
սակայն, որ էղէլին կ'արձակւի բիստոնով  
(պատոն). Էղէլիի բունը զուրկ է հրահա-  
նէն ու զալլախաղէն, որոնց փոխարէն  
կը կրէ ստինքը (մէմէ) և պայթուցիչը  
(խօրօղ): Բիստոնը կրհանդի ստինքին վր-  
բայ, երբ վեր քաշած պայթուցիչը բաց  
կը թողնւի՝ կը ճնշէ ստինքի բիստոնը և  
կը տրաքեցնէ, որմէն և կ'արձակւի էղէլին:  
Էղէ կրնշանակէ բիստոն:

IV. Գարապինա (Carabina). Խողովակը  
կարճ և բերանը ծագառածե հրացան:  
Գարապինաների ընտիր տեսակները կան,  
որ կը կրէն դեղին պղնձէ (արովը) խողո-

վակ և շէշխանին չափ յարգանք կրվալելին քրդերի մէջ։ Գարապինսա կընշանակէ սևաբուն (դարտ=սև, պինտ=բուն, հիմք, շէնք)։

V. Սէչմէլի (setchmeli), զանազան մեջ ուժեան և առնասարակ թեթև հրացան, որ յատկացւած է բացառապէս թրոչնորսութեան։ Թէև կան սէչմէլիներ, որոնց կարելի է յարմարացնել պատերազմականի էլ։ Իր անունն ստացել է մէջը գործածւող կապարիկներէն (դնդիկ=սէչմէ), որոնցով կ'որսան թուչուններին։

VI. Չիփթէլի (tchifteli) երկփող (չափաքլի, էզէլի ևն)։

VII. Բլշտօֆ (pechtof) կամ տլպանջա (debantchä). Վերոյիշեալ բոլոր հրացանների կարճ ու փոքր տեսակները (ատրճանակ) կան, յարմար գօտիի մէջ խրելու։ Դրանք կրպահպաննեն հրացանների անունները, սակայն աւելացնելով բլշտօֆ կամ տրպանջա բառերը։ Քրդերի մէջ շլջահարի (revolver-револьверъ) գործածութիւնն հազ-

ւաղեպ է. բայց բամփուշաածիդ մարդիններն, այնալիները, իյնէլիները, նոյնիսկ ռուսական նոր սիստեմի հինգհարւածեան զինւորական հրացանները արդէն կ'երևին քրդերի մէջ. Վերջին տեսակէն թիւրքիտ կրմտցնեն կովկասցի տաճիկներն ու քրդերը տարեկան բաւական մեծ քանակութեամբ և քիւրդը ուրախութեամբ կրվնարէ նրանց հատին մինչեւ 100 բուրլի: Պէոտաններն համարեա քըրդերէն շատերը կրգործածեն:

Ալժմ լիշենք հետեւեալ պաղ զէնքերը.—  
VIII. Շլմշէր (chémchér) կամ շիր (chir), սուրն է այդ, որի շատ տեսակներին կրհանդիպենք քրդերի մօտ. լիշենք մի քանիսը.—ա. կեռ շեղբով և օղակաւոր երախակալով. բ. նոյնպէս կոր շեղբով բայց խաչածե երախակալով. դ. ուղղաձիդ շեղբով ու նոյնպիսի երախակալով. դ. դլանածե կամ հաւկթածե. զլուխ ունեցող երախակալով ու սրածայր շեղբով և ուրիշ շատ տեսակներու Խիստ լարգի է քըր-

գերի մէջ այն սուրը, որի շեղը  
(երկաթը) արևի առջև ծիածանի բո-  
լոր գոյներով մեկին կրփացի կամ առ-  
կրտեալ (պուտ-պուտ) և կրկոչւին ճէօ-  
հէրլի (djeuhérli) կամ շահրէլի (tchahréli):

IX. Խէնչար (khéntchar), դաշոյնն է,  
որի մի քանի տեսակները կան. ամենա-  
շատ տարածւածներն են երկսալրի կեռ-  
դանակները՝  $1 - 1\frac{1}{2}$  թզաչափ երկար շեղ-  
րով: Զարհուրելի է տեսնել քրդուն մո-  
լեզնութեամբ խոյանալիս իւր դժբաղդ  
ոխերմի վրայ, երբ սառնարտութեամբ  
իւր թունաւոր դաշոյնը մինչեւ կոթը կր-  
մեխէ նրա կուրծքը կամ կողքը:

X. Խէնչարի ընտանիքին կրպատկանին  
և դամա՞ն ու եաթաղանը:

XI. Ոչ-պակաս սոսկալի է և նիզակը  
(մըրդախ, մըրդախ, մըրդաք), որ 3—8  
մէթր երկար եղէզի ծալրին ամրացած՝  
կ'սպառնայ հակառակորդի կեանքին՝  $1 - 2$   
րոպէում 10 անգամ ծակելով:

XII. Նաչախ, նաճախ կամ նաճադ

(nadjac), որ իր ձեւովը շատ նման է լազերի գործածած կրոպի (grobi) կոչւող գործիքին։ Նահագի ամենայարդի տեսակըն է մահիկի ձեւ ունեցողը, որի մի հատիկ նպատակայարմար հարւածը բաւական է զետին տապալելու ախոյեանին։ Նաճագի (տէգ?) կոթը կըշինեն կարծր փայտէ՝  $1\frac{1}{2}$ —2 մէթրաչափ։

XIII. Պէտք է յիշել և շիշերը, որոնք կունենան գնդածեւ ծալը, կամ սրածալը ու կլոր, կամ եռանկիւնի ու քառանկիւնի և երբեմն խառապոցանման շեղբեր։ Շիշերը քրդերին նոյն ժառայութիւնը կրմատուցանեն, ինչ որ զինւօրներին՝ սրւինները։ Քրդերը շիշերին կըկոչեն՝ ճաղ, շիշ, սիւնկի, տրուն։ Այդ մահառիթ գործիքներով քիւրդը կրծակէ իր թշնամու կենդանեաց նիար, փորը, կողը... միւնոյն գործին պատրաստ է շուլլւերու և՛ կենդանեաց տիրոջ կուրծըր, եթէ դա արժանի է սեպւած մահւան։ Բուն շիշը կունենալ  $2-3\frac{1}{2}$  մէթր երկարութիւն, որի

$\frac{3}{4}$  էն աւելին պատեանումն է և հազիւ  
 $\frac{1}{4}$ -ը՝ կոթին մէջ։ Կան շիշեր և ձեռնա-  
փայտի մէջ անցկացրած։

XIV. Շիշն ունի իրա ձագը, որին կա-  
րելի է քրդու ամենավասնգաւոր զէնքն  
համարել։ Խազմական զիրկընդիւառնումի  
միջոցին այդ մէջըի շիշ կոչւող սատա-  
նան է, որ կրիսաղայ իր գժոխալին դերը՝  
մի բոպէում մահացնելով իր տիրոջ ոխեր-  
մին։ Քրդերը պէլ-շիշի—մէջըի շիշ—կ'ան-  
ւանեն այն պատճառով, որ յարմար է  
զօտումը պահելու։ Սա օձի ձագ էլ կր-  
կոչւի երբեմն։

XV. Խըռպաճն (kherbadj) էլ բարի  
պտուղ չէ։ Սա զանազան մետաղաթելերով  
հիւսած խարազան է։  $1\frac{1}{2}$ —3 մէթր եր-  
կարութեամբ։ Կան և արջառաջիլեր։ Խըռ-  
պաճի 1—2 տեսակները շատ նման են  
ուռսաց մտրակին, բայց իհարկէ քնու-  
թի նիւթէն չէ պատրաստւած։ Առանց  
յուշաթափման վտանգին ձեզ ենթարկե-  
լու չեք կարող 2 բոպէ նայել քիւրդ ցե-

զապետին, երբ սա բարկանալով այս կամ  
այն հապատակին վրայ՝ կ'սկսի խռպանի  
սոսկալի հարւածներով քաղել անբաղդ  
ենթակալի հոգին...: Աւազակ քիւրդը վա-  
ճառականին կողոպտելիս՝ այդ գործիքով  
է, որ կ'ստիպէ նրան յանձնել ամեն ինչ  
և մինչև անզամ կեանքը: — Այս կամ այն  
կեավուրի տան վրայ յարծակւելիս կամ  
դաղտագողի մտնելիս, խռպանն է դար-  
ձեալ, որ կրբանայ տանտիրոջ պապան-  
ձւած լեզուն և մատնել կուտայ իր դանձի  
կամ այլ խնդրելի առարկայի տեղը: Խռո-  
պածի օծալին դալարումները մահ կընիւ-  
թէն ոչխարներին, այծերին, շներին...  
Եթէ դրանք ենթարկւած են թէկուզ մի-  
մի հարւածի, այս կամ այն պատճառով:

XVI. Սղբորա (stropa). այդպէս կըկոչ-  
ւի այն զահրումար գործիքը, որ իր ձե-  
ւով բոլորովին նման է բալ պտղին՝ իր  
կոթով միասին: Սղբորան կունենայ հա-  
զիւ  $1\frac{1}{2}$ —2 թզաչափ երկարութիւն:  
Երևակալեցէք այդ երկարութեան հետ

ներդաշնակ մի բալ (ՎԻՌԱՅ), որ կուտի  
փոխարէն պարունակէր իրա մէջ 4—5  
ֆունտ կապար, իսկ մնացեալ բոլոր մա-  
սերը մետաղէ կամ մանածէ թելով հիւ-  
սած (ինչպէս խիստ կոշտ ու հաստ ուռ-  
կան) աղիւսակներով, որ կրշրչապատեն  
կապարի կլոր գունդը և կոթի ծայրումը  
կրգոյացնեն պոկունքներ՝ ձեռքէ չ'սահե-  
լու համար, —և գուք կունենաք սղրո-  
բան։ Այդ զէնքով քիւրդը կրծզմէ իր հա-  
կառակորպի զլուխը, կամ—եթէ կամենալ  
սպանել—կրշարդէ կողերի ոսկորները։ Առ  
հասարակ գաղտնի գործելիս սղրոբան  
կրտեղաւորեն հազուստին մէջ և վրճուա-  
կան բոպէին միայն երեւան կրհանեն։

XVII. Թիշատակութեան արժանի է և  
վահանը, որ ամենահին զէնքերէն է և  
պահպանել է քրգերի մօտ իր պատմական  
ձերւ Քրդերը կրկոչեն՝ խըլխան, խալխան  
կամ աւելի լաճախ գալգան (calcane). վա-  
հանն ունի կլոր սկաւառակի ձեւ, շինւած  
ամենակարծր թաղիքէ և պատած կա-

շիով։ Վահանի մի կողմք կոնածեւ է և  
ունի դիմացկուն կաշիէ կամրջակ՝ բրոնե-  
լու համար։ Դա ներսն է։ Դրսի երեսը,  
որի կենդունը գնդածեւ է, ծածկւած է  
պայտի մեխերով, հաստ-հաստ դլխով. այդ  
մեխերն են որ կրղիմաղրեն թշնամու սրի  
հարւածներին։ Քրդերը բաւական շնորհա-  
լի կերպով կրգործածեն վահանը և զիւ-  
րաթեքութեամբ շարժելով նրան՝ կրպաշտ-  
պանւին ներքեր։ Վահանը քրգու մօտ  
միակ պաշտպանողական գործին է։

Սլնքան էլ յարգանը կրվայելէ վահա-  
նը քրգու մօտ, որ յայտնի քրդական  
առածը, թէ «երեք բան չէ կարելի ծա-  
խել—կինը, ծին և զէնքը», ստէպ քիւրղը  
«զէնքը» բառին աեղ կրգնէ «վահանը»,  
և նայելով նրա խաղացած կարեոր գե-  
րին՝ արժէ այդ պատին։

XVIII. Գոպալը կամ աւելի Գոմպալը  
(Combat) նոյնպէս պէտք է դասել պաղ  
զէնքերի կարգը։ Գոմպալի ամենասովորա-  
կան ձևն է՝ 2—2<sup>1/2</sup> արշին երկարու-

թեամբ մի բարձր ու հաստ փայտ, ծայրը գնդածե և ծածկւած հաստագլուխ մեխերով։ Մեզանում գործաժական «ըիր» բառով կարելի է բնորոշել գոմպալը։ Շատ անգամ մի փոքր զալմաղալի պատճառով հովիւ քիւրզը կրջարդէ գոմպալով դէմինի դլուխը։

XIX Սափան կամ սըրան (sepan), թէե ոչ ամեն տեղ և շատ քչերը կրգործածէն սըրանը, որ մեզանում կրկոչւի՝ պարս, պարսեա, պարսեթ՝ բայց կարելի է հանդիպել դրան քրդերի մօտ։ Սըրանի ամենալայտնի ծեն է հետեւեալը. կաշիէ փոքրիկ թաթի նման մի գոգ, որի երկու ականջներէն ամուր կպցրած են չւաններ։ Քիւրզը սըրան գոգին մէջ կրաեղաւորէ մի հաւկթաչափ կամ աւելի խոշոր քարեր, ապա չւանների ծայրերէն բռնած՝ արագ-արագ կրպտացնէ օղին մէջ և հուսկ յետոյ բայց կրթողնէ չւաններէ մին. գոգի քարերը տժժալով կրոլանան դէպի նըպատակակէտը։ Պարսաքարը քրդերէն կր-

կոչւի գլուխ սըրան (kevre sepan) կամ  
քեռուէի սափան (kerrei sapan):

XX. Օխ (okh), որպէս պատերազմա-  
կան դործիք օխը (նետ) արդէն քրդերի  
մօտ էլ կորցրել է իրա վաղեմի նըշանա-  
կութիւնը: Բայց լամուքները (քրդու-  
երեխերը) կրգործածեն նրան նոյն նրապա-  
տակով ու սլաքի (նիշէն) փոխարէն կր-  
դնեն մախաթանման փայտեր: Է՛լի քիչ  
թռչուններ չեն զոհւիր լամուքի օխերով:  
Աղեղին կ'ասեն եալ (յա) որով և «նետ  
աղեղը»—«Եալ օխ»:

XXI. Ալդ բոլոր զէնքերի հետ կրգոր-  
ծածեն քրդերն հետևեալ առարկաները\*

ա. Եղջիւը, օրի ծայրը, երբեմն էլ բե-  
րանը, դարդարած կրլինի մետաղեալ բան-  
ւածքներով և կրծառալէ որպէս պահա-  
րան աղզօղիի (aghzoti-մանը և դիւրա-  
վառ վառօղ):

բ. Կաշեալ տոպլրակներ, որոնց մէջ  
կրզետեղէ քիւրդը՝ զնդակ, քրջեր, վի-

բակապ, արէթ, հրահան, կալծքար,  
թուղթ ևն:

գ. Էզէլլիս, Ֆկոյթի հասառթեամբ և  
մօտ  $\frac{3}{4}$  թղաչափի երկար հասարակ մե-  
տաղէ՝ ասղամանի նման գործի, որի մէջ  
կըլեցնէ քիւրզը բիստոն կամ սէշմէ:

դ. Խուդիճուղ (khoutidjough), սա մե-  
տաղաշէն մի փոքրիկ տուփ է, որ էզէ-  
լլիսի ժառախութիւնը կըմասուցանէ:

ե. Փըշանքներ (fechane), թիթեղէ կամ  
փայտէ շինած զատարկ բամփուշտներ են,  
որոնք կըպարունակեն մի-մի աթլմ (հրա-  
ցանի մէջ մի անգամ լեցնելու) վառօդ և  
դնդակ:

զ. Փըշանքլլիս, կաշիէ շինած և շր-  
բեղօրէն զարդարած բամփուշտաշարքն է,  
որ կըկմէ իր վրայ 30—60 ֆըշանքներ:

Դրանք և դրանց նման գեռ ուրիշ շատ  
առարկաներ կըզարդարեն սպառազին-  
ւած քրդու կուրծքն ու կողերը: Մէն մի  
խոշոր զարդարւած է գոյնզգոյն և մանր  
ու խոշոր հուլունքներով, գոյնզգոյն սեկէ

և մետաղէ զարդարանքներով, որոնք ըլլու-  
դու քալելու միջոցին կըհանեն ախորժա-  
լուր չըխկչըխկոց՝ ներչնչելով ըրդու մեջ  
անսովոր էներգիա:

Իւրաքանչիւր քիւրդ կրվերցնէ մէկ  
փութէն աւելի ծանրութեամբ սպառա-  
զինութիւն և մի ասեղի չափ բեռ չ'զ-  
գար իր վրայ:

«Զէնքի ծանրութիւնը—ոչ է կրողին  
համար»: (Յ.ո.աճ):

### 3. Առասպելական գէնքեր.

I. Զիւլֆիխար (zülfikhar-զյոլֆիխար) կամ  
Զըլֆըխար. այդպէս կրկոչւին այն հրա-  
շագործ սրերը, որոնցով ըրդական զիւ-  
ցաղներդութեանց և հեքեաթների հերոս-  
ները մի բռակէռւմ հազարաւոր հակառակոր-  
դներ կը կռառորէին: «...Երկնքի երեսն երե-  
ցող փայլակը եօթներորդ ցոլքն է. Հսկայ  
Օշինի զիւլֆիխարին, որ իր անպարտելի  
տիրոջ մահէն լետոյ սլացաւ երկինք, մինչեւ  
երկնքի եօթներորդ վիշրտէն (լարկ) ու

այնաեղէն երբեմն կ'արծակէ իր շլացուցիչ, աչք խտաեցնող ցոլքը, որի եօթներորդ ցոլքը միայն մեղ կերևնայ...»։ Միւնոյն զիւլֆիխարի ընտանիքէն էր յալտնի «Ճահ իսմայիլ» հեքեաթի հերոսի հրաշագործ սուրբ, որը, սակայն, Շահ իսմայիլի մահէն յետոյ վազլօ տիւնիասիին (Բղնունեացծով?) մէջ թաղւեցաւ և էլ չերևցաւ մարդկանց։

Հրաշագործ զիւլֆիխարները բաղմութիւնն, բայց դրանցմէ ամենազօրեղը այն զիւլֆիխարն էր, որ զործածեց «Իլիմտար Օխ»-ի հեքեաթին հերոս Ճափելու։

— Օ՛, Շաքերտի զիւլֆիխա՜րը, ի՞նչ կասէք զուք, նա մի ժամում աշխարհի տակն ու վրայ կանէր, եթէ իրա տիրոչ հօրը կեանքին չ'ինայէր... բերէք 100 հազար մարդ և Շաքերտի զիւլֆիխարը

մի բովեաւմ կրջարդէ նրանց այնպէս, որ  
քէֆդ դալ \* ) ...

II. ճէմբոլատ (djèmpolad). Հայ է ճէմ-  
բոլատին աէրը, բայց գիտեք Հայը ինչ-  
պէս տիրացաւ ճէմբոլատին, ահա կրպատ-  
մեմ նրա հեքեաթը.

«Փամանակի տարածութեան մէջ, մա-  
ղըն ու սառատը յարդի մէջ (եղել է,  
չէ եղել) ...

«Ելնքան վախկոտ էր Խազարը, ալն-  
քան երկոտ, որ, Տէ՛ր Աստուած, ինք  
իր շուքէն էլ կրվախնար: Այս Խազարը  
չէր ամքնար վախկոտ լինելէ, հենց վախ-  
կոտութեան պատճառով էլ նրա գործը  
միշտ ձախորդ կերթար: Վախկոտ Խա-  
զարը նոյն իսկ իր կնոջ համար մի կտոր  
հաց չէր կարող ճարել (հայերի կիները  
չեն աշխատիր, խաթունի պէս ոտք ոտքի

\* ) Ելի մտար Օխի և մի քանի այլ Հե-  
քեաթներ կըդնեմ յաջորդ հատորներում, պահ-  
պանելով բուն քրդական ոճը:

վրայ կընեաւն կընստին ու կսպասեն, որ  
անպատճառ տղամարդը հաց ճարէ ու  
բերէ. հայի կիները նազուկ են սովորած),  
բայց երբ է Աստուած վախկոտին հաց  
տւել, որ Վախկոտ Խաղարին տար: Վախ-  
կոտ Խաղարը, չնայած դրան, արհեստ էլ  
ունի, նա չուլֆա է (չուլհակ, ոստայնանկ),  
այդ պատճառով էլ ամենքը նրան կըկո-  
չէին Չուլֆա Խաղար:

«Մի անգամ Չուլֆա Խաղարին կինը  
բարկացաւ իւր երկանը և նրան տնէն  
վոնտեց: Չուլֆա Խաղարը լալով-աղաչե-  
լով ոչինչ չի վաստիեցաւ: Կինը հազիւ կա-  
րողացել եր մի կերպ դռնէն դուրս հանել  
անպիտան Չուլֆա Խաղարին՝ էլ ե՞րբ  
ներս կ'առնէր, խե՞ էր որ...»

— «Չէ՛, կասէր կինը, մինչեւ որ 40  
չուվալ (պարկ) ոսկի չիրերես՝ քեզ ներս  
ընդունողը չեմ, ինչ էլ և լինիս:

— «Թոնէ պապենական ճէմբովասս  
(ժեռնափայտ, դաւազան) տուր, որ շընե-  
րէն պաշտպանւիմ, լացաւ Խաղարը: «Կի-

Նը կտառարեց նրա վերջին խնդիրը՝ ճէմբոլատ անունով մի փակտ կար զարկած առաստաղի գերանների արանքը — ով գիտէ՝ քանի հարիւր տարիներէ հետէ, վար առաւ կինը ճէմբոլատը և տւեց Խաղարին:

«Վախկոտ Զուլֆա Խաղարն էր, ըեզոր ասեմ, առաւ ճէմբոլատը, կնոջը «մրնաս բարով» ասաց ու հեռացաւ:

«Շատ ու ըիչ գնացածը Աստուծուն է այսն (յախանի), մէկ էլ հասաւ Մուրատ շային (Երածանի գետ) ու օրը երեկոյ լինելով՝ վախցաւ առաջ երթալ, — պառկեցաւ Մուրատ չայի վրայ շինւած կամքրչի հնապարեան ամրակուռ կամարներէն մէկին տակ:

«Մեր Վախկոտ Զուլֆա Խաղարը շատ վախցաւ, դողաց, սարսուաց, աչքը դուրս ընկաւ, շունչը կռնակէն առաւ, կողէ կող իշնալով հոգին քաղւեցաւ, բայց իզուր — ըունը չ'տարաւ: Աչքը փակելու պէս կանէր թէ չէ՝ այնպէս կերենար,

որ, հանակ, վրայ կրհասնին աժդահագեցեր... և կըրանար աչքը, կրգողացը վարխէն... ի՞նչ անէ խեղճը... «Բայց արի տեսոր, Վախկոտ Զուլֆա Խազարը կարդալ զրել էլ գիտէ, ասենք ո՞ր հայր իլիմտար չէ (զիտնական), որ նո չըլինի, գիտութիւն կուգէք—հային քով վազեցէք, ամենալետին հայր խելքով ու իլիմով (զիտութիւնով) երկնքի ասողերը վար կ'առնէ...»

«Մեր Վախկոտ Զուլֆա Խազարը խելքէն էլ պակաս չէք, խելացի լինելուն համար էլ դուաւ հետեւեալ հնարք. նէմբուլատին վրայ զենքը լեզովը զրեց այսպէս.—

«Պուրատա եաթան Զուլֆա Խազար—

պիը աթանտա զըրդ պին էզար»:

Այսինքն. «Այստեղ պառկողն է ոստայն նանկ Խազար,—

ձզմէ մի զարկով քառասուն հազար»:

«Ապա ճէմբոլատը տնկեց զլխավերեն  
ու ապահով քնեց:

Կէս զիշերին, ճէկ էլ տեսնես, երկինք-  
երկիր դոզ ելաւ.—զու մի ասեր՝ 39 հատ  
40 զլխանի դև, սար ու ծոր քանդելով,  
ձանտապարհին հանդիպած ինսանօղլիները  
(ազամորդիք) շունչով ներս ժժելով, ձայ-  
ներն էլ արար-աշխարհք բռնած՝ կուգան  
դէսի մեր Խաղարբը: «Մինչդեռ մեր Խա-  
ղարին հիչ հոգն էլ չէ, այնպէս կըխռքմ-  
փացնէ, այնպէս խորունկ քուն կրլինի,  
որ չես ասեր թէ դա Վախկոտ Խաղարն է...»

«Դեերէն մին—պարագլուխը—կրտես-  
նէ ճէմբոլաան ու կասէ իր ընկերներին.—  
Աղբրաիք, այստեղ մի ինսան օղլի անվախ  
պառկած է: Դեերը կրմէկտեղւին ու կր-  
մօտենան Վախկոտ Խաղարին ու կրկար-  
դան ճէմբոլատի վրացի դեերի լեզով դըր-  
ւածը.

Պուրատա եաթան Զուլֆա Խաղար—  
Պիր աթանտա դըրդ պին էզար:  
«Դոզը կրպատէ դեերի սիրտը, երբ որ

կրկարդան այդ խօսքերը, թէ Զուլֆա  
Խաղարը մէկ զարնելով քառասուն հա-  
զար մարդ կը շըջէ:

«39 հատ 40 զլիսանի զեւը զլուխ-  
պիսի, խելք-խելքի կուտան, միշէվէրէ  
(խորհուրդ) կանեն,—ի՞նչ անեն, ի՞նչ չա-  
նեն և վերջապէս կ'որոշեն իրենց ընկե-  
րացնել Զուլֆա Խաղարը:

«Անգին սուրբ Սարդիսը (Խըլլըր) կու-  
դայ Խաղարին երաղին մէջ և կասէ նը-  
րան. — «Զուլֆա Խաղար, ասկէ վերջը  
աշխարհիս վրայ ոչ մի բանէ մի վախնար,  
որովհետեւ ըու ճէմբոլատդ թըլլսիմ ա-  
ռաւ. ինչ որ ուղենաս՝ ճէմբոլատով կա-  
րող ես կատարել», կրսէ ու կ'երթայ:

«Մեր Խաղարն էր, Աստուծմէն շնորհը  
առաւ ու վրան էլ այնպէս ուժ եկաւ,  
որ այդպէս ուժ ոչ քրզերն ունին, ոչ էլ  
մի ուրիշ մարդ: Ու երբոր զարթեցաւ,  
Խըլլսէն (Եռանդէն) 7 թիզ վեր թռաւ  
ու կայնաւ 39 հատ 40-զլիսանի զեւը ին-  
մէջ: 39 հատ քառասուն զլիսանի զեւը

երբ տեսան քաջ Խաղաղի կարմրած աչ-  
քերը՝ խիստ վախցան ու միաբերան ա-  
սացին.

— Կըներես, Զուլֆա Խաղար աղա,  
որ քիչ անհանգիստ արինք. բայց մենք  
եկանք ըու մօտ մէկ խնդիրքի համար:  
Ամառն, զու զիտես, կտտարէ մեր խըն-  
դիրքը...

— Ինչ խնդիրք է որ, հարցուց քաջ  
Խաղարը:

— Մենք 40 եղբայր էինք և ունէինք  
1 ըուր, որ իր գեղեցկութիւնով կասէ՝  
«Արև, մի ծագիր, ես կրլուսաւորեմ ալէմ  
տիւնեան»... Հիմա էլ մէկ հատ սևերես  
40 դլխանի դկ եկած՝ զօրով տիրացած  
է մեր ըրոշը և միայն մեր ամենամեծ  
եղբայրը մնացած է մեր ըրոշ մօտ... Մենք  
կուղենք կռւել ու տղատել մեր քրոշը,  
բայց կասեն սևերեսը թրլրսմանած  
թուղթ ունի վրան՝ չենք համարձակիր...

— Է՛, է՛, եղաւ, կարճ կապեցէք, կա-  
սէ քաջ Խաղարը,—մտքերդ հասկացայ՝

կուղէք ձեզ ընկերանամ ու ազատեմ ձեր  
բոյրը... Լաւ, կուզամ, կազատեմ, հոդ մի  
անէք... Կասէ ու, աչքը սիրիմ այդպէս  
կտրիճին, ձեռքը կառնէ թրլրսիմ առած  
ճէմբոլատը և կիյնայ դեերին առջե:  
Շատ կերթան, քիչ կերթան, մէկ էլ կր-  
տեսնեն, որ հընզարան հընզար (հազարը  
հազարաց) սեերես դեեր մեծ սեերես  
դեին կրծառային: Մեծ սեերես դեն էլ  
39 հատ 40 զլխանի դեերի քրոջ հետ  
ճիմպիշի մէջ է (կրդւարձանայ):

— Մեկդի՝ կեցէք, տեսնեմ, կրպոռայ  
քաջ Խազարը... Եա՛, քեզ եմ ապաւինել,  
սուրբ Սարդիս, ուր ես, հասիր, ինձ ամօ-  
թող չիթողնես... Ու երբոր ճէմբոլատը  
կրշտէ օդին մէջ և կրխոյանայ «պրա՛-  
ռա՛ռա՛» առաջ՝ դէպի սեերես դեերը՝ մի  
տինթարթում չարդ ու փշուր կանէ  
բոլոր սեերես դեերին, որոնց հետ կսպան-  
ի և՛ սե դեերի պարագլուխը—աղջկայ  
փաղցնողը, և՛ ինքն աղջիկը և վերջինիս  
ամենամհջ եղբայրը... «39 հատ 40 զրլ-

խանի գեերը թէև շատ շնորհակալ կը-  
լինին հերոս Խաղաքէն՝ իրա քաջութեան  
համար, բայց շատ էլ արցունք կըթափէն  
իրենց աննման քրոջ ու մեծ եղբօր հա-  
մար...

«Հերոս Խաղաքի սիրար չդիմացաւ  
39 հատ 40 զլխանի գեերի լացուկոծին,  
և նու ծունկ չոքեց ու ազօթք արեց Խը-  
զրին, որ գոնէ նահատակ աղջկայ հոգին  
լեա դարձնէ։ Հերոս Խաղաքի խնդիրը  
կատարւեցաւ և մեռած աղջիկը սաղացաւ  
ճէմբոլատին զօրքովն ու Խըզրի շնոր-  
հքով։

«39 հատ 40 զլխանի գեերը շատ ու-  
րախացան որ իրենց արեգակնանման քոյ-  
րը նորէն ողջացաւ և խորհուրդ արին  
որ 40 օր 40 զիշեր հարսանիք տնել և  
իրենց քրոջ աստղը կապել հերոս Խաղա-  
քի աստղին հետ—ածուսնացել նրանց։  
Բայց հերոս Խաղաքը չը համաձայնւեց  
ու ի՞նչ ասաց, զիտէ՞ք։

— «Ես հայ եմ, ասաց, հայի օրէնքով

2 կին առնել չի լինիր. ևս մեկ կին ունիմ, որ մինչեւ 40 պարկ ոսկի չ'տանիմ՝ ինձ տուն լնգունելու չէ:

«39 հատ 40 դիմանի դեերը անմիջապէս բերին 40 պարկ ճինիվիզի ոսկի (հին հոռվմէական?) և հերոս Խաղարին փառքով ու պատւով ճամբայ դցեցին...

«Այդ ճէմբոլատը, կասեն, մինչեւ հիմա կայ մի հայի վանքի մէջ»: («Ճէմբոլատի հերեաթէն»):

III. Կիւրզի (gürzi), այդպէս կըկոչւեն այն հրաշալի դունտերը (Երկաթ, արոյք, պողպատ, կապար ևն), որոնք կը կրշուն անթւելի ծանրութիւն և որոնցմով առասպելական հերոսները վերոյզրեալների նման հրաշքներ կրդորժեն: Այդպիսի կիւրզիներէն մին էր, որ գործ կածէր «Ճահ Խսմայիլ» հերեաթի հերոսուհի Արապիկէնկին:

IV. Ածելի (бритьва). հրաշալի զէնքերի շարքին կրպատկանի նաև ածելին: Մի ուշքեաթի մէջ, երբ հերոսը «աղջիկն ա-

ռաւ ծիու դաւակը և սկսեց փախչիլ, կէս  
ճանապարհին նկատեց, որ իր ետևէն ա-  
հագին փոշու ամպ կըքարձրանալ... Աղ-  
ջիկը հասկացուց Պոստանձի օղլիին \*),  
որ դեն է եկողը... Պոստանձի օղլին նե-  
տեց իր մօտի ավառնած ածելին դէպի  
յետ և ահա արար-աշխարհ սուր-սուր  
ածելի դարձաւ ու դեի ոտքերը կտրտե-  
ցան...» («Զէրմէի մանկա» հէքեաթէն):  
Կան և ուրիշ տեղեր նոյնաղիսի ածե-  
լիներ:

V. Խուտուռ թոխմախ (khoudourr tok-hmakh), որ կընշանակէ «կատաղի՛ր, մուրճ» կամ «կատաղի մուրճ» և որին կըփերա-  
գլրւի մի շարք հրաշագործութիւններ:  
«Զինումաչինալ թագաւորին աղջիկը մին-  
չև որ «խուտուռ թոխմախ»ի ինքնու-  
րոյն հարւածները չ'կերտա՞ չի յախնեց  
իւր «սիրողի» անունը...»:

\*) Հէքեաթի գլխաւոր հերոսի անունն այդ-  
պէս է:

«Եօթն ակէն» հէքեաթին մէջ էլ գըլ-  
խաւոր հերոսը (թէմպէլլ) «խուտուռ,  
թոխմախըմ, խուտուռ» երբ կասէր՝ հրա-  
շաղործ մուրճը կը հարւածէր նրա թրշ-  
նամիներին, մինչեւ որ վճարէին իրենց գո-  
ղացածի փոխարէն, կամ խարդախած ա-  
ռարկան ետ դարձնէին:

VI. Գորիզ (coris). աւելորդ չի լինիլ յի-  
շել այստեղ գորիզը, որ մագնիսացրած  
երկաթն է և որով քրդուհին կ'ափսոնէ  
(ափսոն կանէ) այս կամ այն դժբաղդու-  
թեան ենթարկւողին—վախեցողին, «լեղին  
պատռողին», ջերմահարին ևն ևն: Միե-  
նոյն բառը «Կորիզ» հնչումով յայտնի է  
Բալուցի հայոց բարբառում և կրնշանա-  
կէ ճէօհէրլի կամ չահըլլի (տես «Ըլմշէ-  
րի» մեկնութիւնը):

VII. Զէլիկ չախու, զուտ պողպատէ  
դանակն է, որով մաժունը կրմակարդէն  
և կաթէն պանիք կըշինեն:

4. Զինագործները.

Տաճկաց-Հայաստանում զինագործութիւնը հայերի ձեռքին է։ Զինագործներին ըրդերը կ'անւանեն. «Խըլլընի, թըֆընքնի, սիլահքեար, պիշախնի» և մեծ յարգանք կրտան նրանց։ Հայ զինագործը ըրգու երկրորդական Ալլահն է, որի զրլխով երդում կանէ։ Ուշագրաւ է, որ հայկական կոտորածների ժամանակ շատ տեղերում քրդերը խնայեցին հայ զինագործների կենացը և ցոյց տւին վերջիններիս ամենազօրեղ պաշտպանութիւն ընդդէմ տաճիկ զօրքերի և թիւրք խուժանի, «զինագործի ըրզը (պատիւր) մեր ըրզն է» ասելով։

Իւրաքանչիւր քիւրդ ինքն էլ կարող է քակել և նորէն շարել բոլոր զէնքերը։ Նոյն իսկ ըրդուհիները՝ ծանօթ են զինագործական մի քանի տարրական զիտելիքների և ի պահանջել հարկին անծամբ դուրս կուզան ցեղի թշնամեաց դէմ։

Զինագործներն իրենց տւած ապրանք-ների փոխարէն կ'ստանան քրդերէն՝ իւղ,  
պանիր, մորթ և ն: Նահապետական թրամ-  
փան (trampa) — ապրանքն ապրանքով փո-  
խարինելու սովորութիւնը — մինչեւ այսօր  
կըսահպանւի քրդերի մէջ: Քիւրզը փող  
կունենայ կոմ մարդկանց կողոպտելով,  
սպանելով, գողանալով ևն և կամ հազա-  
րէն մէկ ժախու որեւէ բան քաղաք տա-  
նելիու:

---

Ժ.

## ՈՒՑԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

1. Քրդական կերակրներ.

Քրդու խոհանոցն աղքատ է. նա ոչ  
ծանօթ է և ոչ էլ կրդործածէ բարդ կե-  
րակուրներ։ Ահա քրդական կերակուրնե-  
րը, որ միառամբ կընկարագրեմ այստեղ։

I. Կոմա կամ վիաթիլա (goma, patila).—  
Մեղ ծանօթ սալաբարին վրայ կլորակ  
ծեռվ թանձր խմորն եփելէ լետոյ՝ կր-  
հանեն նրան կրակամոխրի տակէն, որ  
լեցրել էին խմորին վրայ՝ սալաբարի ե-  
րեսին տեղաւորելէ լետոյ։ Թաճնձր հացի  
ներըեր, երեսը և կողերը հաստ շերտով

կարմրած են: Երեսի կեղեն զգուշութեամբ կրհեռացնեն վրայէն և ապա փխրուն միջուկը ձեռքով լու կրփշրեն, որ աւազի նման կրկուտակւի ներքեի կեղեին մէջ: Այդ կեղեն ստացած է կլոր և խորը սկաւառակի ծեռւուոչ մի տեղէ ոչ մի ճեղքւածք չունի: Մինչ տղամարզը հացի միջուկը փշրելով է զբաղւած՝ անդին քըրդուհին մեծ տապակով կրհալէ կարագ իւղը ու կրտազէ: Այդ իւղն առատօրէն կրկեցնեն փշրած միջուկին վրայ, որ անբողջովին կրթրջւի և իւղը լճանալով կրբարձրանայ մինչեւ ներքեի կեղեի սլրուկունըները: Այնուհետեւ թեերը կրոռթտեն ու կրմօտենան արդէն տրտրաստ կոմոլին, ու կսկսին ձեռքերով դունդեր շինել ու իրար ետեէ կուլ տալ առանց ծամելու: Երեմն կոմայի խմօրը կրշաղեն կաթով: Կոման քրդու ամենույարդի խմորեղէնն է, որով կրհիւրասիրէ ամենաբարձրը հիւրերին:

II. Զէրէվէթ (zerevət) կամ Զարավաթ

(zaravat). — յորնի ալիւրէ բարտկ լաւաշ  
հայը սաճի վրայ եփելէն յետով, քրդու-  
հին մածուն կըջրէ սխտորջրով, և ապա  
մի խորունկ աման գնելով կրակամոխրի  
վրայ՝ կրլեցնէ նրա մէջ 2—3 դդալ մա-  
ծուն, որի վրայ էլ կրղնէ մի լաւաշ և  
դդալով կրտեղառորէ, որ լաւաշը թրչւի  
մաժնում. ապա նորէն կրլեցնէ մի քիչ  
մածուն, նորէն մէկ լաւաշ... ալդպէս շո-  
րունակելով մինչեւ որ մտաղրեալ քանա-  
կութեամբ լաւաշն սպառի: Սխտորջրած  
մածունը ժածկած է լաւաշները: Այնու-  
հետեւ ամանին տակը նոր կրակամոխրը  
(մրեղ) քաշելով՝ կրթողնեն որ լաւաշը  
բոլորովին ծծէ մածունը, որմէն յետով մի  
կողմ կ'առնեն ամանը, դանակով աղիւսա-  
կածե կրկորատեն կերակուրը և վրան  
հալած իւղ ածելով՝ կարւածքները ժած-  
կելու չափ, կսկսին բռով ուտել արդէն  
պատրաստ պատւական զէրէվէթը:

III. Բարակ հում լաւաշն է, որ իւղի  
մէջ կարմրացնելով կրպատրաստի պի-

շի կոչւող կերակուրք, որ կուտեն ոռւ-  
փով (աղքածէց) կամ մեղրով:

IV. Լաւաշի խմորը բարակացրած՝  
պատրաստ է. քրդուհին բաժակի բերանով  
կլոր կլոր կրկարատէ խմորը, նման մեր  
եկեղեցւոյ մասին և այդ կլորիկ փոք-  
րիկ լաւաշին մէջ կրդնէ մի քիչ վշշած  
թարմ պանիր կամ իւղով ու սոխով  
տապակած միս, ու այդ լաւաշին վրայ  
կրծածկէ մի երկրորդ լաւաշ. երկու լա-  
ւաշների ծալրերը, շուրջը, մատով ծալ-  
ծըլելով կրծիացնէ. այդպէս կրշարունակէ  
պատրաստել պէտք եղած քանակութեամբ,  
որմէն յետոյ այդ խմորեղէնները կրտա-  
պակեն իւղում ու կուտեն: Այդ կերա-  
կուրք կրկոչւի բէնիլի կամ կոշելի:

V. Տաք ջրում բաւականաչափ աղ զբ-  
նելէն յետոյ մի քիչ էլ փայտի մոխիլը  
(քիւլ) կրխառնեն հետը և նրա վրայ էլ  
քչիկ-քչիկ ալիւր լեցնելով՝ կրպատրաստեն  
այն նոսր խմորը, որմէն քրդուհին զրդա-  
լով կրլեցնէ՝ օճաղին վրայ տապակում

հալւող իւղին մէջ, մինչև որ տապակին ատակը ծածկւի, բայց մէն մի՝ գդալ խրմորը առանձին մնայ, չիսառնւի միւսներին։ Խմորները իւղում կըրդրջին ու կըստանան սպունգի ձև։ Լաւ կարծրելէն յետոյ վար կ'առնեն և նորը կըլեցնեն։ Այդ հետաքրքիր խմորեղէնը կըկոչւի «խատի լոխմասի» (khadi lokhmassi), որ կը նշանակէ «դատաւորի պատառ»։ Խատի լոխմասին էլ կուտեն «քաղցրեղէնով»։

VI. Միջին թանձրութեամբ խմորը պատրաստ է և քրդուհին մաղլ երեսի վայր դարձրած առած է առջեր. կըկարէ մի-մի փոքր գունտ խմոր և բութ մատովը կը ճնշէ այդ խմորը մաղի ծակոտիքին վրայ, որով խմորին վրա ոյ էլ կըդոյանան խիտ առ խիտ բշտիկներ. ահա այդ մատնոցանման խմորներն են, որ իւղում տապակելով՝ կունենանք «մաղի վրայ» կոչող կերակուրը։

VII. Ցեղապետների ապարանքներում

արդէն մտած են փաքլավա և խատէյիֆ  
կոչւող յայտնի արեւելեան կերակուրները,  
որպէս և ճիմիլան (djimila) որ հայկական  
ճմուռն է՝ թաժա հացը իւղում թըրջե-  
լով:

VIII. Զաւարի, կորկոտի, բընձի և  
եղիպտացորենի փելաւ և ապուր:

IX. Մսաշրում սովոր խոշոր-խոշոր  
մանրելով կ'եփեն եախնի՞ն. բացի այդ՝  
եախնի կրպատրաստեն շիրիկով, ձէթով,  
զմակով:

X. Ոչխարի, այծի և հորթիկի ոլոք-  
ներով ու գլխով՝ խառն ստամոքսի (շի-  
րիտա), փորի (իշքէմպէ) և ճարպի ման-  
րամսի (խրյմա) հետ կեփւի այն համով  
հոտով կերակուրը, որ կըկոչւի քէլլէ փա-  
շա (խաշ): Կովի, եզան և դոմէշի խաշը  
կըկոչւի սինկիր (singuir):

XI. Ոչխարի, այծի և հորթիկի նախ-  
ճամէջի կամ նախազի մէջ, լաւ լւալէն  
յետոյ, կըլեցնեն սով, պղպիղ, սև պղդ-  
պեղ, զանազան կանաչեղէննիր և բըինձ

կամ ձաւար և կ'եփեն մսաջրում։ Դա է  
հռչակաւոր պումպարը։

XII. Թարմ քաղցուին (շիրէ) մէջ ա-  
լիւր խառնելով ու եփ տալով կ'ստացւի  
մալէզը (malés), որ կուտեն վրան իւղ  
ածելով կամ ձուածեղով և կամ ընկու-  
զով։ Այդ իսկ մալէզէն կը շինեն պաստեխը  
և ոռնիկը ընկուզով (սուճուղ)։ Մալէզ  
կրկոչեն քրգերը և այն խիւսը, որ լա-  
զերի և ալոց մօտ յախտնի է լանթակ  
անունով։

XIII. Տութմաճը (doutmadj) ոչ այլ ինչ  
է, եթէ ոչ հայկական արշտայի մի քանի  
տեսակները, որոնցով ապուր կեփեն կամ  
իւղուց տապակելով կուտեն։

XIV. Ոսպով, ճուլպանտով, լոպիով,  
եղիպտացորենով, սիսեռով և այլ հա-  
տիկներով ապուրները սովորական կերա-  
կուրներ են, ինչպէս և թանապուրը,  
կաթը, կաթնապուրը և թանը... Թանը  
— դա քրգու արիւնն ու մարմինն է. «Տէ-  
օվ է թըռշ, նանէ քօրէկ» (թթու թան

և կորեկ հաց), դա այն պատւական կերակուրն է քրդու համար, որ նա օրական 10 անգամ ուտելով չի ծանծրանար: Ապա պէտք է յիշել պանիրը, սերը, եղը, թորախը, խերը, մածունը, զանազան թթւեղիններ, թարխանայ (զդմաճ), թընորիկ կամ քէշկէկը, ևալն ևալն, որոնք կրղարդարեն քրդու մշտաբաց և հիւրառէր սեղանը:

XV. Ի վերջոյ յիշենք և Սլեմանին կամ Սիւլէմանին (sülemani) և համարեա յիշած կրլինիմ քրդական բոլոր կերակրոները: Սիւլէմանին դեռ նոր տեղացած ձիւնն է, որ վրան ուուի լեցնելով կուտեն:

Աւելորդ չի լինիր նկատել, որ վերոյիշշեալ կերակրներէն շատերը գործածական են և՛ հայերի մէջ:

Ապա երկու խօսք միայն հիւրասիրութեան մասին: Այդ կողմէն Հայն ու Քիւրդը եղբայրներ են. ինչպէս Տաճկա-Հայաստանցի Հայի, այդպէս և քրդերի սե-

զանը միշտ բաց է բոլոր պատահական, ծանօթ-անձանօթ, ազգակից և այլաղդ, թշնամի և բարեկամ հիւրերի առաջ:

Կարելի է ապրել քիւրդ ցեղերի մէջ ամիսներով առանց մի դահեկան ծախսելու: Քիւրդը ոչ կը ծանձրանալ ոչ էլ կը դժկամակի կամ երես կրդարձնէ հիւրի յարատե ներկայութենէն:

— «Հիւրն իր ուտելիքին չափ լիութիւն կը բերէ հետը», կասէ քրդական առածը, այդպէս և հետեւալները.

— «Հիւրն Աստուծոնն է, չէ կարելի չընդունել»:

— «Աստուած կամ հրեշտակները երբեմն հիւրի դիմակին տակ կը փորձեն մարդկանց սրտերը. վայ այն մարդուն, որ յետ կրդարձնէ Աստուծոյ հիւրերին»: Այդ և դրանց նման բազմաթիւ առածներ ու աւանդութիւններ կան, որոնց մէջ կ'արտացոլէ քրդական ցեղերի հիւրասիրութեան բարձր լատկութիւնը: Բայց այդ երբէք չի խանդարեր, որ իր մօտ հիւրա-

սիրութիւն գտած մարդը, նոյն հիւրասիրողի ծեռքով կողոպտւի և մինչեւ անգամ սպանւի, նրա բնակարանէն հեռու տեղերում:

Ի լրումն ամենայնի առիթէն կօդտւիմ յայտնելու, որ Քրդերը թէեւ, իբր թէ, օրական երեք անգամ կուտեն, բայց իսկապէս քրդուն համար ուտելու ժամանակ է, երբ նա քաղցած է, թէկուզ օրական 10 անգամ: Քրդերը չեն սիրեր և չունին կենցաղավարական որեւէ ծրագիր: Այս ըոպէին նա կուտէ՝ քեզ նման 10 մարդու կշաացնող կերակուր, մի ուրիշ անգամ, ընդհակառակը, նոյն քիւրդը չափէ գուրս սակաւակեր է:

Այսպէս թէ այնպէս, քիւրդը կուտէ և կըխմէ աղանաբար:

2. Խմելիք.

Քրդերը, որպէս խմիչք կրգործածեն... չայաստանի զուլալ, բիւրեղանման, առատանոս և կենսատու ջրերը, որոնք ամեն մի քարի, ամեն մի թփի տակէն կրզրլ-

զըլան հեղասահ և քու ախորժակը կը-  
զըրգուեն։ Ամեն գիւղ ունի իրա պատւա-  
կան, անմահական աղբիւրները, որոնցմէ  
վազող մարդարափ անվերջ հատիկները  
կըպարգեեն քրդերին փառաւոր առող-  
ջութիւն։

Եթէ քրդուհին կամենայ մի առանձին  
յարգանք ծատուցանել իրա այս կամ այն  
հիւրին՝ նրա ոտքերը լւանալէ յետոյ կը-  
հիւրասիրէ նրան ուուփի շէրպէթով կամ  
խուշապի ջրով—մրդաշրով։

Սուրճի գործածութիւնն ընդհանրացած  
չէ, բայց ոմանց մօտ, և աւելի խոնախ-  
ներում, կըհանդիպինք սուրճի փոքրիկ-  
փոքրիկ բաժակներին։ Սուրճը սովորաբար  
կըխմեն դառը, առանց շաքարի։

---

Ժ.

Յ Ա Ր Ա Ա Ն Ի Ք.

1. Խաղիրկուն.

Հարսանեաց համար քրդերն ոչ ոքին  
յատկապէս հրաւէր չեն ուղարկեր: «Լսողը  
կուգայ», «ինձ սլատւողը կուգայ», «ու-  
զողը կուգայ», այսպէս կասէ քիւրդը:  
Բայց հարսանիքատիրոջ տնէն հեռւուծ  
դժնւող ծանօթ-բարեկամներին «վինկ  
տայիշ» (հրաւէր) կանեն:

Հարսանեաց նախնթաց երեկոյեան, երբ  
հարսնեորները և մանաւանդ փեսի հա-  
սակակից ընկերները հաւաքւած են փեսի  
տանը, այդ երեկոն կանցնի շատ ուրախ,

որովհեաւ ներկաներէն ով ինչ հիւնար ունի՝  
պէտք է ցոյց տալ: Խաղի երեկոյ է ալդ, որի  
համար էլ Բալուցիք կը կոչեն խաղիրկուն:  
Էլ զանազան մարմնամարզական խա-  
ղեր, էլ աչքակապութիւններ (կէօղպայ-  
նի), էլ խմբական պարեր, էլ կատակներ  
ու սրախօսութիւններ հազար ու մի տե-  
սակ... էլ ինչե՞ր ասես՝ ալդ երեկոյ տեղի  
չեն ունենար:

Տավուլ-զուռնան մէկ կողմէն կըքքքքէ  
երիտասարդ քրդերի հոգին և կըհրաւիրէ  
նրանց գիւղի ընդարձակ հրապարակում  
սուսերամարտութեան:

Ղաւալը միւս կողմէն հաւաքած է իր  
շուրջը բաւական ժանրագլուխներին և  
«ախ»-եր կըքաղէ նրանց սրտի խորքերէն:

Տափն ու զանազան շւիները կանանց  
կողմն են տիրապետել ու եռք կըծգեն  
ճահիլ տաքարիւն քրդուհիների կուրծքն  
ու թեերը:

Տուտուկները մանուկներին ու պատա-  
նիներին են զրաւել մի ալլ տեղ, ուր նո-

բանցմէ իւրաքանչիւրը պէտք է ցուց տայ-  
իր շնորհը «տուտուկ փչելում»:

Աշուղներն էլ իրենց սազերով մատըն-  
ւած չեն անուշադրութեան, նրանք էլ  
ունին իրենց երկրպագուները, երկու սե-  
ռէն էլ, որոնք լարւած յափշտակութեամբ  
անձնատուր են եղել աշուղների բանա-  
կըոփիւներին:

Մի բան, որ կըպակասի այդտեղ, դա  
կարգն ու կանոնն է, ներդաշնակութիւ-  
նը: Մնացեալ ամենայն ինչ կատարեալ է,  
ինչպէս կասեն Բալուցիք՝ «մարն զմա-  
նուկը չի ճանչնար»: Այդ բոլոր «ուրա-  
խութիւններին» և նրանց առջնթերակից  
կերուխումին հաւասարապէս մասնակից  
է և ինքը փեսացուն:

Այդ գիշեր ոչ ոք քնելու չէ. ասենք՝  
եթէ մէկը կամենալ էլ, ոչ մի կերպ չէ  
կարող դլուխը բարձի դնել այդ բարի-  
լոնում:

2. Հարսնան.

Միւս օր կրհաւաքւին բոլոր հարսնեռները և նախաճաշիկէն յետով, երկսեռ ահագին մի բաղմութիւն, կրդիմեն դէպի հարսի հօր տունը: Կ'երթան՝ ձի, ջորի, էշ հեծած, սալլի վրայ նստած և հետիոտըն: Տավուլ-զուռնան ճանապարհին ականչ կրխլացնէ իրա միապաղաղ անվերջ «խրլըն խալխնի» մառշով: Հետիոտն քալող երիտասարդներէն երկ-երկու հոգի մեծ ոգեսորութեամբ կրմենամարտեն որով ու վահանով, և իւրաքանչիւր զոյդ կ'աշ խատի ուղեկիցների աւելի մեծ բաղմութիւն զրաւել իր շուրջը:

Հարսնեռների առջեւէն կ'երթալ թախտրավանը: «Թախտ» կրնշանակէ գահաւորակ, ըավան կամ «ընվան»—ճամբալ, և հետեարար թախտրավան կրնշանակէ՝ ճամբորդական պատգարակ կամ գահաւորակ կամ դեսպան: Թախտրավանը բաւական նման է մեր դիակառքերին:

Վրան ամողհովանի, ֆուրդոնի ծածկոյթի նման, իսկ ներքեւէն երկու երկայն ծողեր՝ զարգարւած դոյնզզոյն կտորներով (լաթ) ու ծաղիկներով. այդ ծողերի ծայրերին կը լծեն և ընտիր չորիներ, որոնք կը կը իրենց իրենց զլսին, զզին ու կրծքին վրայ բաղմաթիւ բոժոժներ ու զանգակներ:

Փեսի տնէն գնալիս՝ թախտրավանի մէջ կը նստի փեսան կամ նրա մալրը և կամ մերծաւոր ազգականներէ մէկն ու մէկը. իսկ հարսի հօր տնէն վերադառնալիս թախտրավանումը կրտեղաւորեն հարսին, «հարսնեղբայրներին» ու «հարսնքոյթերին»:

Հարսնառ գնալիս առնւազան մի քանի տասնեակ սպառազինւած մարդիկ անհրաժեշտ են, որոնք իրենց հրազէնների որոտով պիտի առանձին փայլ տան հարսանեաց այդ հանդէսին:

3. Առեանգումն և մերժումն.

Աղջիկ փախցնել կամ առեանդելը քըր-  
դերի մէջ խիստ սովորական և պատւա-  
ւոր բան է: Բայց առեանդման էլ զանա-  
գան շարժառիթները կըլինին, որոնցմէ  
մի քանիսն անհրաժեշտ կընամարեմ այս-  
տեղ լիշել, որովհետեւ մեր նկարագրու-  
թեան ամբողջացումն այդ կըպահանջէ:  
Ոհա.

I. Եթէ նշանագրութենէն յետոյ երկու  
խնամիների միջև որևէ անախորժութիւն  
է տեղի ունեցել՝ զօրեղ պատճառերով,  
այդ դէպըում աղջկայ հալրը ամենայն  
իրաւումբ կարող է յետ վերագարծնել փե-  
սի կողմէն վճարւած դիլսագնի (պաշլող)  
մասը, որ նշան է իր աղջկայ ձեռքը մեր-  
ժելուն և մերժելէն յետոյ իրաւունք ու-  
նի ուրիշին ծախելու իր մալլ: Սակայն  
աւելի բարւոք կընամարւի սպասել՝ մինչեւ  
մերժւած մեսացւի ամուսնանալը մի այլ  
աղջկայ հետ: Սպասելու առաւելութեան

պատճառները երկու են.—նախ՝ մանչը  
ամուսնանալով ուրիշի հետ՝ յոյսը կըկտրէ  
և աչքը կըհեռացնէ մեր աղջիկէն և երկ-  
րորդ, որ աւելի կարեռը է, ճակատագի-  
րը մեր աղջկայ և այդ տղի աստղերը  
մօտեցուց իրար և մենք մեր կամքով  
հեռացըինք, արդ՝ մանչուն աստղը ու-  
րիշ մէկի աստղին չ'միացած՝ անար-  
դարութիւն կըլինի մեր աղջիկը ծախե-  
լը, չէ որ մանչը տան սիւնն է, աղջի-  
կը—էլի պատի ծեփ և ծախու մալ:  
Ասենք աղջկայ հայրը որոշ չափով սլար-  
տաւոր էլ է ալգակէս վարւելու, որպէսզի  
նախկին վիեսացուն շատ չիզրդուի և եր-  
կուստեք անհաշտ դրութիւնն չ'ստեղծւի:  
Եթէ հնարաւոր է, պէտք է այնպէս վար-  
ւել, որ մալը գնողը (վիեսացուն) ինըն էլ  
սառի և աչքաթող անէ նախկին սիրոյ  
առարկալին: Ապա թէ ոչ՝ մալն աղետա-  
բեր փոթորիկ կըհանէ հօրը գլխին, որ  
ցանկալի չէ,—կարող է մալի պատճառով  
կոփու ծագել երկու կողմերի միջև և վեր-

ջանալ բաղմաթիւ կեանքերի կորուստներով ու հիմք ծգել ժառանգական թրշնամութեան—վրէժխնդրութեան։ Հակառակ դէպքում, նախամեծար համարելու է, եթէ փեսացուն դոչաղ տղամարդ է, զայ ու առևանդէ մալին և ալդպիսով վերջ դնէ քրոնիքական վէճին։ Վերջին դէպքում փեսացւին անհրաժեշտ են սպառազինւած մարդիկ։

II. Երբ քիւրդ տղամարդը կըսիրէ այս կամ այն քրդունուն, որի ծնողքը սակայն հակառակ են նրանց ամուսնութեան, ալդ դէպքում տղամարդը իր համախօններով պէտք է յարձակւի աղջկայ հօր տանը վրայ և փախցնէ իր սիրած աղջկան, որի ժամանակ նոյնպէս սպառազինւած ոչժերի անհրաժեշտութիւն կ'զգացւի։

III. Ենթագրենք որ Ալին ժառանգական կամ մասնաւոր թշնամութիւն ունի Ոլիին դէմ, որը մի գեղեցկուհու հետ նրշանւած է և շուտով պիտի ամուսնանայ. լու պէտք է ջանաս ամեն կերպ, Ոլիին

վրէժ լուծելու համար, «յափշտակել»  
նրա սիրուհուն՝ կամ ուղղակի հօրը տու-  
նէն և կամ հարսնառի ժամանակ, երբ  
աղջկան իր հօր անէն առած՝ կրվերա-  
գառնայ Ոլին: Յանախ կրպատահի, որ  
առեանգման միջոցին սոսկալի կոիւ կր-  
ծտղի մէկէ առելի ցեղերի մէջ և տեղի  
կուտայ սոսկալի արիւնահեղութեան: Ա-  
ռեանգւողը շատ անդամ կրլինի հայ, ա-  
սորի կամ մի ալլ քրիստոնեայ ժողո-  
վըրդի աղջիկ կամ հարս, որի համար էլ  
նոյն դալմազալները տեղի կունենան:

IV. Աղջկայ ձեռքը կրզւացւի և՝ այն  
պարագայում, երբ փեսացուն չ'կարողա-  
նայ որոշեալ պայմանաժամին վճարել աղ-  
ջրկայ գլխազինը, որ կրլինի դրամ կամ  
ընտանի կենդանիներ, զէնը, վարելահող  
ևն ևն:

4. Խալաթ և Տիտղոս.

Ենթագրելով որ վերոյիշեալ անտիոք-  
ժութիւններէն և ոչ մի գոյութիւն չու-

նի՞ մենք մեր ընթերցողներին հետ հետակենք մեր հարսնեորների ընթացքին, որ տավուլ-դուռնալով ու նկարազրւած բաղմութեամբ կրգիմեն դէպի աղջկայ հօրտունք:

Եթէ երկու խնամիների բնակավայրերի միջև կան ուրիշ գիւղեր, աւաններ, եալ-լաղներ, օպաներ... հարսնեորները կանգ կառնեն այդ տեղերում և շնորհակալութեամբ կրնգունին տեղացիների մատուցած ուտելիքն ու խմելիքը՝ հարսնեորների համար և խալաթը (հագուստեղէն, զէնք, զարդ, զորդ ևն) փեսացւի և հարսի համար: Յահախ երբ փեսացուն կամ խալաթ տւողը ցեղապետի անէն են, խալաթը կրլինի թանգանոց, օրինակ. մի զուգ չորի սիրուն թամբերով զարդարւած, կամ նժոյգ: Կրպատահի որ փեսացուն թէև մարապալար դասէն է, բայց քաջութեան պատճառով սիրւած ցեղապետէն, երբ կ'անցնին վերջնի տան մօտէն՝ ցեղապեար զուրս կուդայ պատշզամբ և

կրշնորհէ փեսալին որևէ տիտղոս՝ անւանելով նրան «պէկ», «աղա», «միլ» և իսկ եթէ չայ է փեսացուն և արժանի սեպւած այդպիսի բարձր շնորհի՝ ցեղապետը իր ձեռքով կրփաթաթէնրա նիտր կարմիր լաթ և կանւանէ «մելիք», որպէս կրկոչւին նրանք մինչև իրենց մահը:

5. Հարսի հօր տանը և վերջին գնումն հարսի.

Հարսնեորներն աղջկայ հօր տանը մօտենալիս՝ միաժամանակ կարծակին բոլոր հրաղէնները. վառօդի ծուխը թանձր ամպի նման կրպատէ խնամու. տունը. չ'անցած 2 րոպէ՝ կրկին կ'որոտան հրաղէնները, և այս անզամ աղջկայ հօր կողմէն էլ 1, 2 կամ 3 հրացան կարծակեն, որ կընշանակէ թէ «պատրաստ ենք ընդունելու» (նշան սիրոյ և խաղաղութեան): Իսկ եթէ աղջկայ հօր կողմէն չ'պատասխանեն եկտորների կրկին հրացանածզութեանը, լոռութիւնը նշան է

արիւնահեղութեան, ապացոյց որ աղջիկը  
տալու միտք չունին: Մի կողմ թողնելով  
այդ պարագան, որ ամեն ինչ կախւած  
կըլինի բայցառապէս զէնքերի շնորհէն,  
ևս կըշարունակեմ նկարագրութիւններս  
հանդարտ եղանակով, երբ լոռութեամբ  
չեն պատասխանած:

Հարսի հօր կողմէն արծակելով 1—3  
հրացան՝ կրփութան խմբովին դիմաւորել  
խնամի-հարսնեորներին, դեռ տուն չիհա-  
սած: Ահա այդ միջոցին միայն արդէն  
իսկական հարսանիքն (վեյնա—վեյվա) ըս-  
կսած կըհամարեն երկու կողմէն:

Ապա ընդարձակ հրապարակի վրայ,  
երկու կողմի բաղմաթիւ հարսնեորները  
կըկազմեն մի մեծ օղակ, որի կենզրոնու-  
մը կընւազէ տափուլ-զուռնան և երկու  
խնամիների կողմէն մէկ-մէկ կամ երկ-եր-  
կու հոգի, մերկացրած սրերով ու վահան-  
ներով, կսկսին մրցիլ: Այդ գործողութիւնն  
անպայման կըկատարէի և այն պատճա-  
ռաւ, որ իրր թէ փեսի կողմէն հրապա-

րակ եկողը վճռել է զէնքի ուժով խլել  
դիմացինի թանկագին ապրանքը — մալէ-  
վայը կամ մալէպան — աղջիկը։ Այդ նը-  
շանակալից ու հետաքրքրիր մենամարտու-  
թեան ականատես վկաչ է և փեսան, որ  
երբեմն չի քաշւիր խրախուսական բառե-  
րով դիմելու իրա կողմնակցին (սովորա-  
բար եղբօրը կամ հօրեղբօրորդուն)։ — Ապա,  
իմ քաջ, երեսս ճերմակ պահէ, տակը չի  
մնաս։ Սրբագործւած սովորութիւնների  
կարդն է անցած այդ գործողութիւնը,  
բայց ես մի անդամ Ալխատիանում ակա-  
նատես եղաչ աղջկաչ կողմի մենամարտո-  
ղի սպանւելուն, ողեորութեան միջոցին  
փեսի եղբայրը սրով ճղեց հակառակորդի  
գլուխը։ Սակայն զարմանալի բան, այդ  
սպանութիւնը մաղաչափ անգամ փոփո-  
խութիւն առաջ չի բերեց իրերի դրու-  
թեան մէջ, ու զեռ ընդհակառակը, խնա-  
միները քաջալերական բացականչութիւն-  
ներով մի ուրիշին հրաւիրեցին հրապա-  
րակ շարունակելու ինկնողի գործը։ Այ-

նուամենալնիւ միշտ կաշխատին, երկու  
կողմէն էլ, որ ալդ խաղը վերջանալ ա-  
ռանց արիւնահեղութեան։ Իսկ մեծաւ  
մասամբ կրվերջանայ մարտը աղջկայ կող-  
մի պարտութեամբ։

Հակառակ դէպքում, եթէ երկու կող-  
մըն էլ յամառութեամբ շարունակեն մըր-  
ցութիւնը՝ մնալով երկուսաხեք անպար-  
տելի՝ ալդ դէպքում փեսի հայրը կամ  
հօրեղբայրը առաջ կանցնի և կրգոչ։

— Պէ՞ս է, լօ (bessé, lo!) կամ պէննու  
լիա (bennou lia!), որ կրնշանակէ բաւէ!  
Ապա կրգազարի մենամարտը։

Սկզբունք առաջուլ-զուռնան էլ—ի մեծ  
ուրախութիւն քո անբաղդ ականջների—  
կրկտէ իւր ձայնը։ Փեսի հայրը աւելի  
առաջ անցնելով՝ կրխօսի։

— Էյ, տօսթի, քէյնէ էղեօ պոօշը  
մըն (éy, dosti, kèÿnè éteu broche men)—  
Այ խնամի, ժախիր ինձ աղջիկու։

Անմիշապէս առաջ կանցնի աղջկայ  
հայրն էլ և բոլոր հրապարակի կենդրո-

նում երկու խնամիները կսկսին մի զաւեշտական, ծիծաղաշարժ սակարկութիւն:

ա. Եթէ փեսան մինչև այդ ժամանակ վճարած է բոլոր պաշլըղը՝ այդ գեղըռւմ աղջկայ հայրը, որպէս զին իր աղջկայ, կրպահանջէ մի խիստ աննշան գումար, օրինակ. «տրզօլօթա» կամ 60 փարա կամ 12 կոպէկ:

Փեսի հայրը կրպարմանայ այդ «չլսւած, չեղած թանկութեան վրայ» և իր կողմէն կառաջարկէ 5 փարա—1 կոպէկ: Կրբարձրանայ ամբոխային ընդհանուր քըրից, կրլսւեն այս ու այն կողմէն բացականչութիւններ, երկարատե ծիծաղ...

Ի վերջոյ զաւեշտաբան սակարկողները կը հանգին մի եղբակացութեան և սակարկութիւնը կրվերջանայ:

բ. Եթէ փեսան դեռ չէ վճարած պաշլըղը կամ նրա մի որեւէ մասը, այդ սակարկութեան մէջ, որ կրտարւի էլի ծի-

ծաղաշարժ տոնով, հարսի հայրը կրպա-  
հանջէ իսկապէս խիստ բարձր զին, մինչեւ  
որ երկուստեղ զիջելով՝ հասնին փեսի  
պարտքի չափին, որ և կրվճարէ փեսի  
հայրը հէնց ալգտեղ:

Սակարկութեան հանուգէսը վերջանալէ  
յետոյ բոլոր հարսնեորները կրդիմեն աղ  
ջրկալ հօր տունը, ուր կրծնան մի քանի  
ժամ, երբեմն մինչեւ 2—3 օր և ալդքան  
ժամանակի ընթացքում կերուխում, խաղ  
ու պար, զանազան օյիններ ու սրախօ-  
սութիւններ կրծառայեն որպէս ուրախ  
ժամանց:

6. Հրաժեշտ և մի հին սովորութիւն.

Երբ հարսը հազնւած-զուգւած է, մոլ-  
լան կրծ սէլիտը կրծտնի կանանց մէջ և  
հարսը մէջտեղ կախնեցնելով՝ կասէ մօտա-  
ւորապէս հետեւալը.

— «Աստուծոյ հրամանով, մարգարէ-  
ների օրէնքով, ամուսնացուների ծնողաց

համաձայնութեամբ և հակատի անեղծանելի գրով մեր աղջիկն ալսուհետեւ պատկանելու է այսինչ խնամիի այնինչ որդուն»:

Ու կը կարդայ հարսի զլիսին մի երկար օրհնութիւն:

Ապա կանցնի աղամարդոց կողմբ և կը կը կնէ նոյնն ու կը վերջացնէ մօտառուապէս հետեւեալ բարեմաղթութիւնով.

— Խնամի, մեր աղջիկը գեղեցիկ է՝ քան ճէլրանը, անուշ է՝ քան մեղրը, աղնիւ է՝ քան աղաւնին, հեղ է ու խոնարհ՝ քան դառնուկը... ալդ թանկագին մալը, որ մեր աչքում հաւասար է աշխարհի արժէքին, մենք ծախեցինք քեզ, որ նադառնայ քո տան զարգերի ամենազլխաւորը և ամենասպատւականը... Հայդէ (օն), Աստուած բաղդաւոր մալ անէ, խէրը տեսնես ու բարի պտուղը վայելես... Ժողովուրդ, ասէք «ամէ՛ն»:

Բոլոր ժողովուրդը միաբերան կը գոչէ ու կը կը կնէ «ամի՛ն»։ Այնուհետեւ հաձ-

բուրելով փեսի և նրա հօր ու մօր կամ  
մերծաւորների ուսերը՝ ամենքը կըշնոր-  
հաւորեն զանազան բարեմաղթութիւննե-  
րով, որմէն յետոյ կընսափին «Հրաժեշտի  
ճաշկերոյթ» (Երխըլ կիթ շօրպասի կամ  
Երզըլ կիթ շօրպասը) կոչւող սեղաներ:

Փորերն ել կշտացնելէ յետոյ գուրս  
կուզան խնամու տնէն:

Երբ հարսը կընսաւեցնեն թախտրավա-  
նին մէջ՝ բոլոր հրացանակիրները միան-  
դամէն կարծակեն իրենց հրադէնները և  
այդ իսկ բոպէին փեսի հայրը մի քանի  
բուռ պղնձէ կամ արծթէ դրամներ կը-  
սրսկէ թախտրավանին վրայ: Աղքատ-  
ները կրհաւաքեն դրամները: Կարողու-  
թիւն չունեցողները դրամի փոխարէն  
կըսրսկեն չոր միրդ ու սիսեռ, որմէն յե-  
տոյ կըմեկնին հարսնեորները. բայց գու-  
պաշարւած ես մի նոր զգացմունքով, ո-  
րովինետև չեիր կարող կարծել, որ հայ-  
կական մի ամենահին սովորութիւն այդ-  
պիսի հարազատութեամբ պահպանել է

հայի արեան ծարաւի քրգերի մէջ... Մը-  
տարերի՛ր Արշակունի Արտաշէս արքալի  
հարսանիքը և Գողթան երգիչների երկու  
հրաշալի տողերը.

«Տեղ ոսկի տեղայը ի փեսայութեանն  
Արտաշիսի,  
Տեղայը մարդարիտ իհարսնութեանն  
Սաթինկան»:

Մինչդեռ այդ սովորութեան հետքերը  
մեղանում չ'կան...

7. Զոհաբերութիւն.

Վերագարձին նոյն աղմուկն ու կեն-  
դանութիւնը կըտիրէ հարսնեորների մէջ,  
մինչև որ կըհասնին փեսի տունը և վեր-  
ջընի ազգականներէն կընդունին մրգեղէն-  
ներ ու խալաթներ։ Երբ թախտրավանիր  
կըկանվնի փեսի տան դրան առջև՝ կ'ո-  
րոտան հազարաւոր հրազէնները, վերջին  
անգամը լինելով։ Այնուհետեւ կսկսի զո-  
հաբերութեան գործողութիւնը։ Թախ-  
տրավանին առջև կըզօհեն խոյեր, ա-

ըու հորթ, զանազան թոշումներ (նոյն-պէս արու), մինչև անդամ և եղ, գոմէշ, որոնցով կրկերակրւին թաղի կամ գիւղի աղքատները: Զոհաբերութենէն լետոյ հարսը կիշեցնեն թախտրավանէն և առօք-փառօք կրտանին ներս: Ստէպ, փեսի տան գունէն ներս մտցնելիս հարսի զլիսին կրկին կը սրսկեն դրամ և միրդ:

8. Առագաստը և նրա պահապանները.

Մինչ հարսնեորները կուտեն, կրխմեն, կրխաղան... անդին առաջաստը կրպատ-րաստւի հարսի հօրը (որպէս իր աղջկալ օժիար) նւիրած կահ-կարասիներով ու ղարդարանքներով, նոյնիսկ պղնձեղէն ամաններով ու կար ու ծեփ պարագա-ներով: Իսկ ամբոխի մէջ կը լսւի.

— Հարսն ու փեսան լոգնած են, հան-գրստութեան կարօտ են: Մի քանի ծերեր կրպատասխանեն.

— Հալդէ, հարսն ու փեսան թող առանձնանան մի քիչ:

Այդ ատեն նորագոյզը (հարսն ու փեսան) կրմանին առագաստ (Ճիպինլուխ—djibinloukh) ամբոխին թողնելով շարունակւող գւարճութեանց մէջ:

Փեսի հայրը, նորագոյզի առագաստ մտնելէն լետով, դրսէն կրկողպէ զուռը և կրնրամալէ ոտքէ գլուխ սպառագինւած երկու երիտասարդների, որ սուսերամերկ կանգնին առագաստի դրան երկու կողմը որպէս պահապան, որպէսզի՝

ա. Անպարկեշտ, հետաքրքրիր աչքեր չկարողանան որևէ ճեղքւածքէ զիտել ներսի անցուգարծը:

բ. Դրան մօտ դալմաղալներ, բարձր խօսակցութիւն (մանաւանդ առագաստի վերաբերմամբ), երդ ու պար և առհասարակ որևէ աղմուկ չ'լինի: Պահապաններն իրաւունք ունին նոյն իսկ սպանելու այն կանոնների դէմ զիտակցաբար գործողներին:

գ. Դաւագրութիւնն չիսարքւի հարսի կամ փեսի կեանքին դէմ: Կըպատահի, որ փե-

սի կամ հարսի անձնական թշնամիները  
խորամանկութեամք, որպէս հարսնեռոր-  
ներ, ներս մտած և ալդ մոմենտին սպա-  
սած կրլինին՝ «առագաստն հարամ անե-  
լու մաօք»:

Դ. Ճիները (գեերը) հակառակ են ա-  
ռագաստ մանողներին և բաց դուռ կր-  
լինտուեն ներս մտնելու և հարսին խրզդե-  
լու համար. պահապանների ներկայութիւ-  
նը կրսանձահարէ նոյնիսկ ժիներին:

9. Զուգաւորութիւն.

Շատ չ'անցած փեսի ձայնը կազդա-  
րարէ «պատւոյ պահապանների» (խօլէ  
ըրդան—kholè erzan) արծակումը. ալդ նր-  
շան է, որ աեղի է ունեցել անդրանիկ  
սեռական լարաբերութիւնը: Եւ կրբաց-  
ւին առագաստի դուռն ու պատուհան-  
ները: Նախ դուրս կուզայ փեսան, ապա  
կինը: Փեսան կրզիմէ դրան մօտ հաւաք-  
ւած ժողովրդին և ձեռքը կրծքին դընե-  
լով՝ կասէ մեկին շեշտերով.

— Ալլահ իշխն վաննան քի, ժընէ էմա քէյնէ պի (կերգւիմ յանուն Աստուծոյ, որ իմ կինը կոյս էր): Կամ.

— Խօսէ պըզանը ու տըպէժըմ քի ժըն էմըն թէմուղ գէջէ է (Աստուած գիտէ և ես կը վկայեմ (կըհաստատեմ), որ իմ կինը մաքուր կոյս աղջիկ էր):

Այդ աղջարարութենէն անմիջապէս յետոյ 1—2 պատւաւոր մարդիկ ծի կը-նստին և քառատրոփ կըսլանան դէպի հարսի հօր տունը, աւետիս տալու ամենքին, որ՝ Գէջէ էվան ոիէ սըրի պու (ծեր աղջիկը ճերմակերես է), կամ. «Քէլ-նէ էղի հալալ նան վօրտ ու» (ծեր աղ-ջիկը հալալ հաց է կերել:

### 10. Բերանբացէք.

Նախ քան կուսութեան և խախտա-ծութեան մասին խօսելը անհրաժեշտ կը-համարիմ երկու խօսք տսել բուն առա-գաստային կեանքի կամ «բերան բացէ-քի» մասին:

Երբ զոյգը կը մտնի առաջասահ փեսան  
կը հանւի և կը փորձէ պառկիլ իսկ հար-  
սր, առաջուց խրատւած իր մօրմէն, լուռ  
ու անտարբեր կուչ կուգայ մի անկիւն:  
Փեսան կառաջարկէ նրան 2—3 անգամ՝  
դալ-պառկիլ, սակայն մերժումն կսանալ:

Հարսր ամաչկոտ է, կը քաշւի, միթէ  
կարելի է օտար տղամարդուն մօտ պառ-  
կիլ, ինչ կասեն Աստուած և մարդիկ...  
Թէև այդ տղամարդը գնել է հարսին  
նրա հօրմէն, բայց առքը դեռ կատա-  
րեալ չէ. պէտք է զիա պավ էվի (հար-  
սի հօր փեսացուն. չպէտք է մոռանալ,  
որ մինչև այդ բոպէն հարսր դեռ ժըն,  
ժէօն—կին չի կոչւիր, այլ «աներոջ աղ-  
ջիկ», իսկ փեսան կը կոչւի աղջկայ կող-  
մէն «հօրս փեսացուն») կը կին գնէ իր  
հարսնացուն հինց իրմէն:

Ինքնավաճառման հետաքրքիր այդ  
մոմենտին փեսան, վերջին անգամը լինե-  
լով, կը խնդրէ հարսնացւէն.

— Կէլընէ պավ էմըն, որը, ուրիշ

լէ ժը մը' լա \*). կամ — Քէլնէ լէ խալ էմա,  
պէ, ռաքօ էթիա \*\*):

Հարսք իր որոշման մէջ անդրդւելի կր-  
մնայ — չի լանձնւիր օտար տղամարդուն  
— և միշտ խոյս կուտայ: Այդ հետաքըր-  
քիր սովորութիւննը (ինքնավաճառման  
ծեականութիւնները) հետզհետէ կարծէք  
տեղի կուտայ մի աւելի պարզ ձեփ, որ  
մեր գաւառաբարբառներում կրկոչւի՝ բե-  
րանբացէք, համաեսի պախշիշ, էոջի  
քիշերւայ պուատիկյ, բեյնի բանողչէք,  
էտի առջի առուտուր ևն:

Փեսան այս անգամ իւր հալոլ ամուս-  
նուն գնելու համար պէտք է նրան նւիրէ,  
անմիշապէս, մի որեւէ ոսկեղէն կամ ար-  
ծաթեղէն զարդ (մանեակ, ապարանջան,  
օղեր, մատանիք, վարսակալ ևն). եթէ  
այդ միջոցին չունի կամ աղքատ է՝ կր-  
խոստանայ որեւէ հազուստեղէն կամ դար-

\*) Իմ հօր հարս, եկ, ննջի՛ր ինձ հետ:

\*\*) Դուստրդ իմ աներով, եկ, ննջի՛ր այսաեղ:

գեղէն. խոստացւած իրը գնելու որոշ  
պայմանաժամ չի դրւիր, որովհետեւ փե-  
սան իւր խոստումը կատարելու համար  
կերպի իր և կնոջ արեւով:

Այդ սակարկութիւններէն յետոյ—հար-  
սր կրյածնւնի...

Այն ամեն դէպքերում, երբ. ա. աղջիկն  
օրինաւոր ճանապարհով է հարսնացած.  
բ. բռնի խլւած հօր տնէն. դ. գաղտնի  
փախցրած—առևանդած է. դ. անծնական  
կամ ցեղալին թշնամու ձեռքէն յափրշ-  
տակւած,—միշտ առազաստալին ձեւակա-  
նութիւնները միւնոյնն են:

11. Կուսութիւնը խախտած հարսը և նրա վիճակը.

Սրգէն շատ հազւագիւտ են այնպիսի  
դէպքեր, երբ քրդուհին դեռ չ'ամուսնա-  
ցած՝ կորցրած լինի իւր կուսութիւնը,  
իսկ եթէ երբէք հազարէն մէկ լինի էլ  
խախտած՝ փեսան իրեն թոյլ չի տար  
հրապարակ հանելու այդ «ոչ-մարդկալին»,  
«անբնական», «գազանալին», «էշիրի

պատւին սազ չեկող» ևն ևն եղելութիւնը։ Այդ դէպօւմ փեսան կըհամակւի վերին աստիճանի անզուսալ վրէժխրնդրութեան ծարաւով դէպի ամուսինը և եթէ ցեղակից չէ՝ նաև դէպի նրա ցեղակիցները, որով վերջ իվերջոյ տեղիք պիտի արւի արիւնահեղութեան։

Հարսի կուսութեան խախտւած լինելը հրապարակու կարտայալուի այն դէպքերում միայն, երբ հարսն առևանգւած է փեսի թշնամու աներոջ տնեն կամ յափշտակւած հարսնառի միջոցին հէնց թրշնամիէն։ Այդ դէպքում փեսան դուրս կուգայ առադաստէն լքւած, գլխիկոր, սաստիկ վրդովւած և կըներկայանայ հասարակութեան հետեւեալ խօսքերով.

Քանի որ Աստուծոյ հրամանով, մարգարէների օրէնքով, մարդոց խորհրդով ու իմ կամքով եղած ամուսնութենէն յետով ես այդ աղջկայ մօտ կուսութիւն չ'գտայ, — ահա ծեր ամենի ներկայութեանը կըխայտառակեմ այդ կնոջը, որ ինձձէն ա-

ու աջ ուրիշին է պատկանելիս եղել, կրկայտառակեմ և թալազս (ամուսնական կապ) արձակելու համար կընետեմ քարս:

Եւ առնելով 1—3 քար՝ կրշպրտէ հեռուն, կրթքէ այն կողմը և մեկին շեշտերով ու բարձր ձայնով կաւելացնէ.

— Խնչպէս որ այդ քարերն ինկան ինձմէ, նոյնպէս և այդ կինը արձակւած է ինձմէ, նա իմ կինը չէր և չէ:

Էլ այնուհետեւ Աստուած միան գիտէ գմբաղդ կնոջ քաշած անարդանքն ու չարչարանքները: Կրմերկացնեն նրան իւր հարսնութեան զարդերէն, ածուխով կրսւացնեն երեսը (կամ որեւէ սև ներկով), կրթքէն երեսին, նոյնիսկ նրա հետեկած «հարսնեղբայրներն» ու «հարսնքոյրերը» կանեն միևնույն բանը, կրհայնոյէն ու խիստ անպատիւ խօսքեր կրշպրտեն նրա, նրա հօրը, մօրը, ցեղակիցների և աղդականների հասցէին ևալն ևալն: Քրդական թաթի ապտակը, երկաթէ բռունցքի համն էլ կրտեսնէ խեղճ

կինը... իվերչոյ՝ ոտքերը բոպիկ, գլուխը  
մերկ, խալտառակւած ու աղտի մէջ կո-  
րած, երբեմն և արնաշաղախ—նա ստիպ-  
ւած է հեծնելու էշի վրայ՝ հակառակ  
դիրքով և էշի պոչը, որպէս սանձ, ձեռ-  
քին բռնած, աղծկող ամբոխի ուղեկցու-  
թեամբ, պիտի շրջի դիւղին մէջ...

Նրան տեսնողները կանիժեն «սատանի  
ծնունդը»:

Իլրումն ամենայնի, իրը վարակիչ ախա,  
կրվոնտւի հարսը փեսի տնէն և նրա լր-  
նակած դիւղէն...

Նա այնուհետև դատապարտւած է  
մշտնջենական անարդանքի և մինչև մահ  
պէտք է մնայ իր հօրը տանը, ուր նոյն-  
պէս չափէ դուրս կրզրէին նրամէն և կր-  
ծեծեն, կրտանջեն ու ամեն օր, ամեն բո-  
պէ կրյիշեցնեն իր մեղքը...

Մահը միայն կարող է փրկել զժբաղդ  
արարածին այդ անտանելի կացութենէն!

12. Անպարտ գոհեր.

Վերև նկատեցի ես, որ խախտածութեան դէպքերը շատ հազւագիւտ են. բայց նոյնիսկ այդ դէպքերէն ոմանք արդիւնք են անխիղն, անաստուած վրէժխրնդրութեան, որով անմեղ քրդուհին բարոյապէս կըմահանայ:

Քիւրդը կամենալով ամենածանր վրէժ լուծել իր թշնամիէն՝ կրնամարձակւի ալլպիսի եղանակով արատաւորել նրա պատիւր. նա կըգործէ այդ գաղանութիւնը—զարհուրելի՛ զրպարտութիւն, որով գիտակցաբար կրնահատակէ նա մի անմեղ կոյսի, յայտարարելով նրան խախտւած!

Եւ ոչ մի իրական միջոց չի գործադրուիր փեսալի ասածն ապացուցանելու կամ հերքելու համար:

Զեր հարցին, թէ ի՞նչպէս կարելի է առանց անհերքելի ապացուցների հաւատալ մի-միալն փեսի լոկ երկու խօսքին

ու կնոշը այդ դրութեան հասցնել, բիւր-  
դը կրպատասխանէ.

— Այդպիսիների համար գատավա-  
րութիւն չէ կարող լինել. բայց թէ փե-  
սի ասածն ուղիղ է՝ զրան պէտք է  
անպայման հաւատալ, որովհետեւ մի  
այդպիսի զրպարտութեամբ փեսան կը-  
շարժէ Ալահի բարկութիւնը թէ իր և  
թէ իրա տոհմին վրայ:

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Երես.

- Նախերգանք . . . . . 5  
Գլ.Ա.—Աշխարհագր սկան և Պատ-  
մական տեղեկութիւններ. — 1. Բնա-  
կութեան սահմանները և հայրենիքի  
դադափարը, 2. Քրդերի թիւը, 3.  
Քրդերի ծագումը, 4 Քրդերի դրա-  
ցիները և նրանց փոխագարձ յարա-  
բերութիւնները, 5. Բաժանումներ,  
6. Քրդերի ազգանունները և նրանց  
փոփոխութիւնները . . . . . 19  
Գլ. Բ.—Մարդարանական տեղե-  
կութիւններ. — 1. Մարմնի կազմը-  
ւածքը, 2. Ընդհանուր տեսութիւն... 66  
Գլ. Գ.—Քրդութնակարանը և նրա  
պարագաները. — 1. Մարապալարի  
բնակարանը, 2. Աղալարի ապարանքը,  
3. Խաշնարածների բնակարանը, 4.

Խաշնարածների ցեղապետների կամ Սուրուճիների վրանները, 5. Խաշ- նարածների հիւզեր, 6. Փոփոխու- թիւններ . . . . .	72
Գլ. Դ.—Քրդու հացը, օձադի շուր- ջը, լուսաւորութեան առարկաներ և ամաններ . . . . .	86
Գլ. Ե.—Երկրագործութիւն և Երկ- րագործական գործիքներ . . . .	112
Գլ. Զ.—Որսորդութիւն.—1. Թռչ- նորսութիւն, 2. Վայրենի կենդա- նեաց, 3. Զինորսութիւն . . . .	117
Գլ. Է.—Զգեստ և Զարդ.—1. Քիւրդ տղամարդու հագուստը, 2. Քրդուհու հագուստը, 3. Զարդեր և գեղեցկացուցիչ միջոցներ . . . .	127
Գլ. Ը.—Զէնքեր, Առասպելական դէնքեր և նրանց պարագաները.— 1. Ընդհանուր տեսութիւն, 2. Առ- փորական զէնքեր, 3. Առասպելական զէնքեր, 4. Զինագործները . . . .	140

Գլ. Թ.—Ուտելիք և Խմելիք.—1.

Քրդական կերակրներ, 2. Խմելիք... 177

Գլ. Ժ.—Հարսանիք.—1. Խաղիք-կուն, 2. Հարսնառ, 3. Առեանգումն և մերժումն, 4. Խալաթ և Տիտղոս, 5. Հարսի հօր տանը և վերջին դնումն հարսի, 6. Հրաժեշտ և մի Հին Սովորութիւն, 7. Զոհաբերութիւն, 8. Առագաստը և նրա պահապանները, 9. Զուգաւորութիւն, 10. Բերանբացէք, 11. Կուսութիւնը խախտած հարսը և նրա վիճակը, 12. Անպարտ զոհեր . . . 188













